

412.

Ինքնագիր

232

11,332

XVI, 98

29/11/38

~ A

0260

29/11/38

ԿԵՒՈՒՄԻՏ

232

Հարգելի Կարգի մասնակցաց ձեռքով  
Կարգի մասնակցաց

ՇԻՐՎԱՆՋԱԳԷ

18  $\frac{5}{II}$  85 թ

Միջև:

ԽՆԱՄԱՏԱՐ

891.542-3

Ը-66

ՎԵՊԻԿ

Մ. ՆՈՐԵՐԻՑ ՄԷԿԸ

ՊԱՏԿԵՐ

9706  
3006  
1001  
9-



ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ՍԻՒՆԵՑԻ

ՇԱԽՎՈՒՄԷՆ ԵՐԿՐՈՒՄԻՏ ԲԱԿՐՈՒԻ ԱՂԲԱՏ ԱՇԱԿԵՐՏԵՆԵՐԻ

ԹԻՖԼԻՉ

ՏՊԱՐԱՆ ԵՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ

ՕՐԱԿԵՆՆՆՆՐ ՓՈՂՈՑ, Ե 1/2

1885

3362

1884

891.542-3

С-66

1884

1884

1884

1884

1884

1884



232-2014

18231

2004

Дозволено цензурою. Тифлисъ, 31 Декабря 1884 г.

Ти пографія И. Мартиросіанца Орб. ул., д. № 1/2.



Թունիս սկիզբն էր: Բագուի նաւահան-  
 գոտի առաջնահարդ կաշարաններից մէկի վրայ  
 եռում էր ծովեզրեայ և արդիւնաբերական քաղաքին  
 չատուկ աշխատաւոր կեանքը: Եղանակը սաստիկ  
 շոք էր: Միջօրէի արեգակը պայծառ հորիզոնում  
 հպարտութեամբ կանգնած, իր աչքող ճառագայթ-  
 ները սփռել էր խաղաղ ծովի հայելանման մա-  
 կերեոցթի վրայ: Քամու նշուշ անդամ չ'կար: Օդը  
 պլպլում էր այնպէս ինչպէս, նա պլպլում է  
 թոնրի երեսում կրակի բոցի զօրութիւնից:  
 Երբեմն երբեմն այս կամ այն տեղում ծովի  
 հարթ մակերևոցը ստափւում էր ղէս ու  
 դէն լողացող փոքրիկ բեռնակիր և մարդակիր մա-  
 կոյկներէ թիբրէ հարուածներէց: Այդ ժամանակ  
 պարզ ջրի մեղմ ալիքները մի առանձին հրճուան-  
 քով խաղում էին արեգակի հետ, փշրելով նրա  
 լոյսը ընդաւոր գոհարափայլ ճառագայթների:  
 Մակոյկները անցնում էին և անջատված ջուրը  
 միանալով, ծովի մակերևոցը կրկին հարթվում էր:  
 Կաշարանը երեք կողմից ևս շրջապատված  
 էր բաղմաթիւ, փոքր թէ մեծ, շոքեմաւերով և  
 առագաստամուտերով: Եողեմաւերից մի քանիսը  
 վեքն էին զանազան տեսակ ապրանքներով և ըս-  
 պատում էին դատարկվելու կամ ճանապարհ ընկ-

95850509

ներու: Իսկ շատերը արդէն գատարելիւմ էին և պատրաստուիւմ էին նորից բարձրելու: Իրանք այն նաւերն էին, որոնք գլխաւորապէս պատոււմ են Բագուի և Հաշտարեանն մէջ, առաջինց կրելով զանազան նաւթային մթերքներ, իսկ վերջինից զէպի Բագու բերելով Ռուսաստանի ապրանքներ: Առագաստաւոր նաւերը իրանց խառնելճաղանճ առագաստներով, անթիւ, դէպի այն ու այն կողմեր ճիւղաւորված բարակ ու հաստ պարանոսներով, իրանց կեղտոտ տախտակամածներով և փայտապատ կեղևներով՝ վիթխարի, ամբաշէն և երկաթապատ հպարտ շոգեհաւերի մօտ, նմանում էին դիւղական խրճիթներին քաղաքի բարձրաշէն տներին դիմաց: Այդ հասարակ նաւերը ճանապարհորդում են Պարսկաստանի և Բագուի մէջ տեղ: Պողոտա Պարսկաստանի դրեթէ ամբողջ արդիւնաբերութիւնը, որը մեծ մասամբ մրդեղեններն է բաղկանում՝ տեղափոխվում է այդ աշխատաւոր նաւերով:

Աշխատանքը կաշարանի շուրջը, ծովի երեսում, եղերքն մօտ իր բոլորքման մէջ էր: Ահա մի կողմում նաւերից մինը բեռան ծանրութիւնից մինչև տաններկու, տաններեք Փուտաչափ խառւած ջրի մէջ՝ հանդարտութեամբ օրօրվում է այն կողմ այն կողմ: Ամրակալմ և աւտղադէմ թուրք նաւաստիները երկար անկարուրտով կօշկիներն մէջ, մտրթուց կարած կոլորակ և ծանր դգակները մաքուր սափրած գլուխներին անցկացրած՝ դուրս են կրում ապրանքներն ահագին հակերը: Արեգակի տաքութիւնից և աշխատանքի ծանրու-

թիւնից քրտինքը նրանց ծովային քամիներից այրված և սեւացած դէմքերից թափվում է այն առատութեամբ, ինչպէս բաղնիս ներսի պատերից թափվում են շոգու գոլորշիները: Ամեն անգամ, երկար պարանոսների միջոցով նաւի տրիւմից հակերը դուրս քաշելու ժամանակ, նրանց հաստ բրթեայ գօտիներով փաթալվում մէջքերը թեքվում են և ողնաշարերը դուրս ցցվում, բայց նրանց համար, կարծես թէ, այդ անդգալի էր: Այ կեղեք արեգակը, ոչ ծանր աշխատանքը նրանց դէմքերից չէ հեռացնում այն սովորական ուրախ և զուարթ ժպիտը, որը չատուկ է միայն նաւաստիներին, երբ սրանք գտնվում են չորութիւնում: Նաւաստիները երգում են, ծիծաղում են, կատակներ անում իրար հետ և ամեն անգամ հակը մըշակի մէջքին դնելու ժամանակ, մի մի աքացի ևս աւելացնում են ետևից, որ մշակը շուտ տեղ հասցին: Սակայն մշակը, որ ապրանքի հակերը նաւի տախտակամածից տեղափոխում է դէպի կաշարան, շատ դանդաղ է շարժում տեղից: Տանն, տաններկու պուդանոց բեռան ծանրութեան տակ նրա ճնկերը ծալվում են, կոկորդը դուրս է ցցվում, շինքը երկարանում է, բերանը ակամայ բացվում է և ամեն անգամ, իր բոլորի ոտերը փոխելու ժամանակ, մի անբոց է արձակում կրծքից: Երբեմն դժուարութեամբ և երկիւղով, որ մի գուցէ հակը մէջքից թաւալվի՝ նա իւր ոսկորացած ձեռքը տանում է ճակատին և դուրս սլծում քրտինքի խոշոր և կեղտոտ կաթիլները: Նաւի մի անկիւնում կանգնած է ապրանքի տէրը: Սա մի պար-



միայն արդիւնաբերական ծովեզրեայ քաղաքում կարելի է հանդիպել:

Կաշարանի ծայրում խռվում էր ամբոխի մե խոռոն քաղմութիւն: Ամենքը իրարու հրելով այս ու այն կողմ, աշխատում էին առաջ շարժել և որքան հնարատու է աւելի մօտենալ կաշարանի ծայրին: Բոլորն հայեացքները ուղղուած են ծովի հեռաւոր հորիզոնին, ուր հազիւ հազ նշմարվում է ծխի մի փոքրիկ խողովակ, որը հանդարտութեամբ բարձրանում է վեր կարծես թէ ջրի խորքից դուրս սրնթալով: Սա Հաշտարխանից եկող շողեհան է: Ամենքը անհամբերութեամբ սպասում են նրան կաշարանի վրայ: Մէկը եկել է գիմաւորելու. իր բարեկամին, միւսը՝ նամակներ ստանալու, երրորդը՝ լոկ իր հետաքրքրութեան բաւականութիւն տալու և այլն:

Ամենից առաջ կաշարանի ծայրում հաւաքված են մի խումբ հայ վաճառականներ թւով վեց հոգի: Չնայելով տեղի սղութեանը, սրանք կաշարանի վրայ բաւական ընդարձակ տեղ են բռնում: Ամբոխը կարծես թէ ճանաչելով այդ արտօնութիւնը՝ չի համարձակվում սեղմելու նրանց, այլ ընդհակառակը մի քանի քայլ հեռու է պահում իրան, թողնելով մէջ տեղ մի բաւական ընդարձակ տարածութիւն: Սրանք քաղաքի ամենահարուստ հայ նաւթաջին արդիւնաբերներն են, որոնք նոյնպէս սպասում են շոգեհանին: Իրարու դէմ շրջանաձև կանգնելով, նրանք մէջ տեղ գոյացնում են մի օղաձև տարածութիւն, ուր կարծես թէ դրած լինէր մի բան,

որը արգելում էր նրանց առաջ շարժվելու: Եւ չիրաւի կար մի արգելք, որը չէր թողն տալիս նրանց ծածկել այդ տարածութիւնը: Այդ նրանց տակառաձև փորերն էին, որոնք բոլորն էլ կարծես թէ մի կաղապարով ձուլված լինէին: Մի քանիսը երկու ձեռքերով չեփքից իրանց ձեռնափայտերն վրայ լինված և ոտները իրարուց հեռու դրած, այնպիսի մի դիրքում էին կանգնել, որ նրանց մարմինները, մի արշն դուրս ցցված փոքրիկ և կարճիկ ոտերի շնորհով, կանգնացրած տիկերի ձև էին ընդունել: Բոլորը հաղված էին հարուստ և եւրոպական եղանակով, բայց ոչ այնքան մաքուր: Մէկի շապիկ կրծքի վրայ երեւում էին գինու կաթիլներից մնացած մանիշակագոյն կոլորակ բեծեր: Նրանց ամենքի փորերն վրայ արեգակի ճառագայթների տակ պայղում էր փամացոյցի սպիւս շղթան:

Բացառութիւն էր կազմում իր մարմնի կազմուածքով միայն մի երիտասարդ: Սա բարձրահասակ, նիհար և դեղնած մի մարդ էր սև և նոսր միւրքով ու տափարակ կրծքով: Նայելով երիտասարդի դէմքին, կարելի էր ասել, որ նա գէթ երեսուն և հինգ կամ քսուսուս տարեկան է, բայց իսկապէս նրա տարիքը քսան և եօթից չէին անցնում: Անցեալի զեղխ և շուայլ կեանքը այդ դէմքի վրայ դրօշմել էր արդէն ծերութեան կնիքը: Նրա թուխ և լլար երեսի կաշին եփած խնձորի կճեպի պէս, մի քանի ծալք կուչկուչվել էին և հաւաքվել քնթի երկու կողմերում: Թերթերունքներից դուրկ աչքերի տակ նոյն-

պէս գոչացել էին մե քանի կապտադոցն կնճիռ-  
 ներ: Աչքերից վեր, երկու դժուար նշմարելի գծեր,  
 շնորհով գեռ պահպանվող մե քանի մազերի,  
 Հաղիւ Հաղ Համոզում էին թէ մե ժամանակ  
 այդ մարդը զուրկ չէ եղել չոնքերից, մարդկային  
 կերպարանքի այդ գեղեցիկ զարդից, առանց որ  
 մարդ կատարելապէս կապի է նմանում: Իսկ  
 նրա ամբողջ դէմքը արտայայտում էր խորին վա-  
 վաշտութիւն և նրա փոքրիկ սեւագոյն աչքերը  
 մէջ փաշտում էր գաղանաչին կիրքը: Նա Հագած  
 ունէր սպիտակ մետաքսեայ կտորից կարած ա-  
 մարաչին շորեր, որը աւելի մաքուր էր և աւելի  
 նուրբ ձևով էր կարված քան թէ նրա ընկերա-  
 կիցներինը: Գեղնագոյն չարդեա գլխարկի լաչն  
 ծալքը ծածկել էր նրա ճակատը, որը սիւնված էր  
 բազմաթիւ մանր ելունդներով: Մե նշան, որ Հե-  
 տեանք էր նրա անբարոյական կենցաղավարու-  
 թեան: Երեսասարդի ժելետի վրայ նոյնպէս  
 փաշտում էր մե ահագին ոսկեայ շղթայ: Իսկ շղթ-  
 թայից քար էր ընկած Հինդ կոպեկանոցի  
 չափ ոսկեայ մեդալիոնը, զարդարված բրկիանտի  
 մանրիկ քարերով: Նրա բարակ գեղնագոյն ձեռ-  
 նոցներից մէկը տակից, աջ ձեռնի միջամատի  
 վրայ, ցցված էր մատանու մեծ բրկեանդը: Ձեռ-  
 մակ առլատեայ փողպատի վրայ մեխված էր մե  
 մեծ ոսկեայ գնդատեղ նոյնպէս բրկիանդի քա-  
 րիկներով սիւնված: «Պետր Ստեփանիչ Գոլմա-  
 զով» — այդպէս էր փորագրված երկասասարդի ա-  
 նունը նրա ձեռնափայտի չորս մատնաչափ ու-  
 կեպատ կրթի վրայ:

II



ուժըր տաքացած խոտում էր ու վե-  
 ճաբանում Հանքերի, գործարանների, նաւթի և  
 ուրիշ այդպիսի Հետաքրքրի նիւթերի մասին: Մե  
 քանիսը խօսողներից այնքան զբաղված էին վեճա-  
 բանութիւնով և այնքան ոգևորվել էին, որ քիչ  
 էր մնում փոխէին իրանց կանգնած դիրքը և  
 քանդէին մէջտեղի օղաձև տարածութիւնը: Բայց  
 բարեբաղբաբար այդպէս չեղաւ: Վեճողներից  
 մէկը կամենալով Համոզել մե ինչ որ բանում իր  
 դէմ ու դէմ կանգնողին, մե փոքր առաջ շարժ-  
 վեց և Կրկուսի փորերը քիչ կուվեցին իտարու  
 Հետ: Մեաները այդ նկատելով և գուցէ զգալով,  
 որ այդ մե փոքր անչարմար բան է, զուրուչացան  
 և մեխվեցին իրանց տեղերում:

Խօսակցութեան չէր մատնակցում միայն ե-  
 րիտասարդը: Նա երեսը դարձրել էր դէպի ծովը  
 և Հեռադիտակով անդադար նայում էր եկող շո-  
 գենաւին, որը այդ ժամանակ այնչափ մօտացել  
 էր կայարանին, որ պարզ նշմարվում էին տախտա-  
 կամածի վրայ խմբված ճանապարհորդները:

— Պետր Ստեփանիչ, ինչո՞ւ ես այդպէս ան-  
 Համբեր մտիկ անում, երեւի մարդ եմ սպասում  
 — դիմեց երեսասարդին չանկարժ Հատտափորնի-  
 րեց մէկը, աջ ձեռը դնելով նրա ուսին, երբ խօ-

տակցութիւնը մի քանի վաչրկեան ընդհատութեց:

Պետր Ստեփանիչը չ'պատասխանեց: Նա խորատուզված շարունակ նայում էր դէպքի շրգե- նաւը:

— Պետր Ստեփանիչ, ախար քեզ Հեա եմ խօսում—կրկնեց Հեաաքքեր Հաստափորը, կանգ- նելով նրա դէմ ու դէմ և ձեռով ծածկելով Հե- ուադիտակի բերանը որպէս զի Պետր Ստեփանիչի ուշադրութիւնը իրան վրայ դարձնի:

— Հը՛մ—ստաց միայն Պետր Ստեփանիչը և Հեոադիտակը ազատելով նրա ձեռից, կրկին սկը- սեց նայել:

— Ումի՛ն ես սպասում, ասիւր տեսնեմ—չա- րունակեց Հաստափորը, այս անգամ Պետր Ստե- փանիչի ձեռից խլելով Հեոադիտակը և թազ- ցնելով իր մէջքում:

— Սպասում եմ:

— Ումի՛ն:

— Կարէ Մարկիչի ընտանիքին:

— Որտեղից:

— Հաշտարխանից:

— Ի՞նչ ասացիր, Կարէ Մարկիչ, ո՞վ է Կարէ Մարկիչը:

— Իմ կառավարիչը:

— Նեմեց է:

— Հայ է. Հաշտարխանից:

— Կարէ Մարկիչ—կրկնեց Սերգէյ Իվանիչը (այդպէս էր Հաստափորի անունը), այբերը չռե- լով և իր դէմքի վրայ խաղացնելով մի դարմա- ցական ժպիտ:

— Գասպարն է, պառաւը. ճանաչում ես լաո նրան:

— Գասպարը... Հը՛մ... եւ էլ կարծեցի այս Բ՛նչ Կարէ է—ստաց Սերգէյ Իվանիչը Հառայիկով կար- ծես թէ մի ծանրութիւնից ազատված: Ինչն է բերել տալիս Գասպարը իր ընտանիքին:

— Ես եմ ասել, պառաւը առանց կնոջ տըլս- րում է, ասացի մի լաւութիւն անեմ: Տներիցս մէկի մէջ նրա Համար մի լաւ բնակարան եմ նշանակել, թող ապրեն, քէ՛Ք քաշեն: Արժէ Կարէ Մարկիչը, նա շատ լաւ գործակատար է:

— Արժէ, արժէ, շատ ճշմարիտ մարդ է, դալըութիւն չըզխէ: Ես նրան լաւ եմ ճանաչում: Առաջ նա Հաշտարխանի մէջ ամենաառաջին վաճառականներից մէկն էր, բայց ընկերները խաբեցին, փողերը ձեռից խլեցին և չոր տարի վրայ թողին: Նրա ընտանիքին էլ եմ ճանաչում: Ռուսաստանից գալիս, ես Հաշտարխանում նրանց մօտ գնացի, ինձ սուրճով Հեւրասիերեցին: Մի լաւ տղայ ունի և մի լաւ աղջիկ: Նրանք էլ գալին են թէ ոչ:

— Գալիս են: Որդուն ես շատ եմ հաւանել, ուզում եմ Բալխանիի նաւթահորերից մէկի վրայ գործակատար նշանակել:

— Շատ լաւ կանես, շատ լաւ կանես, Պետր Ստեփանիչ, լաւ տղայ է, հօրը նման զոջադ է: Բայց ուրիշ բան է նրա աղջիկը, հրեշտակի գեղեցկութիւն ունի, սող Հաշտարխանի մէջ հա- տը չ'կա:

Ս. յը ասելով Սերգէյ Իվանիչը իր—իւզալի

աչքերի բերքը ուրոց և ատամների վերին շարքով ներքին պուշի ծայրը թեթևութեամբ կծեց, նայելով ուղղակի Պետր Ստեփանիչի կապկաչին աչքերի միջին: Պետր Ստեփանիչը նոյնպէս մեքանի վայրկեան նայեց նրա երեսին, բայց ոչինչ չխօսեց: Նա կրկին հեռագրեալը մտեցնելով աչքերին, սկսեց նայել շոգեխաւին:

— Առաջին անգամ, երբ ես նրան տեսայքի մնաց, որ խելքս կորցնէի— շարունակեց շատախօսել Սերգէյ Իվանիչը: Առացի, այ սրա նման կնիկ ունենաց մարդ, որ պարզերես կարողանայ հարարակութեան մէջ դուրս գալ: Ինչ ֆորտպիտեի վրայ ածել, ինչ խողալ, ինչ պար գալ, ինչ խօսել թէ հայերէն, թէ ռուսերէն. մի խօսքով ոսկի է սաւց մինչև դուրս: Այ նրա նման կնիկ ունենաս, հեռք տանիս Ռուսաստան և բաւորին զարմացնես նրա գեղեցկութիւնով: Բայց ախտոս որ հոյրը աղքատ է եթէ ոչ, Պետր Ստեփանիչ, քեզ համար շատ լաւ հարսնացու էր:

Պետր Ստեփանիչը հեռագրեալի տակեց ժպտաց և ոչինչ չ'պատասխանեց:

— Բաւական հասակաւոր աղջիկ է, բայց մինչև օրս ուղղ չ'կայ հօր աղքատութեան պատճառով: Անկրաւ Հաշտարխանում առանց պրիբանի ոչ մի տղայ աղջիկ չի վերցնում:

Պետր Ստեփանիչը հեռագրեալը հեռացրեց և սպիտակ ու մաքուր թաշկինակով աչքերը սրբելով, միայն արտասանեց «Հըմ» — կարծես թէ հարցնելով իւր խօսակցի միտքը:

— Ասում եմ մի մեծ ողորմութիւն կանես,

Պետր Ստեփանիչ, եթէ նրան այստեղ մի լաւ տղի վրայ պատկես— շարունակեց Սերգէյ Իվանիչը:

— Թող տեղ հասնեն, այնուհետև ամեն բան կ'ըրտալի— պատասխանեց Պետր Ստեփանիչը, հեռագրեալը գնելով պատեանի մէջ և մտցնելով աջ թևին փաթաթած վերարկուի գրքպարս: Ես էլ հէնց այս մտադրութիւնով եմ բերել տալիս նրան, ուղում եմ մի լաւութիւն անել Կարլ Յարկիչին: Նա հարուստ եղած ժամանակ իմ հօրս շատ է օգնել թէ փողով և թէ գործով: Իրան պաշտօն եմ տուել, որդուս էլ կ'տամ, ընտանիքին էլ բնակարան եմ տալիս, աղջկան էլ իմ հաշուով կ'պսակեմ... էլ ինչ ես ուղում:

— Ապրես, ապրես, Պետր Ստեփանիչ, իմ անքն վկայ շատ բարի տղայ ես: Այդպիսի լաւութիւն մեր ժամանակում եղբայրն էլ իր եղբոր չեանիլ, մեծ առատարտութիւն է: Բայց Գատպարը արժէ, նա շատ խեղճ և կորած մտւորված մարդ է: Այ նրա առաջվայ հարստութիւնը հն:

Այդ ատելով Սերգէյ Իվանիչը կրծքից արձակեց մի խորը հառաչանք, որի հետ միաժամանակ լսեց և կաշարանին մտեցող շոգեխաւի սուրոցի ձայնը:

Ամբողջ սկսեց տառաջ սեղմուել, շոգեխաւը շփվալով, շոգին կողքերից բաց թողնելով և խաւիսիններ շփմանը զննդացնելով զգուշութեամբ լողում էր դէպի կաշարանի ծայրը: Պետր Ստեփանիչը մոռացաւ իր խօսակցին, գեմեց տառաջ և իւր որսող հաշեացքը մեխեց շոգեխաւի քաւիտակամածի վրայ:

232-2014  
1001  
3076



Վերջապէս շոգեհաւը բոլորովին կպաւ կաշարանին և առջևի կարճ խորիստը կաշծակի արագութեամբ աղմուկով գլուխը դէպի ջուրը և թաղվեց ծովի աւազույցին շատակի մէջ: Եկաւորները խովեցին, աշխատելով իրարուց առաջ ոտ դնել կաշարանին:

Պետր Ստեփանիչը գլխարկը վերցրեց և քաղաքավարութեամբ բարեկեց եկաւորների մի փոքրիկ խմբին, որը բաղկացած էր երեք հոգուց: Սրանցից մէկը մի միջնահասակ և մօտ քառասուն ու հինգ տարեկան նիհար կին էր եւրոպական հագստում և գլուխը սև շալով փաթած: Միւսը՝ մօտ քսան և երեք տարեկան մի երիտասարդ էր բարձր հասակով, նորաբոյս սև մերուքով ծնտի ծաչրում, բուսական համակրելի դէմքով, բայց և բաւական մեծ քնթով: Իսկ երրորդը մի օրիորդ էր սպիտակ ամառային դգեօտում, որը կարուած էր հասարակ չիժից, և չարդեայ գեղին գլխարկում: Գլխարկը շրջապատած էր սպիտակ մետաքսեայ կտորով, որից երկու լայն ժապաւէններ բարձր ընկած, հասնում էին մինչև ուսերը:

Օրիորդը կ'ընէր մօտաւորապէս քսան և հինգ տարեկան: Նա բարձրահասակ էր, բայց այդ մեղմեմանց աչքի չէր ընկնում և այդ նրբանց էր, որ օրիորդի մարմնի բոլոր մասերի մէջ տիրում էր մի դարձանալի ներդաշնակութիւն: Աջնպէս համահասար և խնայողաբար էր դասաւորված օրիորդի կազմուածքը, մի այնպիսի կանոնաւորութիւն էր բուրում այդ կազմուածքից, որ չկար

ոչինչ աւելորդութիւն և ոչինչ պակասութիւն: Նա չէր պատկանում այն գեղեցիկահիների շարքին, որոնք մեզ հիացնում են իրանց կերպարանքի մեկ կամ մի քանի մասերի աչքի զարնող գեղեցիկութիւնով, որոնք շատ անգամ քողարկում են մեր առաջ ուրիշ տգեղութիւնները: Ո՛չ, այդ օրիորդի գեղեցիկութիւնը համեատ և խելացի էր, կանոնաւոր և ներդաշնակ էր:

Պետր Ստեփանիչը Սերգէյ Իվանիչի ուղեկցութեամբ դիմաւորեց նրանց: Երկուսը ևս հերթով նորեկներին բարեւելուց չետոյ, ամեն մէկը սրանցից առաւ մի մի կտոր ճանապարհային իրեզնեններից որպէս զի թեթևացնեն նորեկներին բեռը:

— Բոս ինչտեղ է Կարլ Մարկիչը—հարցրեց պառաւ կինը:

— Գործաւանումն է, շատով կ'գաջ, ես ցոյց կ'տամ ընտկարանը, կառքս սպասում է ձեզ, շատ գինանք—պատասխանեց Պետր Ստեփանիչը քաղաքավարութեամբ, մի կրքոտ հայեացք օճրգելով օրիորդի վրայ: Սերգէյ Իվանիչը արմուկով բռնեց նրան և զգուշութեամբ շնչաց նրա ականջում. «լուսնեակ է, մուշտարու աչքով մտիկ արա՛»:

— Կատերինա Կարլովնա, շնտ է նեղացրել ձեզ ծովը—դիմեց օրիորդին Պետր Ստեփանիչը:

— Օխ, օխ, էլ մի հարցնիր ցաւդ առնեմ, մեր սուրները փչոտել է—պատասխանեց, իր աղջկայ փոխարէն, մայրը:

— Մամա ինչ էս ատում, ինձ չէ նեղացրել

ծովը, նա շատ խաղաղ էր— Հահառակեց Կատե-  
րինա Կարլովնան բռնելով իւր եղբոր թեկը:

— Ինչքան ինչպէս էք Արտեմ Կարլիչ քաղա-  
քավարութեան Համար Հարցրեց Պետր Ստեփանի-  
նիչը և երիտասարդին:

— Ինչ Համար շատ ուրախ անցաւ ժամա-  
նակը— պատասխանեց Արտեմ Կարլիչը Համեա-  
տութեամբ, գլուխը թեքելով դէպի կուրծքը:

Այգպէս խօսելով վերջապէս նրանք Հասան  
փողոց, ուր Պետր Ստեփանիչի շքեղ կառքը երկու  
առուչք ձիերով լծված սպառուճ էր նրանց: Պետր  
Ստեփանիչը օգնեց օրիորդին և մօրը նստել կառք:  
Իսկ ինքը Արտեմ Կարլիչի Հետ տեղաւարդելով  
նրանց գէմ, Հրամայեց կառապանին առաջ շար-  
ժել: Մի րոպէս արագնաբաց ձիերը կառքը սը-  
լացրին դէպի ծովեզրեայ ընդարձակ փողոցը ծայրը  
և նա անհետացաւ թանձր փոշու մէջ: Սերգէյ  
Իվանիչը մնաց նրանց ետեկց նայելով:

— Շառւատան, մաշկնիկ Գօլմագով, ես քո  
միտքը Հասկացայ— արտասանեց վերջինը, նայելով  
կառքի ետեկց: Յետոյ գլուխը խորհրդաւոր կեր-  
պով շարժելով նա կրկին վերագործաւ դէպի շո-  
գենաւը:

III



առքը կանգնեց քաղաքի լայն Փողոց-  
ներից մէկի վրայ գտնուող մի երկչարկանի նորա-  
շէն տան առաջ: Իւրաշարժ Պետր Ստեփանիչը  
արագապէս ցած թռաւ կառքից և օգնեց նոյն-  
պէս ցած իջնելու Կատերինա Կարլովնային և նրա  
մօրը: Նա առաջնորդելով տարաւ նրանց ներս և  
ցոյց տուաւ բակի ներսի շինութեան ներքին չար-  
կուճ մի բնակարան, որը բաղկացած էր երեք  
սենեակներից:

— Այ, սա եմ պատրաստել տուել ձեզ Հա-  
մար Բաւակմն եմ ձեզ, Մարիա Իվանովնա, երեք  
սենեակներ թէ ոչ— Հարցրեց Պետր Ստեփանիչը  
պառաւելց, բայց միևնոյն ժամանակ նայելով  
աղջկայ երեսին:

— Յաւա առնեմ, ինչ կանենք երեքք, չորս  
Հոգու Համար երկուսն էլ բաւական էք— պա-  
տասխանեց Մարիա Իվանովնան թէ և ինքը շատ  
ուրախ էր բնակարանի այդքան ընդարձակ լինե-  
լուն:

— Կարլ Մարիիչը գլշեքները դործարանումն  
է լինում: Արտեմ Կարլիչին էլ նշանակել եմ կա-  
ռավարիչ Բալախանի, ուրեմն քաղաքում մնալու

էք դուք և Կատերինա Կարլովնան և ոչ թէ չորս  
Հոգի: Բայց վնաս չունի, թող ձեր տեղը լաջն  
լինի, ևս խօսմ վարձով չեմ տալիս: Տուներ իմն է,  
ինչպէս ուզում եմ, այնպէս եմ անում:

— Ցաւդ առնեմ, շատ ապրես, բայց Պետր  
Ստեփանիչ, Արտեմիս Համար քաղաքի մէջ տեղ  
տաք լաւ կ'լինի: Առանց նրան սիրտս կ'նեղանայ:

— Հեշտ բան է, թող մի քիչ այնտեղի գոր-  
ծերի Հետ ծանօթանայ, չետոյ էս նրան քաղա-  
քում մի լաւ պաշտօն կ'տամ:

— Չէ, մամա Բալախանին լաւ է, ասում են  
այնտեղ դարձանալի բաներ կան — մէջ մտաւ ինքը  
Արտեմ Կարլիչը իր սեպհական անձնաւորութիւնով:

— Ի Հարկէ ինչոր կալ այնտեղ է, ողն էլ  
առողջարար է քան թէ այտտեղ քաղաքում, ուր  
մենք փոշու և ծուխի մէջ խեղդւում ենք:

— Ինչպէս որ ձեր քիժնէ այնպէս արէք,  
մենք էլ ձերն ենք Պետր Ստեփանիչ — ասաց Մա-  
րիա Իվանովնան և սկսեց նայել սենեակներին:

Քառորդ ժամ նորեկները Պետր Ստեփանիչի  
Հետ միտսին պատեցին սենեակները, չետոյ խո-  
հանոցը, ուշադրութեամբ զննելով իրանց նոր  
բնակարանը:

— Այ մամա, սա իմ սենեակը կ'լինի — խօ-  
սում էր օրիորդը կանգնելով սենեակներից մէ-  
կում: Նա այս պատահանի տակ կը զննեմ իմ  
դաշնամուրը: Իսկ դու և պապան միւս սենեա-  
կում կապրեք, այն կողմինն էլ Արտեմի Համար  
կ'սարքենք:

Իսկ օրիորդ ժամանակ Պետր Ստեփանիչը իր հայ-

եացքը չէր Հեռացնում Կատերինա Կարլովնայից:  
Նա չափշտակված էր օրիորդի երանի նուրբ կազ-  
մվածքով, պարզ և Հրապուրիչ դէմքով, փայլուն  
աչքերով, նաղելի շարժվածքով: Ամեն անգամ  
օրիորդը խօսելիս, նա աչքերը չառում էր նրա  
երեսին և ադահութեամբ նայում: Այդ ժամանակ  
նրա ամբողջ մարմնով կարծես թէ անցնում էր  
մի էլէքտրական ցնցում և նրա փոքրիկ կապիւ-  
նման աչքերի մէջ փայլում էր կենդանական  
կերքը իր բոլոր ոյժով: Նա անդադար աչքերը կուչ  
բերելով քաղցրութեամբ ժպտում էր օրիորդի ե-  
րեսին և այդ ժամանակ նրա դէմքը մի ինչ որ  
անակործ, մի ինչ որ զգլիւլի, վավաշտ արտաշայ-  
տութիւն էր ստանում: Օրիորդը կարծես թէ այդ  
չէր նկատում և անտարբերութեամբ խօսում էր  
նրա Հետ: Սակայն երբ մի անգամ Պետր Ստե-  
փանիչը շարունակ նայեց նրա երեսին և բոլորու-  
վին անտեղի և անժամանակ ժպտաց՝ նա գլուխը  
թեքեց դէպի կտրծքը և նրա դէմքը թեթեւ-  
թեամբ կարմրեց:

Վերջապէս բնակարանի բոլոր բունջ ու բու-  
ջախը Հետաքրքրութեամբ նայելուց չետոյ՝ Մա-  
րիա Իվանովնան դիմեց իր որդուն.

— Վազիր Արտեմ և շուտով մեր ապրանքը,  
ինչ որ ունինք, հաւաքի բեր շոգեհաւից:

— Իսկ դուք Կատերինա Կարլովնայի Հետ  
գնանք ինձ մօտ Ճաշելու — մէջ մտաւ Պետր  
Ստեփանիչը:

Մարիա Իվանովնան Համաձայնեց և Գու-  
մագովը իր տան հասցէն տալով Արտեմ Կարլիչին

և նրանց հետ միասին կառք նստելով, շտապեց  
ատեն:

Իրիկնազէմ էր երբ նորիկները ճաշելուց  
չետոյ կրկին վերադարձան իրանց բնակարանը:  
Արամ Կարլիչը բոլոր իրեղէնները արդէն բերել  
էր: Նրանք սկսեցին կարգի բերել իրանց բնակա-  
րանը: Մարիա Իվանովնան իր սրբուց հետ պատ-  
րաստում էր վերջինի սենեակը, իսկ Կատերինա  
Կարլովնան նոյնպէս պատրաստում էր իր սենե-  
կակը Պետր Ստեփանիչի օգնութեամբ: Չնայելով  
օրիորդի թախանձանքին, որ նա նեղութիւն չի  
կրի աշխատելու և զնա հանդատանալու, աջուս-  
մենայնիւ Պետր Ստեփանիչը քաջ սնկամ չէր  
ուզում հեռանալ օրիորդից և ստի-ձեռքի ընկած  
մեծ պատրաստականութեամբ օգնում էր նրան:  
Հետզհետէ Կատերինա Կարլովնան սկսեց ձանձ-  
րանալ նրա օգնութիւնով: Պետր Ստեփանիչը  
այնքան չէր օգնում, որքան իր ծանր ու խորը  
հաշեացքներով և անսեղի բաղբրախօսութիւնով  
ձանձրացնում էր օրիորդին:

Սկզբում Կատերինա Կարլովնան այդ հաշ-  
եացքները և բաղբրախօսութիւնը ընդունում էր  
իբրև տարրական քաղաքավարութեան մի ար-  
տաչաչտութիւն երկտատարիկ կողմից դէպի մի  
ծանօթ օրիորդ: Բայց հետզհետէ երբ Պետր Ստե-  
փանիչը սկսեց անցնել սովորական քաղաքավա-  
րութեան սահմանը, այդ բոպէից օրիորդի սրտում  
ծագեց մի ինչ որ կասկած: Պետր Ստեփանիչի  
նեղակալութիւնը սկսեց նրան ճնշել և նա աշխա-  
տում էր խոյս տալ նրա հաշեացքներից: Բայց

Պետր Ստեփանիչը օրիորդի վրայ ունեցած իր ա-  
նախորժ ասպարսութիւնը չ'զգալով կամ չ'կամե-  
նալով զգալ՝ չամառութեամբ շարունակում էր  
ճոմոռոտել իր սրկված դէմքը: Նրա հակակրկի  
շրթունքների վրա խողումք այն զգուելի ժպիտը,  
որը յատուկ է իրանց գազանային կրքերին ստ-  
բուկ արարածներին:

Պատահեց մի դէպք, որը որքան փոքրիկ և  
աննշան լինէր այսու ամենայնիւ մեծագամից օ-  
րիորդին հաւատացրեց թէ Պետր Ստեփանիչի  
զգացմունքները կասկածաւոր են և ինչպէս երե-  
ւում է նրա սիրտը շատ էլ մաքուր չէ: Կատե-  
րինա Կարլովնան իր հագուստեղէնները տեղա-  
ւորում էր պահարանի մէջ: Նրա մայրը և եղ-  
բայրը միւս սենեակումն էին. Պետր Ստեփանիչը  
կանգնած ետեւից մտիկ էր անում օրիորդին: Նրբ  
օրիորդը վերջացնելով գործը, կամենում էր կողպել  
պահարանը, նա բանալին մի բանի անգամ շու-  
տուտ, բայց չ'կարողացաւ կողպել: Պետր Ստե-  
փանիչի սուր հաշեացքը իսկույն այդ նկատեց և  
նա շտապով մօտեցաւ օրիորդին:

— Թոյլ տուէք, որ ես կողպեմ, Կատերինա  
Կարլովնա, ձեզ ոչժ չունիք, ախտոս է, ձեր սի-  
րուն և գեղեցիկ մատերը կցաւին:

— Ոչ, ինչպէս նեղութիւն չի բաշել, այդ  
պահարանը բացի ինձանից ոչ ոք չի կարողանում  
կողպել և բացել:

— Եւ կարող եմ, այն տեսնում էք ձեր ձեռ-  
քերը ինչպէս կարմրեցին: Սիրտս ցաւումէ այդ  
տեսնելով:

Այդ ասելով Պետր Ստեփանիչը իր ձախ ձեռնով խլից օրիորդի ձեռք բանալիկից, իսկ այդ ձեռնով սկսեց պտտացնել բանալին միևնույն ժամանակ միևս ձեռում սեղմած պահելով օրիորդինը: Օրիորդը աշխատեց զգուշութեամբ ազատել իր ձեռքը, բայց չը չաջողվեց: Պետր Ստեփանիչը նրան շատ ամուր էր սեղմած: Օրիորդը չըզուհէր թէ ինչ անէր: Նա մի անգամ ևս փորձեց դուրս բերել ձեռք նրա ձեռից, բայց չ'հաջողանալով սկսեց դողալ: Պետր Ստեփանիչի մէջ եռացին վավաշտութեան զգացմունքները: Նա նոյնպէս դողում էր, բայց ոչ թէ երկիւղից և ամօթից, ինչպէս Կատերինա Կարլովնան, այլ գազանային բուռն կրքերի հրոսանքից: Ընդունելով օրիորդի լուսթիւնը հալած իւրի տեղ, և շարունակելով բանալին ուրբել կողպէքի մէջ, նա իր շրթունքները զգուշութեամբ մօտեցրաւ օրիորդի երեսին և կամենում էր...: Բայց օրիորդը խոյն հասկացաւ նրա մետքը: Նա դուրս խլից միանգամից իր ձեռք և մի թեթեւ ճիչ արձակելով մի ստուսմով հեռու փախաւ Պետր Ստեփանիչից:

ձեքը որքան որ թօշլ լինէր, բայց նրա ձայնը հասաւ միւս սենեակ, Մարիա Իվանովնայի ապականներին:

— Ի՞նչ պտտահից Կատեա—ներս թռաւ վախեցած մայրը և ձեռքերը առաջ տարածելով զիմեց աղջկանը:

Օրիորդը չ'կարողացաւ պտտասխանել:

— Ոչէ՛նչ, Կատերինա Կարլովնայի ձեռք բանալին քիչ ցաւացրեց—հնարեց իսկոյն խորամանկ

Պետր Ստեփանիչը, կտրելով Մարիա Իվանովնայի առաջը, որպէս զի սրա հայեացքը չ'ընկնէ օրիորդի սպրդնած երեսին:

Մնչև Մարիա Իվանովնայի բերան բացելը, գնդակի նման ներս գլորվեց մի լղար, կարճահասակ մարդ ձերմակ մագերով:

— Պապա, պապա—դուքեց Կատերինա Կարլովնան և թռչելով առաջ ընկաւ իր հօր գերկը:

*[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]*

*[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]*

IV



Երևա վաղորդ Կարլ Մարկիչ Պոպովն էր, Կատերինայի Հայրը: Մե քանի ըսպէ Հայր և աղջիկ իրարու գրկած Համբուրվում էին: Աերջուպէս Կարլ Մարկիչը աղատեց աղջկան իր գրկից նոյն կարօտութեամբ ընկաւ որդու, Արտեմ Կարլիչի գրկը և մե քանի Համբուրներ գորշմեց նրա ճակտին: Յետոյ բարևեց ամուսնուն, միանգամ միայն Համբուրելով նրա շրթունքները: Պետր Ստեփանիչը ինչ և իցէ օտար էր և Համեստութիւնը Կարլ Մարկիչին ստիպեց չսփարել իր ամուսնական զգացմունքները:

—Նս պարտաւոր եմ Հաղար անգամ շնորհակալութիւն յայտնել ձեզ սեմեջտալօջիս խաթրու—դարձաւ Կարլ Մարկիչը Պետր Ստեփանիչին, որը մե կողմ քաշված նայում էր այդ ընտանեկան տեսարանին: Կարլ Մարկիչը քիչ մօտեցաւ նրան, ձեռքերը քարշ ձգեց կրկնբերին, ոտերը կպցրեց իրարու և մէջքից երկու ծալ դաթվելով երկտասարգական աշխուժութեամբ մե քանի անգամ գլուխ տուաւ նրան:

—Չարժէ, չարժէ—պատասխանեց անտարբերութեամբ Պետր Ստեփանիչը, իր Հայցեացքը

չ'Հեռացնելով Կատերինա Կարլովնայից, որը այդ ժամանակ մե ինչ որ բանի մասին խօսում էր իր եղբոր Հետ:

—Մարիա, Կատեա, Արտեմ մօտացէք շնորհակալութիւն արեք Պետր Ստեփանիչին կնդուր որ նա է ըստպօրեաժենիէ արել ձեզ Բագու բերելու:

Կարլ Մարկիչը ընտանիքը սեղմեց Պետր Ստեփանիչի ձեռը: Գա առաջին շնորհակալական նշանն էր, որ ստացաւ բարեխերտ խնամատարը երախտագէտ ընտանիքից:

—Տեսնում ես, Մարիա, ինչ աղավարի կվարթիրա է—շարունակեց Կարլ Մարկիչը պտոյտ գալով Պետր Ստեփանիչի առաջ: Նս Պետր Ստեփանիչից շատ շնորհակալ եմ, շնտ. իմ պարտքս է ստարաշտեցա իլիլ նրան չեմնօ, բլաղօրօզնօ ծառայելու կնդուր որ նրա պէս խօզեային ես գրանիցայումն էլ չեմ կարող գանել:

Կարլ Մարկիչը խօսելու ժամանակ ձեռքերով, գլխով և ուսերով այնպիսի շարժումներ էր անում, որ կարծես թէ քսան և Հինգ տարեկան երկտասարգ լինէր այն ինչ նա մօտ վաթսուն տարեկան էր:

Պետր Ստեփանիչը ուշադրութիւն չէր դարձնում իր կառավարի շատախօտութեան վրայ: Նա խօրատուղված էր մե ինչոր մտածողութեան մէջ: Սակայն այդ երկար չ'տեկեց և նա չ'անկարծ, կարծես թէ քնից սթափվելով, դիմեց Կարլ Մարկիչին:

—Գործարանը այսօր բանել է:

— Ի՛նչպէս չէ, ինչպէս չէ, աղաջան:

— Ո՛վ կոչ աչնտեղ աշխմ:

— Ամենքը աչնտեղ են: Ես աղաջան դաւողը պօրութիւնտ արե գլավնիչ պոկերպչեկին մինչև է-գուց առաւօտը:

— Հը՛մ, — արտասանեց միայն Պետր Ստեփանիչը, կրկին մտածողութեան մէջ ընկնելով և բեղերը կոծոտելով: Կարէ Մարկիչը քիչ վախեցաւ:

— Բեղպօղոջիտցա մե լինէք աղաջան, ամեն ինչ պօրեադկայով կ'գնաչ:

— Առաւօտեան չուտով գնացէք, որ գործարանը չի գադարի, եթէ ոչ գիտէք, որ մե օրվաչ դադարելը ինձ կ'ըրկէ Հաղար մանէթ աշխատանքից — ասաց Պետր Ստեփանիչը քիչ հրամայական եզրանակով, աշխատելով իր դէմքին լըջութիւն տալ:

— Այտք է տաճ, որ Պետր Ստեփանիչը մե քիչ սուտ ասաց: Գործարանը առանց Կարլ Մարկիչի ևս կարող էր վաղը դործել և եթէ դողաբէր էլ, մե օրուաչ վնասը երբէք Հաղար մանէթ չէր կարող լինել: Բայց նա աչդ ասաց առաջին նրա համար, որ Կարլ Մարկիչի վրաչ ունեցած իր իշխանութիւնը ցոյց տաչ նրա ընտանիքին և երկրորդ՝ մե օրուաչ վնասը քոսն անդամ աւել ցոյց տալով իր հարուստութիւնով մե փոշե փչե աչդ ընտանիքի աչքերին: Աչդ պարզ էր, ըստ որում իր հրամանը կրկին լուց չետոչ, նա մե առանձին ինքնաբաւականութեամբ նաչեց բոլորին հերթով, որ տեսնի թէ ինչ ազդեցութիւն արին իր խօսքերը լսողները վրաչ, իսկ նամանաւանդ Կատերի-

նա Կարլովնաչի վրաչ: Եւ չիրաւե նա մասամբ չը սխալվից:

Լսելով նրա խօսքերը, Մարիա Խվանովնան աչնպէս դարմացաւ, որ աչքերը ճլզեց և բերանը բացեց: «Օրական Հաղար մանէթ փող է աշխատում, երանի նրան, որ քեզ փեսաչ կունենաչ» — անցաւ խոհոյն նրա մտքով և նա գլուխը թեքեց կրծքին, ձեռքերը խաչաձև ծաղեց ծոցում և ըսկոնց ազահութեամբ նաչել Պետր Ստեփանիչին: Պակաս չզարմացաւ և Արտեմ Կարլիչը: «Օրական Հաղար մանէթով կարելի է թագաւորի պէս տալել արտասահմանում, աչն էլ Փարկիչ մէջ տեղում. անմախը ինչու է աչտեղ քամու ու փոշու մէջ խեղդվում — աչդպէս մտածեց նա և սկսեց նաչնպէս նաչել Պետր Ստեփանիչին երեսին:

Միայն Կատերինա Կարլովնան էր, որը վրաչ կարծես թէ ոչինչ ազդեցութիւն չ'արին Պետր Ստեփանիչի վրոված խօսքերը: Նա երեսը շուտաւ և անցաւ միւս սենեակը:

— Առտօտեան խօրօզը կանչելիս ես դաւատում կ'լինեմ, աղաջան, ես չեմ թողնի, որ ձեզ ուբխակա լինի — մեամտացրեց Կարլ Մարկիչը Պետր Ստեփանիչին:

Կատերինա Կարլովնան միւս սենեակ անցնելուց չետոչ Պետր Ստեփանիչի դէմքը աւելի փոխվեց: Սովորական ուբախ և կեղծ ժպիտը նրա դէմքից անհետացաւ: Նա կնճռեց ճակատը և առանց աչն ևս քացախած երեսը թթուացրեց:

— Նստեցէք, պօժօլտա, Պետր Ստեփանիչ, աչսօր շատ էք նեղացել — առաջարկեց Կարլ Մար-

կէջը վերին աստիճանի խոնարհութեամբ և երկրորդ, մօտացնելով աթոռներէց մէկը և ստերը սենեակի չատակին քսքսելով:

— Այ, ես գնում եմ, դուք կարգի դցեցէք բնակարանը, ես վաղը դարձեալ կ'գամ: Թո՛ղ Արտեմը առաւօտեան ինձ մօտ գաց, որ ճանապարհէմ Բալախանի. իսկ դուք Վալ Մարկիչ շուտ կը դարձնէք և կ'գնաք գործարան:

— Նըպրեմեննօ, նըպրեմեննօ, ինչ ասել կուզի, աղաջան, բառ չաչ անուշ չէք անում: Կատեա, Պետր Ստեփանիչի Համար չաչ դաւարեցաւ արն բեր:

— ԵնորՀակալ եմ, ես գործ ունիմ գնում եմ մնաք բարեա:

Պետր Ստեփանիչը ձեռ տուաւ միայն Մարիա Խլամսովնային. իսկ Կարլ Մարկիչին և նրա որդուն միայն թեթև գլուխ տուաւ:

— Յ'տեսութիւն Կատերինա Կարլովնա — ասաց նա մօտենալով միւս սենեակի դռներին և աչք տեղից ձեռք ուղղելով օրինորդին:

— Ինչքա քարեա — սառնութեամբ պատասխանեց վերջինը իր մատերէ ծաչրերը տալով նրան: Պետր Ստեփանիչը դգաց աչք սառնութիւնը: Նկատեց նոյնպէս և Կարլ Մարկիչը, նըկատեց և մի խոշոր շանդիմանողական Հաչեացք ձգեց իր աղջկաչ վրայ:

Վերջապէս Պետր Ստեփանիչը Կարլ Մարկիչի ուղեկցութեամբ դուրս եկաւ փողոց և հեռացաւ, վրդոված առաջին անշաջողութիւնից: Կատերինա Կարլովնան վերաւորել էր նրա սահ-

մանափակ ինքնասիրութիւնը: Աչք նա զգում էր և չէր կարող անտարբերութեամբ տանել: Նրա Համար դժուար էր մարտել օրնորդի կուպիտ վարմունքը, նա մանաւանդ աչն օրնորդի, որն Հայրը իր ամբողջ ընտանիքի վիճակով բողբոլիկն կախված էր իրանից: «Աղքատ լինիս ու աչքքան Հըպարտ — մտածում էր նա անցնելով փողոցով: Արժան չ'Համարեց մինչև անգամ կարգին ձեռ տալու ինձ, միայն մատերի ծաչրերը մօտեցրեց: Այ գոռաղութիւն: Հարցնող լինի, թէ ինչու՞ր ես պարծեմում, աչն էլ ինձ մօտ, որ եթէ ուղեմամ կարող եմ քաղցած սպանել: Բաց սպասել, Կատերինա Կարլովնա, երկար չի տևիլ քո աչք Հըպարտութիւնը: Ես շուտով ցոյց կ'տամ քեզ թէ ում Հեա գործ ունիս և ո՞վ է Պետր Ստեփանիչ Գոյմաղովը: Աչն օրվանից, երբ քեզ տեսել եմ, աչն օրվանից ես չեմ մոռանում քո դէմքը: Ինչ եմ մէջ նորից դարձեցիլ ես բոլոր եմ կըքերը, որոնց ես մեռած էի Համարում և ես մինչև Հիմայ աշխատում էի քեզ մի կերպ եմ ճանկը ձգել: Խեղճ աղջիկ, դու կարծում ես, որ ես կարօտ եմ քո Հօր և եղբօր օգնութեան կամ թէ ես աչքքան լատութիւնը անում եմ ձեզ Կարլ Մարկիչի եմ Հօր արած օգնութիւններին փոխարէն: Սխալվում ես, անցան Հին ժամանակները: Իմ նպատակս է միայն քեզ ձեռք բերել և ես աչք նըպատակին ինչպէս և իցէ պիտի Հասնեմ, չը խընաչելով ոչինչ միջոցներ, ոչ փող, ոչ աշխատանք: Հըմ... դու առաջինը չես և դուցէ վերջինն էլ չես լինի, որ կ'խոնարհվես իմ ցանկութեան առաջ:

Շատ եմ տեսել քեզ նման գոռուղներ, բայց նրանց բոլորին էլ, այ, դրա միջոցով գնեւ եմ, ինչպէս մի կտոր ապրանք...

Վերջին խօսքերը մտքով անցնելու ժամանակ, Պետր Ստեփանիչը աջ ձեռնի ցոլեցամատի ելքով մատի ծայրերը շփեց իրարու:

— Է՛հ ինչ եմ մտածում այդպիսի ջնջին բաների մասին, շարունակեց նա խօսել— Բնչ Հարկաւոր է այդքան վճարել, դեռ այսօր են եկել: Հարկաւոր է միայն հօրը և եղբօրը իրանից հեռու պահել: Հայրը գործարանից չի կարող առանց իմ հրամանի տուն գալ, իսկ եղբօրը վաղը կ'ճանապարհէի մ Բալախանի: Այնուհետև կ'մնայ ինքը և մայրը: Մայրը արդէլ լինել չի կարող: Նա Հաշտարխանի թեթևամիտ կանանցից է, ես այսօր նկատեցի այդ: Մի ջնջին նուէր, մինչև անգամ մի Փռնթ սուրճը կարող է նրա աչքերը աջնպէս կուրացնել, որ նա իր ազգիան անգամ չի կարող տեսնել:

— Ի՛նչ հասակ, Բնչ կազմուածք... Բնչ դէմք... Վատ չէր լինի եթէ Կարլ Մարկիչը մի հարուստ վաճառական լինէր և ոչ թէ այսօրվայ նման մի ջնջին գործակատար դատարի գրպանով և անչաչա անունով: Այն ժամանակ ես մինչև անգամ չէի հրաժարվիլ Կատերինայի վրայ օրինաւոր կերպով պահելուց, թէև բժիշկները ինձ խորհուրդ չեն տալիս պահելու: Ասում են թէ ես հիւանդ եմ, և իմ զաւակներս հիւանդոտ կը մնուին:

— Այն, ես ինչով եմ մեղաւոր, որ պատժը

վաճ լինիմ, առանց ժառանգ թողնելու, անհետանալ այս աշխարհի երեսից և կարողութիւնս ձգել շան ու գաջի բերանը: Ձէ, կ'պսակվեմ, անպատճառ կ'պսակվեմ, բայց դեռ շատ ժամանակ ունիմ, դեռ երկտասարդ եմ և կարող եմ բաւական ժամանակ ազատ անցկացնել կեանքս: Կատերինա Կարլովնային... Ը՛մ... ահա այժմ ինչ է հարկաւոր կնձ, ահա ինչի մասին պէտք է մտածել... Հը՛մ... բայց տեսնենք:

Եւ Պետր Ստեփանիչը խորատուզված այս մտքերի մէջ, մի փոքր անցաւ ոտով և չետոջ նստելով առաջին պատահած կառքը, գնաց կրուք:

Պետր Ստեփանիչը, շատ լիւրջիւնիչ տղայ է, չէ՞  
դարձաւ Կարլ Մարիիչը աղջկան, որը այդ ժամա-  
նակ թէչ էր ածում:

— Կատերինա Կարլովնան ոչինչ չ'պատաս-  
խանեց:

— Շատ լաւ մարդ է երևում—պատասխա-  
նեցին նրա փոխարէն միաբերան մայր և տղայ:

— Շատ օբրազովաննիչ տղայ է—շարունակեց  
գովարտնել Կարլ Մարիիչը: Քանի տարի է Քու-  
սիւսում պիտեշտովալաշտ է անում, ուսերէն  
խօսում է մտկիլիչի պէս, որ քո քէՔդ էլ կ'դաշ  
Կատեա ջան: Ամեն ջուռաչի գաղետաներ է կար-  
դում, իրան նման պրօՖիւրանս խաղացող չկայ  
իլուսում: ՊրօՖէրանսը օբրազովաննիչ խաղ է,  
Մարիա, ուրիշ բան չի մտածես, ամեն մարդ չի  
կարողանում խաղալ: Քարիշնաների Համար այն  
տեսակ կալալերութիւն է անում, այն տեսակ  
նէժնի խօսում է, որ Հէնց կմանաս ախտօր իլի:  
Օ՛՛՛՛՛, չէ, շատ աղալարի, շատ արբազովաննի  
տղայ է: Նս գարմանում եմ, որ Կալիկալում այդ-  
պէս տղայ եմ տեսնում, հնդուր որ Կալիկալը դի-  
կիչ է, մեր կողմերի պէս թիվիլիչովանիչ չի: Ամա  
դու, Կատեա ջան, նրա Հես դելիկատնիչ պօս-  
տուպիչացա չիլար Հա ան, հտի կմանումես, լաւ  
չի Հա ան:

— Ինչպէս Հարին էր, այնպէս վարվեցի, խօ  
քեդ պէս մինչև փողոց ճանապարհ չէի դնելու—  
ընդՀատեց նրան Կատերինա Կարլովնան, բաւա-  
կան սառնութեամբ:

— Օ՛Հ՛՛, թնչ ես ատում: Նս պարտաւոր եմ

V



աշա, դուշտ մօտա, ասն տեսնեմ  
ինչպէս ես, քանի ժամանակ է առանց քեդ մէ-  
նակ էի—սկսեց նորեց Կարլ Մարիիչը, փաթաթիլե-  
լելով իր ամուսնոյ վիշին, երբ Պետր Ստեփանիչին  
ճանապարհ դնելով՝ վերադարձաւ սենեակ:

— Հեռու գնան, Հեռու գնան, շրերիցդ նաւթի  
Հոտ է փչում, սիրտս խառնում է—պատասխա-  
նեց Մարիա Խվանովնան, Հրելով նրա կրծքին:

— Մամա ջան, թնչ ես ատում, դա իմ պը-  
րադնիչնիչ կօտրեմս ա, նոր եմ կարել տուել:

— Լաւ է, բաւական է, ձեռ քաշիր, ամաչիբ  
երեխերքեց—Հակոռակեց կրկին Մարիա Խվանով-  
նան, երբ Կարլ Մարիիչը կամեցաւ Համբուրել  
նրան:

— Ումից ամաչեմ, Արտեմից, Հէչ, ոպատիբ,  
նա էլ ժենիչացա կ'լինի, էն վախտը կիմանայ թէ  
ինչ քաղցր բան է սուպրուգան: Տեոնը, Մարիա,  
ինչ լաւ խօղեաչին ունիմ, պրօստօ զօլօսօ: Ինձ  
շատ է ուվաժալտ անում, ամեն կիւրակի կօՖէտով  
ուգաստիչտ է անում, մի խօսքով շատ լաւ խօղ-  
եաչն է: Հէնց այս մօտերս ինձ գաւոզի ուպրալ-  
լեաիւչի շինեց: Կատեա, քեդ ինչպէս դուր եկաւ

նրա Հետ լիւթէզնից լինել էնդուր որ ես նրա պօղչինեօնինն եմ, նա իմ խօղեայինն է—տաքացաւ Կարլ Մարկիչը, փողպատը ուղղելով և գլխի կարճլիկ ձերմակ մաղերը երկու ձեռքերով Հարթելով:

—Գու պարտաւոր ես, բաց ես իչ: Գու կարող ես նրա չորս կողմով պտոշտ դալ, իսկ ինձանից մի պահանջիլ նոյնը—պատասխանեց Կատերինա Կարլովնան աւելի սառնութեամբ:

—Մամաջան, ինչեր ես խօսում, սկուչնա ես քէֆը լաւ չի, լիխօրադկա ունիս—փոխեց իր խօսքը Կարլ Մարկիչը, իսկապէս կասկածելով աղջկայ առողջութիւնը:

—Շիկալը կողպելին ձեռը ցաւացրել է—պատասխանեց Մարիա Իվանովնան աղջկայ փոխարէն:

Կարլ Մարկիչի մարմինն կարծես թէ էլէէքտրական թելի ծալը կպցրին: Նա այնպէս վեր թռաւ տեղից, որ աթոռը ընկաւ, սեղանը սառտիկ շարժվեց, թէչի բսժակը պարանիւթեց և թէչը սեղանի երեսով սկսեց Հոսալ սննեակի չատակը: Մարիա Իվանովնան և Արտէմը վախեցան Կարլի այդ արագ շարժումից և նոյնպէս բարձրացան իրանց տեղերից:

—Գուշա մօեա, արա, արա, արա տեսնեմ—կոչեց Կարլ Մարկիչը, շարձակվելով իր աղջկայ վրայ: Կատերինա Կարլովնան նոյնպէս վախեցած իր Հօր տարօրինակ շարժումից, անգլխտակցաբար մի քաջ չետ գնաց:

—Կարլ, այդ ինչեր ես անում, գժուել խօ

չես, վախեցրիւր մեզ—բացականչեց Մարիա Իվանովնան:

Սակայն Կարլ Մարկիչը ուշադրութիւն չի դարձրաւ նրա վրայ:

—Յոց տուր արա տեսնեմ դուշա:

—Հանդուտացիր պապա, ոչինչ չ'կայ, ցաւը վաղուց է անցել—խօսեց վերջապէս Կատերինա Կարլովնան շիթոված, աշխատելով ձեռքերը թագցնել Հօրից:

Կարլ Մարկիչը քիչ Հանդուտացաւ և բաց թողաւ աղջկայ թեւը: Նա չետ նայեց և տեսնելով իր տարօրինակ շարժման Հետեանքը՝ կտրծես թէ ամաչեց իր արարմունքից:

—Ինչպէս վախացրի ինձ, Մարիա, Հէնց իմացայ, որ մատը ըսողովելոյ է արել Կատեան—ասաց նա կրկին տեղը նստելով:

Քիչ էր մնում, որ դու մեզ ըսողովելոյ անէիք սեղանով, այնպէս վեր թռար տեղիցդ—պատասխանեց Մարիա Իվանովնան:

Վերջապէս Կարլ Մարկիչը բոլորովին Հանդուտացաւ և թէչը վերջացնելով, ամենքը նստեցին սեղանի շուրջը ընթրելու: Ընթրիքի ժամանակ նորեկները մանրամասն պատմեցին Կարլ Մարկիչին իրանց կեանքի մասին նրա բացակայութեան ժամանակ և ստիպեցին նոյնը անել և Կարլ Մարկիչին: Կարլ Մարկիչը, կարծես թէ, Հէնց մի այդպիսի չարմար առիթ էր որոնում: Նա մի քանի բաժակ գինուց գլուխը տաքացած՝ սկսեց երկար ու բարակ պատմել իր մի տարվայ կեանքը: Նա նկարագրեց դործարանը, նաւթահանքերը,

ճանօթացրեց նրանց նախ թացին արդեն արքայա-  
 թեան հետ: Պատմեց թէ ինչպիսի հարստու-  
 թիւններ կան Բագվում, թէ ինչպէս հեշտ են  
 հարստանում աչդատեղ մարդիկ և ինչպէս շուտ,  
 թէ ինչպէս է և Պետր Ստեփանիչը հարստացել,  
 առաջ ուրիշն մօտ գործակատար լինելով: Կրկին  
 սկսեց գովաբանել վերջիններն, աւելացնելով, թէ  
 չոչս կաջ որ ինքը, Կարլ Մարկիչը, նրա օգնութեամբ  
 մի օր գործարանատէր դառնայ և օրինակ բերու  
 շատերին, որոնք մի քանի տարվայ ընթացքում  
 ոչինչ չունենալով հարստացել են: Ասաց նոյնպէս,  
 որ Պետր Ստեփանիչին ինքը մի քանի անգամ  
 աչդ մասին ակնարկել է, և Պետր Ստեփանիչը  
 չոչս է տուել ժամանակով անկրօն գործարանա-  
 տէր դարձնել նրան, եթէ միայն լաւ կ'ըմտացի:  
 Այժմ Կարլ Մարկիչը ինքը աշխատում է լաւ ծա-  
 դացել Պետր Ստեփանիչին, որպէս զի օրեցօր ա-  
 ւելի գրաւի նրա սէրը և համակրութիւնը: Այնու-  
 հետե Կարլ Մարկիչը աւելի և աւելի տաքացնե-  
 լով գրուելը և չափշտակիւթիւղի էր պատմութեանով,  
 սկսեց նկարագրել էր մօտիկ ապագան խիստ գե-  
 դեցնիկ գոյնեքով: Ասաց, որ շատ ժամանակ չի  
 քաշիլ և ինքը կրկին կ'դառնայ առաջվայ ոպեր-  
 վոյ գեղեղեկ կուպեց Պօպօլը՝ և գուցէ մի քեչ էլ  
 աւելի: Այն ժամանակ թող մտիկ անեն իրան  
 վրայ Հաշտարեանի թշնամիները և նախանձից  
 սիրտները տրաքել: Վերջապէս Կարլ Մարկիչը ա-  
 սաց, որ աչտուհետե ինքը նիւթացիս ապահով-  
 ուած է և ոչինչ հոգս չունի: Հարկաւոր է միայն  
 մտածել առողջութեան մասին և ուրիշ ոչինչ: Նա

սկսեց խրատել էր ընտանիքին, որ պահպանեն  
 իրանց առողջութիւնը, նա մանուական Կատերինա  
 Կարլովնան լաւ պահպանի իրան, զգոյշ լինի և  
 աչտուհետե շիպը կապիլիս «առողջալիցա» չանի  
 մատը: Թօսելով Կատերինա Կարլովնայի վերաբե-  
 րութեամբ, նա կողմնակի կերպով ակնարկեց թէ  
 Բագվում կարելի է լաւ փեսացու ճարել նրա հա-  
 մար, որովհետե ազաւի տղերք շատ կան, բոլորն  
 էլ հարուստներ, իսկ գեղեցիկ, լուսաւորված և  
 շնորհով աղջիկերք շատ քեչ: Սրա պատճառը այն  
 է, սասց Կարլ Մարկիչը, որ Կավիաղը գեռ «դեկից  
 տորանա» է և կանայք մեծ մասամբ շարշաւի մէջ  
 փաթաթված են, «օբրազովաչացա» չեն եղել և  
 աչն: Ի վերջոյ Կարլ Մարկիչի երևակալութիւնը  
 այնքան բորբոքից Կատերինա Կարլովնայի վե-  
 րաբերութեամբ, որ նա փտահացաւ մի չանդու-  
 գն չոչս ևս արտաչաչտել: Բայց իսկոչն նա շտա-  
 պեց աւելացնել, որ աչդ չոչսի իրագործիւրը կախ-  
 ված է Կատերինա Կարլովնայից, թէ ինչպէս սա  
 իրան ցոյց կ'տայ և ինչպէս կ'վարվի Պետր Ստե-  
 փանիչի հետ և թէ վերջինը ինչպէս կ'նայի  
 Կատիւնի վրայ... Պատուերեց Մարիա Իվանով-  
 նային, որ Պետր Ստեփանիչին միշտ գալու ժա-  
 մանակ ուրախութեամբ, պատուով և չարգանքով  
 ընդունի և ամեն անգամ «կօֆէով ուգատելչտ  
 անի»: Խնդեց նոյնպէս Կատերինա Կարլովնային,  
 որ սա ևս էր կողմից շատ քաղաքալարութեամբ  
 վերաբերվի Պետր Ստեփանիչին, հետը ոսերէն  
 խօսի, «դեւիկատնից պօստուպելչտացա» անի «էնդուր  
 որ Պետր Ստեփանիչը, ինքը ցելիւրիզովանիւնից կօ-

վալեօր է և սիրում է նէժնի մանիւերնէք”:

Մի խօսքով Կարլ Մարիէը բան չի մնաց, որ չի պատմի և պատուէրներ ու խրատներ չի մնաց, որ չ’տայ Մարիա Իվանովնային և, նա մանաւանդ, Կատերինա Կարլովնային:

Ընթրիքը աւարտվեց: Կարլ Մարիէ Պօպօլը շափշտակված երեակաչութեան մէջ. Հրաժարվեց իր սենեակը քնելու: Արտէմը, Մարիա Իվանովնան և Կատեան նոյնպէս գնացին իրանց սենեակները քնելու:

Առաւօտեան Կարլ Մարիէը ճիշտ որ, ինչպէս ինքը խօսք էր տուել Պետր Ստեփանիչին, „խօրող կանչելիս“ գործարան գնաց: Իսկ Արտէմ Կարլէջը տասը ժամին ներկաչացաւ Պետր Ստեփանիչին և մի քանի անհրաժեշտ պատուէրներ թէ Հրամաններ ստանալով նրանից՝ ճանապարհվեց Բալախանի, գործակատարի պաշտօնով:

VI



Ետեւալ օրը, կէսօրվայ դէմ, Պէտր Ստեփանիչը կրկին ներկաչացաւ Կարլ Մարիէչի ընտանիքին, այս անգամ ուրիշ և աւելի շքեղ Հագուստով: Մարիա Իվանովնան խոհանոցում կերակուր էր պատրաստում ճաշի համար: Կատերինա Կարլովնան իր սենեակում նստած, մեքենայի վրայ մի ինչոր բան էր կարում:

Լսելով իր ետեւից Պետր Ստեփանիչի բարեւ ձայնը՝ նա իսկոյն ընդհատեց գործը, բարձրացաւ տեղից և սառն քաղաքավարութեամբ պատասխանելով նրա բարեւին, ձեռ տուաւ և շտապեց խոհանոց, որ մօրը չաշտնի:

—Ոչինչ, ոչինչ, նեղութիւն մի քաշէք Կատերինա Կարլովնա, թողէք Մարիա Իվանովնան իր գործը վերջացնի—ստաց Պետր Ստեփանիչը, կտրելով օրհորդի առաջը, որ նա դուրս չ’գնայ:

Բաց օրհորդը չլսեց նրան. մի վարկեանում ներկաչացաւ Մարիա Իվանովնան թեւերը մինչև արմուկները ծալած: Պետր Ստեփանիչը թաւատեղից և քնքուշութեամբ բարեւեց նրան:

—Սրէկ Կատերինա Կարլովնան իրեղէնները դարսելու ժամանակ, ես նկատեցի, որ նրա ձեւ-

մակեղէնի կամօղը շատ Հնացած է և անպէտք։  
Չինեղանաք Մարիա Իվանովնա, ես, առանց ձեր  
Թոյլտուութեան, մի լաւ կամօղ եմ առել նրա  
Համար, որը աչս ըսպէս կը գործակատարը կը  
բերի։

— Ի դուր էք առել, ես շնորհակալ եմ, կը  
կամօղը շատ լաւն է—պատասխանեց Կատերինա  
Կարլովնան, մի նշանաւոր Հաշեացք ձգելով իր  
մօր երեսին, որ սա ևս Հրաժարվի նուէրը ընդու-  
նելուց։

Մարիա Իվանովնան Հասկացաւ իր ազգկաց  
միտքը, ըստ և այնպէս կամօղը խիստ Հետա-  
քքբեց նրան։

— Ցաւդ առնեմ, մեղ Համար ինչու ատելորդ  
խարջեր էք անում, որ առաջուց ինձ առէիք, ես չէի  
Թողնի—ասաց նա, քեքու շու Թեամբ նաչելով Պետր  
Ստեփանիչի երեսին, որ տեսնի նա, Թէ ինչպէս  
Հասկացաւ վերջինը այդ անորոշ խօսքերը։

— Մեծ գումար չեմ տուել, վաթսուն մանէ-  
թը ինչ բան է, որ նրա Համար մտածեմ—պա-  
տասխանեց Պետր Ստեփանիչը, Ժպտելով Կատե-  
րինա Կարլովնայի երեսին։ Վերջինը երեսը շուռ  
տուաւ դէպի մօրը և սկսեց ջանդիմանօրէն նա-  
չել նրա երեսին։

— Կատեա, Հէնց քեզ Հարկաւոր է մի կա-  
մօղ, վնաս չունի, որ Պետր Ստեփանիչը առանց  
մեզ Հարցնելու առել է։ Հօրդ կատեմ, որ իր  
ռոճիկից վաթսուն մանէթ Թողնի Պետր Ստե-  
փանիչի մօտ։

— Մամա ինչ ես ասում, վաթսուն մանէթ

պապայի մի ամովայ ռոճիկն է, ես ինչ եմ անում  
այդքան Թանգ կամօղը—կրկին Հակոբակեց  
օրերօրը։

— Գուք ինձ վերադրում էք, Մարիա Իվա-  
նովնա, ես փողի կարօտութիւն չունիմ. ես այդ  
էբը մի ջնչին նուէր եմ տալիս և ոչ Թէ ծախում  
—պատասխանեց Պետր Ստեփանիչը, « կեղծօրէն  
երան վերադրված ձեւացնելով։

Այդ Ժամանակ մի մշակ, Պետր Ստեփանիչի  
գործակատարի առաջնորդութեամբ, ներս բերաւ  
մի բաւական մեծ կամօղ ընկողի փացտից շինած։

Կամօղը դրին պատշգամի վրայ։ Պետր  
Ստեփանիչը բանալին շուռ տուաւ և բացեց, որ  
ցոյց տաչ Կատերինա Կարլովնային և նրա մօրը։

— Շատ դեղեցիկ բան է, շատ էլ արժան եմ  
առել։ Սրա նման կամօղ Մոսկովայի մէջ չեն տալ  
վաթսուն մանէթով։

Պետր Ստեփանիչը այտտեղ ևս չ'մոռացաւ  
մի ուռտ բաց Թողնել։ Կամօղի Համար նա վճա-  
րել էր քառասուն և ոչ Թէ վաթսուն մանէթ։  
Աչսպէս Թէ այնպէս կամօղը այնքան դրաւիչ էր,  
որ միանգամից չափշտակեց Մարիա Իվանովնային։  
Երկար Ժամանակ նա նստում էր կամօղի ներսին,  
դրսին, վերին և չէր կարողանում կշտանալ նա-  
չելուց։ « Ինչ լաւն է, ինչ մեծն է, Կատեա, շու-  
րերդ կ'տեղաւորվին»—կրկնում էր նա անդադար,  
ուրախութիւնից պտոյտ գալով կամօղի չորս  
կողմով։

Վերջապէս, աւելորդ Ժամանակ չը կորցնե-  
լու Համար, Պետր Ստեփանիչը կողպեց կամօղը

և բանալին առաջարկեց Կատերինա Կարլովնային, ուղղակի նրա դէմ կանգնելով և մէջքեց թեք-վելով:

— Թանգ չէ նուէրը, բայց թանգ է իմ սէրը, ասում են ուսմները—ասաց Պետր Ստեփանիչը ուսերէն լեզուով, բանալին բռնելով ուղիղ օրիորդի քնթի առաջ:

Այս խօսքերը օրիորդին աւելի շփոթացրին: Նրա երեսը կարմրեց և նա չ'կարողացաւ թէ ինչ պատասխանի, միևնոյն ժամանակ բանալին չի ընդունելով Պետր Ստեփանիչից:

Պետր Ստեփանիչի դէմքով մի վայրկեան սահեց անբաւականութեան ժպիտը, բայց նա զսպելով իր վրդովմունքը՝ կրկին առաջարկեց:

— Ի՞նչ ես մեխված մնացել, Կատեա, ախար քեզ է առաջարկում Պետր Ստեփանիչը:

— Տուէք մամային—խօսեց վերջապէս Կատերինա Կարլովնան:

Ուրիշ կերպ չէր կարելի, Պետր Ստեփանիչը բանալին չանձնեց Մարիա Իվանովնային, իր դէմքը քիչ թթուացնելով:

— Շնորհակալ ենք, շատ շնորհակալ ենք: Աստուած ձեր մինը Հազար անի, Պետր Ստեփանիչ. ձեր լաութիւնը չափտեան չենք մտածնալ: — Կատիա, դու Հրաւերիք Պետր Ստեփանիչին սենեակ, քիչ խօսեցէք, ես գնամ կօֆէ պատրաստեմ այս րոպէիս:

— Դու մնացիր, մամա, ես կ'պատրաստեմ:

— Այ, չէ, ինչ ես խօսում, դու երբ ես կօֆէ եփել, որ Հիմի թողնեմ. նստիր աջնտեղ, ես այս

րոպէիս: Կատերինա Կարլովնան ախմաց համաձայնեց և Պետր Ստեփանիչին Հրաւերեց ներս: Նա մօտեցաւ կարի մեքենային և սկսեց շարունակել իր ընդհատուած գործը, առաջարկելով Պետր Ստեփանիչին նստել:

Պետր Ստեփանիչը նստած լուռ ու մունջ ազահոթեց թեամբ նայում էր օրիորդին, որը գլուխը խոնարհած, գործում էր նոյնպէս լուռ ու մունջ: Նա կամենում էր խօսել, բայց չը գիտէր թէ ինչի մասին խօսէր և ինչպէս սկսէր: Այդ տեսեց մի քանի րոպէ: Վերջապէս նա իր աթոռը առաջ շարժելով, մօտեցաւ օրիորդի սեղանին և վստահացաւ բնդհատել անտանելի լուրթիւնը:

— Կատերինա Կարլովնա, այս գիշեր կլուգում լաւ կօնցէրտ է լինելու, ես եկել եմ ձեզ հրաւիրելու: Կ'համաձայնէ՞ք ինձ Հետ միասին գնալ, տոմսակներ էլ վերցրել եմ:

— Ո՛չ ներեցէք, չեմ կարող, շատ չողնած եմ, մի ուրիշ անգամ կ'դամ—պատասխանեց Կատերինա Կարլովնան, այս անգամ բաւական մեղմութեամբ:

— Այժմ ուշ է հրաժարուել օրովհետեւ ամսակները արդէն գնուած են—ասած սիրտ առնելով Պետր Ստեփանիչը թէ և դարձեալ սուտ, օրովհետեւ նա տոմսակներ դեռ չէր գնել:

— Առանց ինձ չալտնելու իղուր էք առել:

— Հիմա ինչ և իցէ երկուսը առել եմ, մէկը ինձ, միւսը ձեզ Համար, անպատճառ պիտի դաք:

— Ո՛չ, ես դալ չեմ կարող:

— Բաս տոմսակները:

— Գուք գիտէք, տուէք ձեր ընկերներին:

— Ընկերներ չունիմ, Կատերինա Կարլովնա, ես իհնակ մարդ եմ այս աշխարհում, նոր եմ ուղում ընկեր ձեռք բերել— ասաց Պետր Ստեփանիչը, կեղծութեամբ փոխելով իր ձայնը և դէմքը օրպէս զի օրերդի գութը շարժի գէպն ինքը: Սակայն Կատերինա Կարլովնայի դէմքի վրայ նաչի նկատեց ոչինչ փոփոխութիւն: Նա տեսաւ նոյն անտարբերութիւնը, նոյն սառնութիւնը, ինչոր առաջ էր:

— Այդպիսի քաղաքում ձեզ նման Հարուստ մարդը շատ Հեշտութեամբ կարող է ընկերներ ունենալ նոյն իսկ բարեկամներ ճարել— պատասխանեց օրերդը:

— Շատ գիտար է ինձ Համար:

— Բաս նւմ Հետ էք անցկացնում ձեր ժամանակը:

— Գործերով եմ զբաղված, իսկ ազատ ժամանակս անց եմ կացնում միայնակ, միայնակ, Կատերինա Կարլովնա. ան եթէ իմանաք իմ ցաւը: Նս շատ ունիմ ծանօթներ, բայց ոչ օքի Հետ բարեկամութիւն անել չեմ կարողանում:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ այտակի մարդիկ շատ անպետան են, անքաղաքավարի են, նրանց Հետ ես չեմ սիրում ընկերանալ:

— Իուք ինչ տեղացի էք, ներեցէք Հարցնել:

— Նս ևս Կովկասցի եմ, Շուշումն եմ ծնուել: Բայց շատ երկար ժամանակ ապրելով Մոսկւաում, Պետերբուրգում՝ տակահան մոռացել եմ

Կովկասի կեանքը: Նս սովորել եմ ընկերութիւն անել քաղաքավարի, կրթված, լուսաւորված, լատաող, լաւ խմող, լաւ Հագնվող, Թատրոններ, օպերաներ գնացող մարդկերանց Հետ: Այտակ չ'կան այդպիսի մարդիկ, այտակ ամենքը միայն մի բանի վրայ են մտածում այն է՝ փող աշխատել, և դրա Համար փչացնում են իրանց կեանքը: Գործարաններում, Հորերի վրայ, նաւթի և կեղտի մէջ փաթաթված, մաղաղկներում ճիթ ու կտորի փոշու մէջ խեղդվում են, տքնում են գէշեր ու ցերեկ, որ ինչ է իրանց զբաղանները լցնեն: Լցնում են և չեն իմանում թէ ինչպէս ծախսեն փողերը, ինչպէս ապրեն, որովհետեւ քաղաքավարութիւն ասած բանը չեն Հասկանում, որովհետեւ կրթված չեն: Աշխարհ են շօջել, բայց ոչինչ չեն կարողացել սովորելու: Ամիսներով, տարիներով մաշտաքաղաքներում ապրել են, բայց բացի իրանց ապրած Հիւրանօցից և մի քանի փողոցներից, ոչինչ չեն տեսել: Ռուսաստանում այդ մարդիկ ոչ Թատրոն են գնում, ոչ օպերա, ոչ ցերեկ, ոչ կուրներ և ոչ էլ ուրիշ Հաղար տեսակ զուարճութիւնների տեղեր կան, այնտեղ են գնում: Իսկ եթէ գնում էլ են, ոչինչ չեն կարողանում սովորել, Թատրոնում կամ օպերայում ամենապիւրջին աթոռներն են վարձում, որ արժան նստի: Շատերը գնում են, ներկայացումը չի վերջացած կիսատ են թողնում ու դուրս գալիս որովհետեւ «նստե՛ս ինչե՛սկից Փիուս» ասած բանը չ'կաջ նրանցում: Նրանց Համար զուս-

նա բալաբանի ձայնը քաղցր է քան թէ Պատարի երգերը: Մոտիվաշում ինձ վրայ զարմանում էին, որ ես ամեն անգամ քսան ու Հինգ բուբի էի տալիս Պատարին և Նիլսոնին լսելու, կամ Սալվինին խաղը տեսնելու, բայց ես սրտանց ծիծաղում էի նրանց անհասկացողութեան վրայ: Ինձ Համար փողը մի միջոց է շքեղ ապրելու համար, իսկ նրանց համար նա կիանքի նպատակ է: Այդ պատճառով ես նրանց ատում եմ, ատում եմ որովհետև նրանք բոլորը թէև երեսասարգներ են, բայց Հին Հոգով և մաշված սրտով: Ահա ինչու համար ես, Կատերինա Կարլովնա, չեմ ընկերանում նրանց հետ: Ախ, եթէ զիտենալիք, թէ որքան ինձ համար դժվար է նրանց հետ խօսիլը անգամ: Ես մէնակ եմ, Կատերինա Կարլովնա, մէնակ եմ և ինձ համար շատ և շատ դժուար է անց կենում այստեղ:

Պետր Ստեփանիչը ատենաբանում էր ոգեւորված և զանազան թատրոնական շարժումներ անելով: Վերջին խօսքերը արտասանելու ժամանակ նա մինչև անգամ ձայնը փոխեց լացի եղանակով:

— Կնացէք ուրիշ քաղաքում ապրեցէք — ստաց Կատերինա Կարլովնան, երբ Պետր Ստեփանիչը դադարեց խօսելուց:

— Չեմ կարող, Կատերինա Կարլովնա, դորձերս աչտակ են, թողնել անհնարին է: Բայց ես, Կատերինա Կարլովնա, բաղգաւոր կ'ընեմ եթէ . . . եթէ . . . էհ . . .

Այստեղ Պետր Ստեփանիչը լեզուն շփովեց

և նա չ'կարողանալով վերջացնել իր խօսքը, մի կտրը հռոպալանք արձակեց կրծքից, որը կեղծ էր:

Կատերինա Կարլովնան չոնքերի տակից նրա վրայ, նաչեց և գլուխը խոնարհացնելով քեչ կարմրեց: Նա մտածեւ դուշակեց Պետր Ստեփանիչի չետ կուլ առած խօսքերի մեղքը:

Այդ ժամանակ դուռը բացվեց: Մարիա Իվանովնայի գլուխը երևեցաւ և նոյն վայրկեանին կրկին անհետացաւ: Այդ նկատեց միայն Պետր Ստեփանիչը, որովհետև Կատերինա Կարլովնան նստած էր երեսը գէպի դռան հակառակ կողմը:

— Շատ մարդիկ կարծում են, որ մարդ միայն փողով է բաղդատը — շարունակեց Պետր Ստեփանիչը. Մարիա Իվանովնայի գլուխը անհետանալուց մի քանի րոպէ անցած: Ես այդ չեմ հասկանում: Ահա ես հարուստ, փառք Աստուծոյ էլ ինչու է պակաս, մի միլիոնի չափ կարողութիւն ունիմ: (Պետր Ստեփանիչի կարողութիւնը երես հարիւր հազարից աւել չէր լինի): Տուն, տեղ, սակ, արծաթ, ծառաներ, կառքեր, ամեն բան ունիմ, ինքս էլ մենմենակ, ոչ ծնողներ ունիմ. ոչ եղբայր, ոչ քոյր, ոչ էլ պարտք, մի խօսքով կսկիմ գլխի և կարողութեան կատարեալ ախն եմ: Բայց մի թող զան սրտիցս հարցնեն թէ նա ինչ է ատում, մըտնեն դրութիւնս և տեսնեն թէ այդքան հարսութեան մէջ ինչպէս եմ ես, զգում ինձ . . . : Տխուր, տխուր, մահու չափ տխուր . . .

— Ինչո՞ւ — հարցրեց Կատերինա Կարլովնան:

— Որովհետև չ'կայ մի մարդ, որը հետ կարողանամ անկեղծ ընկեր լինել, որը հետ կարողա-

նամ սրտանց խօսել և լծել թեանալ: Ախ, Կատե-  
րինա Կարլովնա, եթէ իմանայք իմ գրու թիւեր...:

Եւ Պետր Ստեփանիչը կրկին կրճ.քից արձակեց  
մի սուտ հառաչանք և կրկին խղճալի գէժքով  
նայեց օրիորդի երեսին:

— Պտակիցէք, գուցէ այն ժամանակ ուրախ  
կ'ընէք—ասոց Կատերինա Կարլովնան, փորձելով  
աւելի պարզ հասկանալ նրա միտքը:

— Պտակիւն, բայց ուր է իմ սիրամ աղջիկը—  
պատասխանեց Պ. Ս. մեկէլ հառաչելով:

— Ինչո՞ն, ասում են որ Բարգիւմ շատերը կան:  
Պետր Ստեփանիչը ուղևորվեց, նրա գէժքը  
աչլաչլվեց, աչքերը կարմրեցին և նա յամեկարձ  
արագութեամբ բարձրացաւ աթոռից:

— Չկայ, չկայ, Կատերինա Կարլովնա, չ'կայ  
բացի ձեզանից, խղճացէք ինձ վրայ, թող տուէք...:

Եւ նա չարձակվելով օրիորդի վրայ, կամեցաւ  
համբուրել: Օրիորդը սարսափած վեր թռաւ տե-  
ղից, հրելով Պետր Ստեփանիչի կրճ.քին.

— Ի՞նչ էք անում, հեռու կանգնեցէք—ասաց  
նա ուղղունելով:

— Ես ձեզ սիրում եմ . . .

— Սուտ էք ասում, ես ձեր միտքը հասկա-  
նում եմ, լաւ ճանաչեցէք...:

— Երդվում եմ, երդվում եմ Սասունով, Կա-  
տերինա Կարլովնա, հաւատացէք և թող տուէք—  
ասաց նա, կրկին մօտենալով օրիորդին:

— Հեռու գնացէք, եթէ ոչ կ'ըղանեմ . . .  
ասում եմ:

Պետր Ստեփանիչը մնաց արձանացած տեղն

ու տեղը: Մի քանի վայրկեան այդ գրութեան  
մէջ մնալուց չետոյ, նա մօտեցաւ օրիորդին և ասաց  
խոնարհութեամբ:

— Ներեցէք, Կատերինա Կարլովնա, ես հա-  
նաք էի անում, ներեցէք : . .

— Նրիտասարգը այդ տեսակ հանաքներ չի  
անիլ օրիորդի հետ:

— Լաւ է մոռացէք, մոռացէք խնդրեմ, միւս  
անգամ չեմ անիլ:

Ներս մտաւ Մարիա Իվանովնան, մի ձե-  
ռում սրճամանը, միւսում— կաթնամանը:

Կատերինա Կարլովնան ուղղեց իրան, Պօլ-  
մաղովը նոյնպէս, և միամիտ Մարիա Իվանովնան  
ոչինչ չ'կարողացաւ նկատել:

Նստեցին սուրճ խմելու: Փոքր առ փոքր  
Կատերինա Կարլովնան ուշքի եկաւ և սկսեց խօ-  
սել ու զուարճանալ: Կարծես թէ ոչինչ չէր պա-  
տահել: Պետր Ստեփանիչը նոյնպէս սերտ առաւ:  
Սուրճը խմելուց չետոյ, նա յանդգնեց կրկին առա-  
ջարկելու Կատերինա Կարլովնային երեկոյեան  
միասին կօնցերտ գնալ, բայց վերջինը վճռաբար  
մերժեց: Բայց և այնպէս վերջումը Պետր Ստե-  
փանիչին երկուր թախանձանքներից չետոյ, Մարիա  
Իվանովնայի միջնորդութեամբ, չաջողվեց Կատե-  
րինա Կարլովնայից աղնիւ խօսք առնելու, որ սա  
միւս անգամ գնաց իրան հետ կօնցերտ, որը պիտի  
լինէր մի շաբաթից չետոյ:

Այնուհետև Պետր Ստեփանիչը հրաժարվեց,  
բաւական թեթեւացած սրտով, չետաձգելով իր  
մտադրութեան իրագործելը առ ժամանակ, մինչև  
որ կ'պատահէր մի չարմար գէպը:

VII



ինչև Կօնցէրտի օրը Պետր Ստեփանիչը օրական երկու անգամ այցելում էր Կարլ Մարիիչի ընտանիքին: Թէ Մարիա Իվանովնան սրբան դս՛հ էր այդ այցելութիւնով, թէ ինչ ուրախութիւնով էր ընդունում Պետր Ստեփանիչին ամեն անգամ, թէ ինչ շարժումներ, ինչ պտոյտներ էր անում խեղճ կինը նրան հաճոյանալու համար այդ անհնարին է նկարագրել: Եւ ինչպէս կարող էր ուրիշ կերպ վարվել Մարիա Իվանովնան, քանի որ նա տեսնում էր թէ սրբան ուշագիւր է Գօլմազովի նման մի նշանաւոր հարուստ դէպի իր մի շնչին գործակատարի շնչին ընտանիքը և ինչպէս նա հողում է այդ ընտանիքի բաղաւորութեան համար: Բայց մի առանձին ուրախութիւն էր զգում Մարիա Իվանովնան իր աղջկայ վերաբերմամբ, նկատելով այն ուշադրութիւնը, որին արժանացել էր Կատերինա Կարլովնան Գօլմազովի կողմից: Ետտ անգամ նա լուռ ու մունջ ձեռքերը ծոցում ծալած, քաշվում էր սենեակի մի անկիւնը, մտիկ անում իր աղջկան և Պետր Ստեփանիչին, որոնք իրարու դէմ նստած խօսում էին՝ մտիկ էր անում և խորա-

սուղվում մտածողութեան մէջ: Այդպիսի ըսպէսներում նրա ծնողական զգայուն սիրտը սկսում էր բաբախել իր սիրեցեալ զուակի բաղաւորութիւնով:

Մարիա Իվանովնայի առաջ պատկերանում էին փառաւոր կառքեր, բազմաթիւ ծառաներ, զարդարուն սենեակներ մի բարձրաշէն շքեղ տան մէջ: Տունը Գօլմազովինն է, իսկ նրա մէջ իշխում է իր աղջիկը: Կատերինա Կարլովնան ամբողջ օրը պտտում է զարդարուն սենեակները մէջ, կարգադրութիւններ է անում, հիւրեր է ընդունում և ճանապարհ գնում: Իսկ իրենիտէմ նա Պետր Ստեփանիչի հետ նստում է կառք և գնում ծովափը զբօսնելու: Զբօսանքից վերադառնում է տուն, թէյ խմում, հագուստը փոխում, աւելի շքեղը հագնում ու Պետր Ստեփանիչի հետ թեւ թեւ տուած գնում թատրոն, պարահանդէս և այլն: Նրանց հետ գնում է նոյնպէս և Արտեմը՝ իսկ ինքը, Մարիա Իվանովնան, Կարլ Մարիիչի հետ մնում են տանը, խօսում են, զուարճանում են սպասելով երիտասարդ ամուսինները վերադառնալուն, որ միտտին ընթրեն:

Այդպէս, ուրեմն Մարիա Իվանովնան երեակալում էր ոչ միայն Կատերինա Կարլովնայի, այլ և ըսլոր ընտանիքի մօտիկ ապագան բաղաւորուած, և թէ միայն Գօլմազովի սիրտը այնքան բարի է, որ նա ուշադրութիւն չի դարձնել նրանց աղքատութեան վրայ: Եթէ նա աչքի առաջ կունենայ Կատեայի անձնաւորութիւնը, նրա գեղեցկութիւնը, շնորհը, բնաւորութիւնը և եթէ Կա-

տեան նոյնպէս, լաւ կըսողատելով իր ապագան, կ'աշխատի այդ չափերով թիւնները աւելի դեղեցիկ, աւելի հրապուրելի գոյներով ներկայացնել Գօլմազօվին, որպէս զի անդա՛նալի կերպով գրաւի նրա սիրտը: Բայց աւաղ, Կատեան այդ չէր հասկանում, որովհետեւ Մարիա Իվանովնայի կարծիքով, նա չկմար էր և փոխանակ Գօլմազօվին զբաւելու, աշխատում էր զգլացնել վերջինին: Նա առաջուայ պէս սառն և երբեմն կուպիտ էր վարվում Գօլմազօվի հետ: Մարիա Իվանովնան այդ տեսնում էր, տեսնում էր և մինչև իւր հոգոյ խորքը վրդովվում, բայց չէր կարողանում Գօլմազօվի ներկայութեամբ արտայայտել իր վրդովմունքը Կատեային: Նա զսպելով իր բարկութիւնը, սպասում էր Գօլմազօվի հրաժարվելուն: Երբ վերջինը ոտը դռներէից զուրս էր դնում, նա սկսում էր կարկտի պէս թափել այդչափ զլխին անթիւ նախատինքներ և երբեմն չիշոցներ:

— Լաղար անդամ ասել եմ, որ գիժ ես, խելք չունիս. դու ո՛չ քեզ և ո՛չ մեզ համար ես մտածում: Աղքատ ու հպարտ. աչքերդ բացիր և լաւ տես թէ դու ինքդ ո՞վ ես, թի՛չ ես և Գօլմազօվը ո՞վ է: Գիտես, որ մեր ապրուստը նրանից է կախված, ինչպէս ուղեւաչ, այնպէս կարող է անել, կարող է մեզ հարստացնել, կարող է և քաղցած թողնել, բայց դու էլի գոռոզ ու գոռոզ: Ի՛նչ ես մտածում, որ քենթդ այդքան բարձր ես պահում: Խելքի եկ, Կատեա, տես, մէկ էլ եմ ասում, մեր վերջին օրը քեզանից է կախված . . .

Եւ այդպէս Մարիա Իվանովնան երկար նա-

խատում էր իր այդչափ: Սակայն այդչիք շարունակում էր իր յամառութիւնը: Մի օր նրա յանդգնութիւնը այնտեղ հասաւ, որ նա պատասխանեց իր ծնողի յանդիմանութեան. թէ ինքը դիտմամբ է սառն վարվում Գօլմազօվի հետ, որպէս զի վերջինը դադարի իրանց այցելելուց: Մարիա Իվանովնան փրփրեց, կատաղեց իր այդչափ այդ յանդգնութեան վրայ, բայց դարձեալ անօգուտ:

Իսկ ինչ վերաբերում է Գօլմազօվին, պէտք է ասած, որ նա սկսել էր զգուշութիւնով վարվել Կատերինա Կարլովնայի հետ, նոյն խի Մարիա Իվանովնայի բացակայութեան ժամանակ: Նա պահում էր իրան խիտ համեստ, չէր համարձակվում որ և է աւելորդ խօսք թռցնել բերանից: Դնորհով այն նուրբ խորամանկութեան, որը չատուկ է Գօլմազօվներին, նա այնպէս էր իրան ձեւացնում օրիորդի առաջ, որ իրբէ թէ սաստիկ փոշմանել է իր նախկին վարմունքի մասին, մինչդեռ ներքուստ ուրիշ տեսակ էր մտածում և ըստ անգամ չէր մոռանում իր սատանալական նպատակը: Սակայն Կատերինա Կարլովնան, որքան որ զգոյշ էր, որքան և դիտող, դարձեալ չէր կարողանում հասկանալ այդ խորամանկութիւնը և թափանցել Գօլմազօվի հոգին: Նա զգում էր, որ Գօլմազօվի յաճախ այցելութիւնը ասանց նըպատակի չէ, բայց թէ սրբան չար, որքան զգլելի էր այդ նպատակը՝ օրիորդը չ'զիտէր:

Այդպէս թէ այնպէս, հասաւ կոնցերտի երեկան: Պետք Կատեանիք ժամանակից մի ժամ

առաջ զուգվեց և իր սեպհական կառքը նստե-  
լով, եկաւ Կատերինա Կարլովնայի մօտ: Օրիորդը  
դեռ Հագնոված չէր: Գօլմազօվը խնդրեց նրան  
անչապաղ պատրաստվել, իսկ ինքը անցնելով  
միւս սենեակ, կանգնեց Հաչելու առաջ և սկսեց  
ինքն իրան նաչել ոտից մինչև գլուխ:

— Քիւ, իսկ որ շատ եմ տգեղացել... Բնչ  
անճոռնի է լինում մարդ առանց չոնքերի և  
թերթերունքների—խօսում էր նա, ուղղելով իր  
սպիտակ փոզպատը: Փարեղից բերել տուած ճարն  
էլ չի օգնում մազեր բուսնելուն, .. ասում են որ  
Վիէննայում կարող են բժշկել, Հարկատր է ան-  
պատճառ գնալ, եթէ ոչ խոշտառակութիւն է,  
կանայք ինձանից փախչում են..:

— Ե՛հէ, այ մի ուրեջ ցաւ, այս ինչ է դուրս  
գալիս քնթիս վրայ—շարունակեց նա, շօշափելով  
քնթի ծայրը, ուր գոչացել էր մի կարմիր պուշտ:  
Յաւում է, այդ լաւ նշան չի, Հարկատր է ան-  
պատճառ բժշկին ցոյց տալ...

Ներս մտաւ Կատերինա Կարլովնան և Գօլ-  
մազօվը շտապեց Հեռանալ Հաչելուց: Նրկուսը  
միասին իսկոյն և եթ թէջ խմեցին ու ճանա-  
պարհ ընկան:

Օրը արդէն մթնել էր: Բաղաքային կլուբի  
դահլիճը, ուր պիտի կաշանար կօնցերտը, լու-  
սաւորվում էր առաստաղից քարշ տուած երեք  
ահազին ճաղերով և պատերին խփած բազմաթիւ  
կանթեղներով: Օրիորդը, Գօլմազօվի ուղեկցու-  
թեամբ, բարձրացաւ ընդարձակ սանդուխտով դէ-  
պի դահլիճը: Ներկայացումը դեռ չէր սկսվել:

Հանդիսականները այս ու այն կողմ ցրլած ըզ-  
բօնում էին: Նրխատարդ վաճառականներէ մի  
խումբ նախասենեակի մի անկիւնում պատրաս-  
տած բուֆէթի առաջ, մի սեղանի շուրջը Հաւաք-  
ված՝ կոնծում էր... Խմբէ մէջ երևում էր և Սեր-  
գէջ Իվանիչը, որի հետ մենք ծանօթացանք կա-  
շարանի վրայ և որը Պետր Ստեփանիչի կառքի  
ետեկց ասաց, «Ժուլիկ, մաշեննիկ Գօլմազօվ, ես  
քօ միտքը Հասկացաչ»:

Պետր Ստեփանիչը աշխատեց դահլիճը մտ-  
նել Կատերինա Կարլովնայի հետ այնպէս, որ  
խումբը չի նկատի: Բայց այդ չճաջողից նրան:

— Օհօ, Պետօ, լոյսը քեզ տեսնողին—դօշեց  
բարձր ձայնով խմբի մէջից երեսը սահրած մի  
երխատարդ կարմրած աչքերով: Նա բաժանվե-  
լով իսկոյն խմբից, մօտեցաւ Գօլմազօվին:

— Բարեաւ Սիմօն Լաղրիչ, քէֆդ—Հար-  
ցրեց Պետր Ստեփանիչը, քիչ շփոթվելով և ա-  
րագութեամբ սեղմելով երխատարդի ձեռը:

— Լաւ եմ, քէֆ եմ անում, արթ գնանք մի  
մի կոնծենք:

— Ո՛չ, ո՛չ, ախորժակ չունիմ, չետոյ կ'գամ:

— Կնց, ո՛ր ես փախչում, կնց... տեսնեմ  
այդ ով է քեզ հետ—ասաց երխատարդը, բռնե-  
լով Գօլմազօվի թեկից, որը ուղում էր Հեռանալ:

— Օհօ, Պետօ, շնորհաւորում եմ, ինչ տե-  
ղից ես ճանկիւ այդ լուսնեակին:

Բայց Պետօն աշխատում էր խոչն տալ: Նա  
մի կերպ իր թեւը ազատելով երխատարդի ձե-  
ռից՝ շտապեց դէպի Կատերինա Կարլովնան, որը

այդ ժամանակ այնչափ Հեռու էր, որ չէր լսում նրանց խօսակցութիւնը:

—Տղերք, նոր խաբար, Գօլմաղօվը, զօջաղը նոր որս է արել—ասաց երիտասարդը, վերագառնալով և կրկին խառնովելով խմբի մէջ:

—Ո՞վ է, ո՞վ է—հարցրին միաբերան մի քաջանիւրը խմբի միջից:

—Հացի էր նմանում, բաց չէ ճանաչեցի, լուսնեակ է, լուսնեակ: Սպասեցէք մի բաժակ էլ կոնձեմ և գնամ ես էլ ծանօթանամ:

Սիմօն Լազրիչը դարտկեց մի բաժակ ևս:

—Ի՞նչուր նեղութիւն մի քաշիր, Սիմօն Լազրիչ: Գօլմաղօվը քո ասած մարդը չէ, սեխը թիւքա չէ գցել: Ես աղջկան էլ ճանաչում եմ և դեռ տեմ ընչ բան է:

—Ո՞վ է, ո՞վ է Սեբգէջ Իվանիչ— կրկինեց դարձեալ հետաքրքիր խումբը, շքապատելով Սեբգէջ Իվանիչին:

—Իրան գործակատարի աղջկին է:

—Հաշտարեխանցին, Հան, ես էլ եմ տեսել, ես էլ եմ տեսել, շատ գեղեցիկին է—ասացին միաբերան մի քանիսը:

—Գեղեցիկ լինելը գեղեցիկ է, բաց ընչ անես որ...

Եւ Սեբգէջ Իվանիչը խօսքը չաւարտելով, կրծքից մի հոգոց հանեց և գլուխը խորհրդաւոր կերպով շարժեց:

—Ինչպէս:

—Այնպէս—պատասխանեց Սեբգէջ Իվանիչը, աչքի մէկը խիւլով և շթառնքիւրը կոճեւրով:

Տուն, տեղ, ամեն օր նուէրներ, հօրը և եղբորը պաշտօն լաւ ուձիկներով:

—Փն՛Հ քո վիզը կտարվի Գօլմաղօվ, օտարներից կշտացար Հիմաջ էլ Հային ես ձեռ գցել—բացականչեց Սիմօն Լազրիչը ձեռքերի ափերը իրարու խփելով:

—Ձեմ հաւատում, ես Պօլոյօվի աղջկան ճանաչում եմ, նա շատ հպարտ և խելօք աղջիկ է: Գօլմաղօվը չի կարող նրա հետ խաղ խաղալ—մէջ մտաւ մի ուրիշը, որը մինչև այդ ժամանակ լուռ էր:

—Էհէ, երեւի դու լաւ չես ճանաչում Գօլմաղօվին—պատասխանեց թերահաւատին Սեբգէջ Իվանիչը, գլուխը շարժելով: Կա այնպիսի մարդ չէ, որ մէկը համար անօգուտ մի կոպէկ ծախի, ուր մնաց այնքան բաներ բաշխի, ինչոր բաշխում է Գոսպարի աղջկան: Տունը լցրել է հաղար տեսակ բաներով, էլի օր չի անցնում, որ մի նուէր չը տանի Հետը գնալիս:

—Ձէ, եղբայր, ես լաւ եմ ճանաչում Գօլմաղօվին, գիտեմ ինչ հոգի ունի...

Չանգալը հնչեցրին, ներկայացումը սկսվեց և ամենքը մտան դահլիճ:

Պետր Ստեփանիչը և Կատերինա Կարլովնան նստած էին առաջին կարգում: Օրերոջը հագնոված էր թէև ոչ շքեղ, բաց բաւական նուրբ ճաշակով: Բաղմաթիւ լապտերների լուսաւորութեան ներքոյ նրա կրծքի վրայ պոպոզում էր ոսկեայ մեղալիւնի բրիլանտը:

Դահլիճը լեքն էր հանդիսականներով: Այս

և այն կողմերէց մի քանի երիտասարդներ և  
 կանաչը ներկայացումը մտացած՝ իրանց Հեռա-  
 դիտակները ուղղել էին անձանօթ օրերդի վրայ:  
 Պետր Ստեփաննչը այդ տեսնում էր և ինքնաբաշ-  
 ւահանութեամբ ժպտում: Իուրեք նա պարծենում  
 էր, որ ինքը այդ երեկոյ շատ երիտասարդների  
 նախանձի առարկայ է: Նա ստեպ, ստեպ թեք-  
 վում էր օրերդի ահանջին և շշնջալով խօսում:  
 Օրերդը չէր խօսում, նա ուշադրութիւնով լսում  
 էր երաժշտութիւնը. միայն երբեմն Պետր Ստե-  
 փաննչի Հարցերին պատասխանում էր գլխի շար-  
 փումով «այո» կամ «ոչ» և ուրիշ ոչինչ:

Պերճապէս կօնցերտը աւարտվեց, Հանդի-  
 սականները ցրվեցին և օրերդը դուրս եկաւ:  
 Իօրմագօլը հետևում էր նրան իր գլխարկը  
 ձեռում շուռ տալով և չորս կողմը անդադար  
 չաղթական հայեացքներ ձգելով: Նրա դժգոյս  
 դէմքը տարախ էր և փոքրիկ աչքերի սևագոյն  
 բերբերը արագութեամբ խաղում էին փայլելով:  
 Կառքը փողոցն դռանը սպասում էր. նա օրերդի  
 հետ նստելով, շշնջաց կառապանի ականջին և  
 կառքը մի քայլում սրացաւ:

— Տնը, տնը, բայց տեսնենք երբ ես փըխ-  
 սելու կերածդ—ասաց կառքի ետեկց մի մարդ,  
 որը ամբողջ ժամանակ կրօքի դռներն մօտ թաւ-  
 գնված, իր սուր աչքերով հետևում էր մեր հեռ-  
 քաններին:

— Իսկ Սերդէյ Իվաննչին էր:

VIII



Իշերեց բաւական անցել էր: Երկինքը  
 պարզ էր: Լուսին չկար: Նաւթային լապտերները  
 թոյլ կերպով լուսաւորում էին փողոցները:

— Ո՞ր էնք գնում, կարծեմ մեք տունը մը-  
 նաց այն կողմ—հարցրեց շանկարձ օրեսուրբ, երբ  
 տեսաւ որ կնոքը մտաւ մի բարձրովին իրան ան-  
 ծանօթ փողոց:

— Սեր տուն—պատասխանեց Իօրմագօլը  
 համառօտ:

— Ինձ մեր տուն հասցեք, յետոյ դուք  
 գնացէք:

— Քեզ էլ հետո տանում եմ:

— Ես ինչ գործ ունիմ ձեք տանը:

— Պէտք է միասին ընթրենք:

— Ենորհակաւ եմ, Պետր Ստեփաննչ, ախոր-  
 փակ չունիմ, խնդրեմ ինձ մեր տուն ճանապարհ  
 դե՛ք:

— Անկարելի է:

— Ո՞չ, ո՞չ, ուշ է, մացրս անբուն սպասում է  
 ինձ...

— Եւստ Կվեռճայնենք ընթրեք և խեղճ  
 կուրեկցեմ ձեզ ձեր տուն:

—Յողնած եմ, Պետր Ստեփանիչ, քունս  
տանում է թոյլ տուէք. մի ուրիշ անգամ ձեր  
մօտ հիւր կ'գամ այսօրվայ փոխարէն—շարու-  
նակեց օրհորդը, այս անգամ աղերսալի ձայնով:

—Աչքիս վրայ տեղ ունէք ամեն օր, բայց  
աշխի՛ իզուր էք հակառակում, անպատճառ տա-  
նելու եմ—պատասխանեց Գօլմաղօլը վճռաբար:

Մինչդեռ Կատերինա Կարլովնան հակառա-  
կում էր՝ կառքը հատու և կանգնեց Գօլմաղօլի  
տան դռներէ առաջ: Մի քանի րոպէ օրհորդը  
չէր համաձայնում իջնել կառքից: Պետր Ստե-  
փանիչը չորհորում էր նրան աղաչելով, խնդրե-  
լով, սակայն իզուր. օրհորդը չամառութեամբ  
կպել էր կառքին և պուկ չէր գալիս: Գօլմաղօլի  
համբերութիւնը հասաւ իր վերջնակէտին, նա  
բեղերը հոժոտելով գոպեց իրան և սկսեց կրկին  
չորհորել օրհորդին: Օրհորդը նոյնպէս դուրս եկաւ  
համբերութիւնից, նա բարկացած հրամայեց կա-  
ռապանին կառքը բռնել, բայց կառապանը մի  
շարժում անգամ չ'արաւ օրհորդի հրամանը կա-  
տարելու: Գօլմաղօլին վերաւորեց օրհորդի վար-  
մունքը, նրա ինքնասիրութեան նեղ զգացմունք-  
ները բորբոքիւցին: Փողոցում տիրում էր խրին  
լուծիւն: Գօլմաղօլը նայեց իր չորս կողմը և  
բացի կառապանից չ'տեսաւ ոչ մի մարդ, ու վիպ  
լինէր այդ տեսարանին: Կառապանը առոյգ ձիւրի  
սանձը սեղմած ձեռքում, լուռ ու մունջ մեխված  
էր իր տեղում. միայն երբեմն սանձը շարժելով  
նա հարուածում էր այս կամ այն ձիուն և իր  
քնաթաթախ ձայնով կրկնում «տուբրր, ստօօ.օ.օյ

պրրրօղիւնատակա՞...: Գօլմաղօլը մէկ ոտը դրաւ  
կառքի վրայ և երկու ձեռքերով բռնելով օրհորդի  
մէջքից, դրկեց և մի վայրկեանում ցած բերաւ  
ոյժով:

Երկու եւք կար Կատերինա Կարլովնայի ա-  
ռաջ: Նա կամ պիտի հնազանդվէր կամ պիտի  
փախչէր, ուշիւ կերպ չէր կարող պատուել Գօլմա-  
ղօլի ձեռքից: Վախենալով, որ մի գուցէ վերջին  
միջոցը ազմիպի լինի—ստիպելով Գօլմաղօլին  
աւելի խիտ միջոցի դիմելու,—օրհորդը վճռեց  
հնազանդվել վերջինի կամակորուժեան:

Նրանք մտան ներս և մի ընդարձակ սան-  
դուլտով բարձրացան վերև: Պետր Ստեփանիչը  
պատշգամբից ուղղակի օրհորդին առաջնորդեց մի  
ոչ այնքան ընդարձակ սենեակի: Իսկ ինքը մի րոպէ  
բաժանվելով նրանից, իր սպասաւորներին ինչոր  
պատվերներ տուաւ և կրկին վերադարձաւ:

Սենեակը նմանում էր ննջարանի: Առաստա-  
ղից քարշ արած փոքրիկ կուրբակ կանթիղը լու-  
ւսօրում էր նրա մոխրագոյն թղթով ծածկված  
պատերը, ուր կպցրած էին մի քանի մեծ և փոքր  
պատկերներ կասկածելի բովանդակութիւնով: Մի  
անիկնում դրած էր մի բարձր մահճակալ փա-  
փուկ անկողնով, միտում գտնվում էր մի ահա-  
գին հայելի, երրորդում մի կուրբակ սեղան, իսկ  
չորրորդում մարմարոնեա լուացարանը իր բոլոր  
պատկանելիքներով: Պետր Ստեփանիչը շտապեց  
նախազգուշացնելու, որ դահլիճի և միւս սենե-  
կաների դռները ու պատուհանները նոր են ներ-  
կուած, այնպէս որ ներկի հոտից անկարելի է

աջնուեղ մտնել և Հրաւրեց օրերդին ներս։  
Մի սառսուռ անցաւ Կատերինա Կարլովնայե  
մարմնով, երբ նա Հայեացք ձգեց սենեակի կա՛հ  
կարասիքի վրայ։ Նա ախամաց սկսեց գողալ, գրե-  
թէ անդադարաբար մօտեցաւ մէջ տեղ դրած քա-  
ռանկիւնի սեղանին և նստեց նրա շուրջը եզոզ  
աթոռներեց մէկի վրայ։

Մի քանի րոպէո՞ւմ սպասաւորները սեղանի  
երեսը ծածկեցին սպիտակ մաքուր սիւնօցով և  
մէջ տեղ եկան մի քանի տեսակ ուսուցիչներ  
և ըմպելիքներ։ Գոլմազովը անմեջապէս իրան  
Համար մի բաժակ օղի ամեց, խի օրերդի Հա-  
մար մի ուրեջ, ինչոր արտասահմանեան, ըմպելիք։

— Խմեցէք, շատ քաղցը խմելք է, վնաս չե  
տալ ձեր սրտին—ասաց նա, բաժակը դնելով օրերդ-  
դի առաջ։ Օրերդը բաժակի ծայրը կոյցրեց շը-  
թունքներին և մի քիչ կում անելով, վայր դրաւ։

— Ձեր կենացը Կատերինա Կարլովնա—շա-  
րունակեց Գոլմազովը և օդը բաժակը զարկելով  
օրերդի բաժակին, խմեց մինչև կէսը։

Օրերդը, երբև շնորհակալութիւն, գլուխը  
շարժեց, առանց մի խօսք ասելու։ Գոլմազովը  
սկսեց ընթրել, օրերդը չէր ուտում, բայց երբ  
Գոլմազովը նրան ստիպեց նա մի երկու կտոր բան  
դրաւ բերանը և զարձեալ չեա քաշկելով սկսեց  
երկիւղածութեամբ նայել իր շորս կողմը։ Ինչպէս  
օրերդիներեց Հալածված մի եղջերու, նրան  
թուօմ էր թէ անտառի խորքում ընկել է մե  
աջնայիս նեղ տեղ, սրանդից աղաաւելը շատ  
գժվարին է։ Անհանգիստ դէմքով և գողտղալով

նա իր Հայեացքը կամ ձգում էր սենեակի պա-  
տերին կամ Գոլմազովի վրայ։

— Ինչո՞ւ չէք ուտում Կատերինա Կարլովնա,  
կրկնում էր Գոլմազովը անդադար։

— Ախորժակ չունիմ, խնդրե՛մ Պետր Ստե-  
փանիչ ինձ շուտ ճանապարհ դրէք։

— Մե շտապէք, դեռ շատ վաղէ, տաներկու  
ժամը չե լրացել։ Գոնէ, Կատերինա Կարլովնա,  
մի երկու բաժակ այս քաղցը ըմպելիքեց խմեցէք,  
շատ Համեղ բան է, մի փորձեցէք։

Գոլմազովը կրկին լցրեց մի բաժակ և դրաւ  
օրերդի առաջ։ Օրերդը գլուխը շուտ տատաւ և  
բաժակը Հեռացրեց իրանից։

— Ինչո՞ւ էք աղպէս անում Կատերինա  
Կարլովնա, դուք ինձ վերաւորում էք։

— Մաքս խեղճը Հիմաց սպասում է—պա-  
տասխանեց օրերդը, փորձելով տեղից բարձրանալ։

— Ո՞ւր էք գնում, սպասեցէք—ասաց Գոլ-  
մազովը, բռնելով նրա թևից, որ օրերդը չճար-  
ձրանայ տեղից։ Օրերդը ախամաց Հնարանդիեց  
նրա կամքին։ Պետր Ստեփանիչը լիք բաժակը  
կրկին մօտեցրեց և ասաց։

— Եթէ այս անգամ ևս մերժէք իմ խոնարհ  
խնդիրը և մինչև չտառակը չի դարտիէք այս բա-  
ժակը, խմեցէք որ դուք ինձ մինչև սրտիս խորքը  
վերաւորած կ'ըլենէք։ Վերցրէք, Կատերինա Կար-  
լովնա և սրտով խմեցէք, դա ձեր եղբօր, Սրանմ  
Կարլիչի կենացն է։ Գոլմազովը աչո ասելով, իրան  
Համար ևս մի բաժակ գինի ամեց և առաւ ձեռ-  
քը, սպասելով օրերդին։ Կատերինա Կարլովնան

Ճարտհատեալ առաւ բաժակը և դարձեալ մի քիչ կում անելով, տեղը դրաւ:

— Ես դարմանում եմ թէ դուք ինչ տեսակ քարտիրան էք, որ ձեր միակ եղբօր կենացն էլ չէք կամում—ասաց Գօլմաղօվը և նոյնպէս լեք բաժակը դրաւ սեղանի վրայ: Օրիորդը ոչինչ չբպատասխանեց: Իսկ Պետր Ստեփանիչը շարունակեց խօսել, փոքր առ փոքր սքեւորվելով: Արովհետեւ խօսքը կատերինա Կարլովնայի եղբօր մասին էր, այդ պատճառով Գօլմաղօվը մտադիր լինելով մի կերպ գրաւել օրիորդի ուշադրութիւնը օրէկ խօսակցութիւնով—սկսեց Հասկացնել օրիորդին, թէ որքան թանդ և քաղցր բան է մարդու համար եղբայրը: Նա ասաց, թէ քաղցաւոր է այն մարդը, որը եղբայր ունի և հետզհետէ խօսքը վերափոխելով իրան (դա նրա սաստիկ ցանկութիւնն էր) աւելացրեց, որ ինքը նախանձում է եղբայր ունեցողներին: Այնուհետեւ նա դարձեալ սկսեց դանդատել Կատերինա Կարլովնային իր դրութեան վրայ: Նա նկարագրեց իր վիճակը ամենատխուր գոյնեցով, աշխատելով համոզել օրիորդին, թէ որքան ինքը անբաղդ մարդ է և ինչպէս ճակատագիրը անգթութեամբ հալածում է իրան: Կրկնեց նոյնպէս թէ ինքը համոզված է թէ կարող է բաղաւորվել միայն այն ժամանակ, երբ իր կեանքը կապված կը տեսնի մի սիրեցեալ արարածի հետ: որը կարող լինէր մասնակից լինել նրա դառնութիւններին և ուրախութիւններին: Նա աւելացրեց թէ հէնց իր դժբաղդութիւնը կայանում է նրանում, որ մինչև օրս դեռ չի գտնում

մի այնպիսի արարած, իսկ նա, որի վրայ չոչս ունի, շատ անգութ է վերաբերվում դէպի իրան:

Եւ վերջին միտքը յայտնելու ժամանակ, Գօլմաղօվը իր վախաշտ աչքերը շառեց օրիորդի երեսին, որ տեսնի թէ գոնէ այս անգամ նրա վրայ գոհացուցիչ աղոյցութիւն արին իր խօսքերը թէ ոչ:

Օրիորդը թէև ուշադրութեամբ չէր լսում, բայց հասկացաւ թէ Գօլմաղօվը ում մասին է ակնարկում, հասկացաւ և ոչինչ չխօսեց:

— Երբ որ գլուխս խառն է լինում գործելով, էլի մի կերպ օրս անցնում է, բայց երբ գործերից ազատվելով գալիս եմ տուն, կարծես թէ մի ինչոր ծանրութիւն է նստում օրտես վրայ: Մտիկ եմ անում չորս կողմ ոչինչ մխիթարութիւն, ոչինչ թեթեւութիւն չեմ գտնում: Ցանա պատերը կարծես թէ ինձ թշնամի լինեն, անկողինս ցեցի պէս ինձ ուտում է: Այն, Կատերինա Կարլովնա, չկայ մէկը որ թեթեւացնի իմ հոգին, չկայ մէկը, որ կարողանայ իր քաղցր Հաշկացքներով, իր դուրեկան խօսակցութիւնով մխիթարել իմ վշտացած սիրտը: Ճարտհատեալ պառկում եմ անկողին և սենեակի առաստաղին նայում: Կհատատաք, որ շատ անգամ փոքրեկ երեխայի պէս լաց եմ լինում իմ սենեակում: Լաց եմ լինում և չեսոչ շրեբտ Հագնում ու դուրս փախչում, ինչպէս մի բանտից: Քնում եմ դուրս, աչքտեղ միևնոյն տաղտկութիւնը, միևնոյն գառնութիւնը: Թէ մինչև երբ պիտի շարունակվի իմ այդ անտանեցի դրութիւնը, ինքս էլ չգիտեմ: Բայց Կատերինա Կարլովնա, ես այժմ զգում եմ թէ կայ մէկը, որը կարող է վերջ

դնել իմ ցաւերին և այդ մէկը...էհ...

Եւ Գօլմաղօվի կրծքեց կրկին գուրտ թռաւ մի կեղծ հառաչանք:

Արդէն անցել էր բաւական ժամանակ: Կատերինա Կարլովնան, օգտովելով Գօլմաղօվի բուպէական լուսթիւնով, բարձրացաւ իր տեղեց: — Սպասէցէք — ստաց Գօլմաղօվը, կրկին բռնելով նրա թևից և ձգելով դէպի աթոռը:

— Ո՛չ, բաւական է ինչքան պահեցիք, թոյլ տուէք:

— Մե քիչ էլ նստեցէք խնդրեմ:

— Բայց օրիորդը այս անգամ չ'համաձայնվեց նստելու: Նա երեսը շուռ տուաւ և վճռողական քայլերով դիմեց սենեակի դռներին:

— Ո՛ր էք փախչում — բացակայեց Գօլմաղօվը և վազելով օրիորդի ետևից, խլեց նրա ձեռքը, որ մօտենում էր դռներին:

— Հերքեք է, Պետր Ստեփանիչ, զնանք:

— Հերքեք է, հերքեք չէ, այ՛ն հերքեք է:

Եւ այդ անորոշ խօսքերը արտասանելով, Գօլմաղօվը դռները փակեց, բանալին շուռ տուաւ և կողպեց:

— Տեսնում էք, հա, հա, հա — գոչեց նա, չարախնդու թեամբ ծիծաղելով: Յետոյ բանալին ցոյց տալով օրիորդին, ձգեց գրպանը: Գօլմաղօվի ծիծաղը օրիորդի վրայ մի վերին աստիճանի զգվելի ապաստում թիւն արաւ: Նա այդ սատանայական ծիծաղի մէջ զգաց մի ինչոր չարամիտ խնդու թիւն: Մե քանի վաղրիկան օրիորդը ափշած նստում էր: Պետր Ստեփանիչը նոյնպէս նստում էր

օրիորդի երեսին և այդ ծանր նայուածքը արտաշատում էր նրա ներքին զաղբելի ձգտումը: Նրա բարակ և սեղմված շրթունքները վրայ խաղաց մի չանդուղն, մի լիտի Ժպետ և այդ վաղրիկանին Գօլմաղօվի քրքրած և մաշված դէմքը ընդունեց դարձելի արտայայտութիւն: Կատերինա Կարլովնան սարսափեց այդ արտայայտութիւնից: Մե տենդաչին ստտիկ դողոց սկսեց ցնցել նրա ամբողջ մարմինը ստեց մինչև դիտի մաղերի ծալրերը: Այդ դրութեան մէջ նա նմանում էր փօքրեկ դառնի սովածութիւնից կատրած գաջի առաջ:

— Ի սէր Աստուծոյ, Պետր Ստեփանիչ, բանց արեք — ստաց վերջապէս օրիորդը չուսահատ ձայնով:

Գօլմաղօվը նայեց նրան և ստաց.

— Ձրի չեմ բաց անիլ...

— Ի՞նչ էք կամենում — Հարցրեց օրիորդը բողբոջին գուժութիւնով:

— Ի՞նչ եմ ուզում, հը՛մ, ոչինչ...

Գօլմաղօվը չ'կարողացաւ աւարտել իր խօսքերը: Մե ինչոր ներքին ոյժ այդ վաղրիկանին կաշկանդեց նրա լեզուն: Նա մե քանի վաղրիկան գլուխը թեքեց կրծքին: Բայց չանկարծ կրկին բարձրացրեց գլուխը և ձեռքերը տարածելով առաջ, մե ոտումով թռաւ դէպի օրիորդը: Վերջինը աւազու թեամբ չետ մղվեց և մէջքը տուաւ պատին, կարծես թէ պաշտպանողական դիրք բռնելով: Գօլմաղօվը մե ոտում և սարաւ և այս անգամ նրա տարածված կռները ունեւելքի պէս ձգտեցին ճանկելու պատի տակ սեղմված օրիորդին:

— Էնուն, եթէ ոչ...

Գօլմաղօվի կուրծքը ստացաւ երկու ձեռքերի մի սաստիկ հարուած և նրա մարմինը մի քանի քաչլ չետ մղվեց: Մի վաչրկեանում նրա փոքրիկ սատանաչական աչքերը արբիտով լցվեցին, ճակատի կնճիռները բացվեցին, տափարակ կուրծքը դուրս ցցվեց և նա կատաղի առիւծի նման կրկին առաջ թռաւ, բացականչելով յբաւական է ինչքան համբերեցի:

Բարձրացաւ մի զարհուրելի ճիչ, մի ճիչ, որը միայն չուսահաւոված կիճքից կարող էր դուրս թռչել: Աչնուհետև սենեակում տիբեց անթափանցելի խաւար...

IX



նցել էր մի ամիս: Պետր Ստեփանիչ Գօլմաղօվը մի առաւօտ խալաթը հագած նստած էր իր առանձնատեղեակում, դէպքի փոզոց նաչոզ պատահաններից մէկի մօտ: Նա տխուր էր: Նրա կնճոված ճակատը, սեղմված շրթունքները արտաչաչտում էին մի ներքին անհանդուտ թիւն: Նրբեմն աջի ձեռքի ատիով նա սեղմում էր ճակատը, գլուխը թեքում դէպքի կուրծքը և թաղվում խորը մտածողութեան մէջ: Աչք տեւում էր մի քանի րոպէ: Յետոյ նա մի ծանր հառաչանք արձակելով և շրթունքները կոծոտելով, կրկին գլուխը բարձրացնում էր և իր մուրը հաշեացքը պատահանի պալակներին միջով ձգում հեռաւոր տեղեր:

Պարզ էր, որ այդ ժամանակ Պետր Ստեփանիչին մի միտք չարաչար տանջում էր: Ժամանակ ժամանակ սենեակի դռները զգուշութեամբ բացվում էին և մի երեսասարդական մաքուր տանրած գլուխ ներս էր ցցվում և նորն վաչրկեանին կրկին անհետանում: Իսկ Պետր Ստեփանիչի սպասաւորն էր: Սպասաւորը անդադար նալում էր, որ տեմնի թէ աղան դարդիկ է թէչի բաժակը, որ վաղուց սառել էր սեղանի վրայ: Բայց աղան ուշաբարու-

Թիւն չէր դարձնում ոչ թէյի և ոչ էլ ծառայի վրայ: Նա խորատու դիմած էր իր մտածմունքի մէջ: Վերջապէս ծառան մի անգամ ևս գլուխը ներս խռելով և տեսնելով, որ բաժակը դեռ լիքն է, համարձակվեց ստելու:

— Ադա, չաչը սառել է:

— Կորիւր, գնա—գոռաց արան: Ծառան անհետացաւ, դուռը փակելով:

Պետր Ստեփանիչը աջ ձեռք կրկին խփեց ճակատին, բարձրացաւ տեղից և սկսեց անհաստատ բալլերով շրջել սենեակի երկարութիւնով:

— Յը, Աձ, սատանան գիտէ, դժվար խնդիր է: Ետտ որդեացթներից եմ պրծել, շատ անգամ եմ աչդպիտի դրութեան մէջ ընկել և աղապփել, բայց այս անգամ բաղդը խռովել է ինձանից, նա ինձ չի յաջողում մի ելք գտնելու: Իսկ գտնել մի ելք, հնարել մի մեծոց աչդ դրութիւնից դուրս գալու, աչդ ցաւից սղատվելու: Համար, անշուշտ հարկաւոր է: Հարկաւոր է և այն էլ շատ շուտ, այս քանի օրերս եթէ ոչ... եթէ ոչ...

Պետր Ստեփանիչը ձեռքերը տարածեց աջ ու ձախ օդի մէջ և մի քանի վաջրկեան նաչեց իր հոգաթափիների ծաղրերին:

— Աչն, կատարեալ, կատարեալ խաչտառաւոր թիւն—շարունակեց նա, կրկին շրջելով: Նրէկ ևս դարձեալ այնտեղ էի, ճշմարիտ որ նրա դուր թիւնն էլ խղճալի է: Աղորմելին այն գիշերովանից դէս ինչպէս է փոխուել, որքան է մաշվել և դեղնել հոգսից: Ինչո՞ւ: Հը՛մ, ինչո՞ւ, այ՛ չիմար հարց... ինչո՞ւ: Աչսօր թէ վաղը կ'պարզվին բաները և

այն ժամանակ նա փչացաւ, կենդանի թաղվեց, ահա՛ ինչո՞ւ: Իսկ Մարիա Իվանովնան... Հը՛մ... միամիտ կին: Նա դեռ ոչնչ տեղեկութիւն չուներ, կարծում է թէ իր աղջկը մտել է, հիւանդ է և ուրեշ ոչնչ: Ի՛նչպէս չէ. մատաղ կանկեր եթէ աչդպէս լինէր: Յանցաւ պառաւը դեռ ուրախ է, դեռ հաւատացած, է թէ պիտի դաչ մի երեկոց, երբ ես նրա աղջկաց հետ ձեռ ձեռի տուած կը կանդնեմ եկեղեցւոյ սեղանի առաջ: Հը՛մ, աչդ էր պակասում Գօլմապօլին—լինել մի չնչին, անչաշտ գործակատարի փեսայ: Ի՛նչ կատնն ինձ տեսնողները, ինչպէս կ'նային ինձ վրայ այս քաղաքում: Չէ, դա ցնորք է, Մարիա Իվանովնա: Ի՛նչ փառք Աստուծոյ, որ Գօլմապօլը մինչև այն աստիճան չի չիմարացել, ինչպէս կարծում ես դու, թեթեամիտ Հաշտարխանցի մանա:

— Նրէկ ինքը օրիորդը ևս առաջին անգամ անկարկութիւն արաւ, արտասոււրը աչքերին: Աղորմելի, միամիտ արարած, ատում է որ թէ և ինձ չէ սիրում, բայց ստիպված է, կեղաք ծածկելու համար, ինձ վրայ պաակվելու: Միծաղելի խօսք, ինձ չէ սիրում, ինձ, Պետր Ստեփանիչ Գօլմապօլին և մի, մի... Կարլ Մարիլէ Պօպօլի աղջկը, հը՛ հը՛, հը՛ հը՛: Աձ, ես քեզ շատ եմ սիրում Կատերինա Կարլովնա, և կարօտել եմ աչժմ, նա մանաւանդ աչժմ: Ինձ հարկաւոր էր միայն չաղթել քո հայրատութիւնը և չաղեցնել իմ ունեցած ծարաւ: Աչժմ ես միայն խղճում եմ քեզ, խղճում եմ, որովհետեւ, էհ ինչ և իցէ, դու էլ մարդ ես, քո ծնողներդ էլ սիրա ունին: Բայց նախ քան դու և

քո ճնողներդ, ես աչքի առաջ ունիմ իմ անունս, իմ պատիւս: Ես կարող եմ քաղաքի բերանում մի մատ մեկը դառնալ, արդէն բամբասանքները աղալիւ են: Սերգէյ Իվանիչը, այդ անպիտանը, որ երեւիս Հազար տեսակ կեղծաւորութիւններ է անում, բարեկամ է ձեացնում իրան, Հէնց նա ինքն է ամենեկն առաջ սկսել լուրեր տարածել ինձ նախանձելուց: Ատենք թէ այդ ոչինչ, ես բամբասանքներից շատ էլ վախեցողը չեմ, բայց կոչ մի ուրիշ բան, որը աւելի նշանաւոր է: Սթէ այժմեանից այդ գործի առաջը չ'կապեմ, վաղը կամ միւս օրը ամեն ինչ կը պարզվի և բանը կ'հասնի միջևե: դատաստան: Այն ժամանակ ես կամայ, ահամայ ստիպված կ'ընենմ կապել իմ կեանքը Կարլ Մարկիչի աղջկայ Հետ: Կարլ Մարկիչը, օձ, Կարլ Մարկիչը որոշեանքն զրա՞ծ ծոցում պատրաստ Հաշտարխանցի է, կարող է ինձ նեղ տեղ ձգել... Ի՞նչպէս ազատվիւ, տէր Ատուած, ինչպէս:

Եւ Պետր Ստեփանիչը կրկին նստելով աթոռի վրայ, սկսեց անդադար հառաչանքներ արձակել կրճեքից: Նա քառօրդ ժամու չափ նստած մտածեց, գլուխը արաքացրեց, Հարիւր տեսակ ճրագիրներ խորհեց, բայց առանց որեէ բաւարար Հետեանքի: Վերջապէս նա մտաբերեց թէչը և մօտենալով տեղանին, վերցրեց բաժակը և միանգամից դարդկեց ինչպէս սառը ջուր: Նա հրամայեց ծառային բերել էրկրորդ բաժակը, իսկ ինքը ծխախոտը վառելով, կրկին կանգնեց լուսամտի առաջ և սկսեց նայել դէպի դուրս:

Լուսամտուը նայում էր դէպի արևելեան

կողմը, ուր գտնվում է ու բաղաքը: Իրմապօվը ծխում էր և անթարթ աչքերով նայում Հեռաւոր Հօրեղանին, որը մթնել էր նաւթային գործարաններից բարձրացող թանձր ծխով: Յանկարծ, ու՛մ բաղր, նրա գլխում ծագեց մի միտք: Նրա դէմքը փոխվեց, աչքերը փայլեցին և ճակատի կեճիւնները մի վաչրկեանում բացվեցին: Պետր Ստեփանիչը արագութեամբ մօտեցաւ սեղանին, վերցրեց գրեչը և մի կտոր թղթի վրայ մի բանի տող բան գրելով, շտապով գրաւ ծրարի մէջը: Նոյն վայրկեանին, երբ նա ծրարի հասցէն գրում էր, ներս մտաւ սպասաւորը թէչի մատուցարանը ձեռին:

— Այս նամակը առանց ըստէ ուշացնելու ուղարկել գործարան:

Սպասաւորը անհետացաւ: Պետր Ստեփանիչը անմեղապէս թէչի բաժակը դարդկեց, խալաթը հանեց, շորերը հագաւ և դուրս եկաւ փողոց:

Երկու ժամ չ'անցած նա կրկին վերադարձաւ յոգնած և շունչը հազու հող քաշելով:

— Չի եկել — Հարցրեց նա սպասաւորին նախասենեակում:

— Ո՛չ:

Պետր Ստեփանիչի դէմքը արտայայտեց նրա ներքին անհամբերութիւնը: Նա մտաւ իր առանձնասենեակը, կրկին հանեց շորերը, խալաթը հագաւ և թաղվեց բաղնիքաթոռի մէջը: Գառորդ ժամից չետոյ ներս մտաւ սպասաւորը:

— Եկել է, կ'հրամայէք ներս թողնել:

— Այս վաչրկեանին:

Պետր Ստեփանիչը բեղերը և միւսքը շփեց,

աւելի խորը թաղիւնով բազիլաթուռն մէջ: Նա կը դէմքին խաղաղ և Հանդիստ արտաշայտու թիւն տուաւ:

Պահները զգուշութեամբ բացվիցին և ներս մտաւ մի միջնահասակ թխահար երեսասարդ, սրեց կողիցն սեներակն մէջ տարածվեց նաւթային սուր Հոտ: Երեսասարդը Հաղած ունէր մոխրագոյն, բաց նաւթային թանձր մուրից կը բնական գոյնից զրիւտած, մի կարճ պիթի և նոյն գոյնի նեղ անդրվարտիկ, որը մինչև ծնկերը թաղված էր կեղտոտ կոշիկներէ կրկար անկարուրդի մէջ: Նա կլինէր մօտ քսանհինգ տարեկան: Չնայելով, որ երեսասարդի դէմքը կեղտոտված էր սև մուրով, բաց և աչնպէս նրա շագանակագոյն խոշոր աչքերը, երեսն նուրբ դժագործութիւնը արտաշայտում էին իրանց բնական նուրբ գեղեցկութիւնը: Երեսասարդը գլուխ տուաւ Պետր Ստեփանիչին և ձեռքերը կողիւրքին քարշ անելով, արձանացաւ դռներին մօտ:

— Առաջ եկ նոտիւր, — ասաց Վոլմազովը, գլուխը ձգելով բազիլաթուռն մէջքին և ձեռով ցոյց տալով մի աթոռ:

Երեսասարդը չ'Համարձակվեց նոտելու: Նա երկրորդ անգամ գլուխ տուաւ և դարձեալ բնականութեց իր նախկին տեղում: Վոլմազովը կրկնեց իր առաջարկութիւնը, այս անգամ աւելի քաղաքավարի ձևով: Երեսասարդը սմայելով ու քաշվելով մօտեցաւ և դղակը ձեռին մի կողքով նստեց աթոռի վրայ:

— Հը'մ, Սմբատ ասիր տեսներ քիչ նոր բան

կաջ — Հարցրեց Պետր Ստեփանիչը, մի նոր ծխախոտ վառելով:

— Ձեր առողջութիւնը — պատասխանեց Սմբատը գլուխը բարձրացնելով: Նրա ձայնը խիստ դուրեկան էր:

— Այո՞ր նաւթ ստացել էք Բալախանուց:

— Այո:

— Ո՞վ է ընդունել:

— Կարլ Մարկիչը:

— Հա, թիչ է անում Կարլը, Լմէ է, ուրմի է:

— Լա է, ուրախ է:

— Հը'մ... այդպէս, ուրիշ թիչ կաջ, գործարանը բանեւմ է:

— Այո, Հէից առաջին կաթսաները նոր էինք սկսել դարակելու, երբ ձեր Հրամանոց նամակը ստացայ և խիտն ձեռնտելով, ճանապարհ ընկայ:

— Ենաս լա ես արեւ, շամա լա ես արեւ:

Պետր Ստեփանիչը չաջանի չէր ինչու, „շատ“ բառը երկու անգամ ևս արտասանեց ձգձգելով:

— Գիտես թիչ է Սմբատ. ես քեզ մի գործի Համար եմ կանչել, որը միւսն քեզ է վերաբերում:

— Հրամայեցե՞ք — ապաց կրօնասարդը դարձանալով: Պետր Ստեփանիչի խօսքերը նրան մի փոքր վախեցրին: „Ձեռնի թիչ բանս բուրթ է, ինձ ուզում է դուրս անել“, մտածեց նա խիտն:

— Գիտես թիչ է Սմբատ, գու վաղուց ինձ խնդրել ես, որ ռոճիկդ աւելացնեմ, աչնպէս չէ:

— Այո:

— Եւ ես խօսք եմ տուել, բաց մինչև օրս չեմ կատարել իմ խօսքը:

— Այն:  
 — Գու ընտանիք ունին:  
 — Հայր, մայր և երկու քոյր:  
 — Ինչամեղ են:  
 — Շուշուում:  
 — Հը՛մ, ինքդ խօս՛մ պտակված չեմ:  
 — Ո՛չ:  
 — Նշանված ես:  
 — Ո՛չ:  
 — Հը՛մ...տրեմն էլի մի ահագին բեռը կայ մէջքիդ վրայ—ասաց Պետ. Ստեփանիչը կարեկցաբար:  
 — Այն, ես էլ Հէնց այդ պատճառով էի ձեր հրամանոց խնդրել ռոճիկի աւելացնելու:  
 — Այն, գիտե՛մ որ ամսական քառասուն մանէթով չի կարելի կառուարել մի այդպիսի մեծ ընտանիք: Բայց գիտե՛ն, Սմբատ, ինչու չե՛մ մինչև այժմ քս խնդիրը կատարել:  
 — Ո՛չ չ՛գիտե՛մ:  
 — Որովհետև քեզ համար ես ուրիշ բան եմ մտածում:  
 — Սմբատը ոտից ցզլուխ լողողութիւն դառաւ:  
 — Ես ուզում եմ այնպէս անել, որ դու ժամանակով մի օրինաւոր մարդ դառնաս և ոչ թէ ամսական Հինգ կամ տասն մանէթով ռոճիկդ աւելացնել:  
 — Շատ շնորհակալ եմ, Պետր Ստեփանիչ, շատ շնորհակալ եմ:  
 Երեսասարգը բարձրացաւ տեղից, գլուխ տուաւ Գոլմազովին և կրկին նստեց:

— Թէև երբեմն դու էլ պոչդ բարձրացնում ես, բայց, Սմբատ, դու վատ տղայ չես: Չորս տարի է, որ դու ինձ մօտ ծառայում ես և ես մի վատութիւն չեմ տեսել քեզանից: Ես էլ ք հարկէ մարդ եմ, աչքեր ունիմ և տեսնում եմ թէ Հիմաց հասել է ժամանակը, որ քս ծառայութեան փոխարէն մի լաւութիւն անեմ:  
 Երեսասարգը կրկին բարձրացաւ տեղից և կրկին գլուխ տուաւ: Նրա սիրտը սկսեց ուրախութիւնից սաստիկ բաբախել:  
 — Ինչպէս կարը Մարկիչին եմ տուել, քեզ համար էլ ուզում եմ մի ընտկարան պատրաստել ծովեղջուր գանուող տանս մէջ: Գու, եթէ ուզում ես, լաւ կանես որ գրես Շուշի հօրդ, որ ընտանիքը հաւաքի բերի այտեղ քեզ հետ, միասին ապրելու: Եւ մեկէլ յայտնիր, գրիր Սմբատ, թէ ես Պետր Ստեփանիչ Գոլմազովս, ուզում եմ քեզ իմ ձեռքով պսակել:  
 Երեսասարգի ահանջները ամաչելուց կարմրեցին և նա գլուխը քարշ ձգեց:  
 — Հը՛մ, Սմբատ ուզում ես պսակելել, թէ ոչ:  
 — Ո՛չ, Պետր Ստեփանիչ — պատասխանեց Սմբատը, ճակատի տակից ամօթխածութեամբ նայելով Պետր Ստեփանիչին և գդակը ձեռքում պտտացնելով:  
 — Հասկանում եմ, դէն գցիր, ծոցս գցիր, այդպէս չի:  
 — Որտեղեց է այնքան կարողութիւն, որ համ գլուխս պահեմ, համ ծնողներս և քոյրերս համ էլ պսակեմ:

— Այդ լաւ էս ատում, խելօք ես Սմբատ:  
Քաջց Աստուած ողորմած է, դու միայն լաւ ծա-  
ռայելու ինձ և ես շուտով, շատ շուտով քեզ կ'օգնեմ:  
Սմբատը կրկին գլուխ տուաւ:

— Բաս ինչու չես հարցնում թէ ով է հարս-  
նացուդ: Հը՛մ, մի աղջիկ է, Սմբատ, մի աղջիկ,  
որ տեսնես աչքերդ չորս կ'զառնան: Բագու՛ն մէջ  
հասը չ'կալ:

— Սմբատը մի հարցական հայեացք ձգեց  
եր պատրօնի վրայ:

— Աբա եթէ խելօք ես իմացեր թէ ով է,  
եթէ կարողացար, հըը՛մ...

Սմբատը գլուխը շարժեց բացատաբար:

— Գիտեմ, որ չես կարող գտնել, որովհետեւ  
մտածել չես կարող, թէ մի այնպիսի աղջիկ կարող  
ես ձեռք բերել:

Սմբատը կարծեց թէ Պետր Ստեփանիչը հա-  
նաք է անում և ժպտալով նայեց նրա երեսին:

— Ճանաչում ես իմ գործարանի կառավարիչ  
հաշտարխանցի Կարլ Մարկիչ պարոն Պոպովին—հար-  
ցրեց Գովմազովը, ամենայն մի բանը արտառանելով  
ծանր և շեշտելով, նա մանաւանդ վերջին բառերը:

— Սմբատը պատասխանեց, թէ ճանաչում է  
Կարլ Մարկիչին:

— Նրա աղջկան, Կատերինա Կարլովնային և ո  
ճանաչում ես:

— Ճանաչում եմ:

— Այ, նրան եմ նշանել քեզ համար:

Որովհետեւ Սմբատը հաւատացած էր, որ  
Պետր Ստեփանիչը հանաք է անում, այդ պատ-

ճառով մի անանձին նշանակութիւն չը տուաւ  
նրա խօսքերին և ոչինչ չ'խօսեց:

— Տեսել ես ինքդ Կարլ Մարկիչի աղջկան:

— Տեսել եմ:

— Ի՞նչպէսն է, հաւանում ես:

Սմբատը չ'պատասխանեց:

— Լաւն է, չէ՞:

— Շատ լաւ է:

— Օհօ, թնչ զօջաղ ես, ես կարծեցի որ չես  
հաւանել—ասաց Պետր Ստեփանիչը, ծաղրածու  
թեամբ ժպտալով:

Սմբատը ամօթից կրկին կարմրեց և գլուխը  
բուրբուրեց թեքեց կրծքին:

— Գէ՛հ, Սմբատ, պատրաստվիր—շարունա-  
կեց Պետր Ստեփանիչը, այն անգամ եր գէմքին  
լրջութիւն աւրով:

— Ի՞նչ էք հրամայում:

— Խօսք եմ ատում, դու նոր ես ատում թէ  
թնչ էք հրամայում—ասաց Պետր Ստեփանիչը  
զարմացած: Հեռադիւր, որ ձեր բնտանիքը շուտով  
ճանապարհուի այստեղ: Ես երկու շաբաթից չեսոյ  
գնալու եմ Նիժնից Սովլաօրոն, եարմարիա և ու-  
զու՛մ եմ իմ ձեռքով բանը վերջացնել: Այնտեղեց  
քեզ համար երկու վրկիւրիչնից բիւթիսեր եմ բե-  
րելու՝ ընձայ, մէկը քա բաղդին, միւսն էլ հարս-  
նացուի բաղդին:

Սմբատը բուրբուրեց կարմացաւ: Նա դեռ չէր  
հաւատում թէ Պետր Ստեփանիչը խօսում է լրջո-  
րէն:

— Գէ՛հ լրեցիր վստմ, դեմ հոգիս, գնն պատ-

բասավիր—կրկնեց Պետր Ստեփանիչը վճռողական եղանակով:

Սմբատը տեղից չձարժվեց:

—Ա՛ռ, այս էլ ծակսիր, չետոյ, եթէ բաւականութիւն չես անել, էլի կ'տամ:

Այդ ատելով Պետր Ստեփանիչը բացեց սեղանի պահարանը և երեք հատ հարիւրանոց հանելով, դրաւ սեղանի վրայ, Սմբատի առաջ: Սմբատը փողերը տեսնելով կարծես թէ քնից սթափվեց: Նա փոքր առ փոքր սկսեց ուշքի գալ և այն բանը, որ մինչև այդ վայրկեան ցնորք էր թուում, հետզհետէ սկսեց իրականանալ նրա առաջ: Ասկաչն նա չվստահայտաւ շարժվել տեղից և մի հայեացք ձգելով փոշերի վրայ, կրկին զարմացած նայեց Պետր Ստեփանիչի երեսին:

—Ի՞նչ ես տաւարի պէս նայում, վեր առ քեզ ատում եմ, վեր կաց:

Սմբատը բարձրացաւ տեղից:

—Հէնց այժմ դնւմ քեզ համար շորեր պատուիրել—կրկնեց Պետր Ստեփանիչը:

Սմբատը փողերը վերցրեց:

—Դեր գրպանդ և մի ուշանար, դնւնց, ես էլ ուրիշ գործեր ունիմ նրանցով պիտի զբաղուիմ: Ախորհն ինձ մօտ կ'գաս ճաշելու և ես քեզ մանրամասնօրէն կ'բացատրեմ թէ ինչ կարգադրութիւններ եմ անելու քեզ համար:

Սմբատը մէջքից երկու ծալ դաթվելով գլուխ տռաւ, առանց մի խօսք արտասանելու: Յետոյ չեա ու չեա մօտեցաւ դռներին և այնտեղ կանգնելով, մի քանի անգամ ևս գլուխ տռաւ ու դուրս

եկաւ: Միաժամանակ Պետր Ստեփանիչն կրծքից դուռս թռաւ մի խորը հառաչանք:

—Ո՛ւ՛՛՛՛, փառք քեզ Աստուած, չէի կարծում որ այդպէս հեշտ կ'պրծնեմ: Ինչ ուրախ է հիմա Սմբատը, թեքեր չունի որ երկինք թռչի: Բայց տեսնենք, հարկաւոր է դեռ օրիորդի ծնողներին էլ համոզել: Ե՛հ, դա այնքան էլ դժուար չի, ինչ և իցէ պէտք է դգոջը լինել, դգուշութիւն, դգուշութիւն ամենից առաջ:

—Կ'խոտտանամ, կ'խոտտանամ, Կարլին էլ, Մարիա Իվանովնային էլ, Սմբատին էլ ու չետոյ... տեսնենք... այդ հեշտ է... Կեցցես Պետր Ստեփանիչ Գօլմաղով, գլուխդ դեռ չի փթել...

Եւ Գօլմաղօյը այս ատելով, ձեռքերը շփեց ուրախութիւնից և վեր թռաւ բազկաթուից: Նա կանչեց սպասաւորին և հրամայեց սուրճ բերելու:

գիշերս քնեմախճով ցամաք քամանուկով և արև  
լուսնով քնեմախճով քնեմախճով քնեմախճով  
քնեմախճով քնեմախճով քնեմախճով քնեմախճով  
քնեմախճով քնեմախճով քնեմախճով քնեմախճով

X



ամա ջան թնչեր ես ասում, շառլա-  
տան չի, Սմբատը աղաւթի տղայ է:

— Աղաւթը է ինչ որ է, Կատեաչիս մի մաղին  
ջարթի: Ո՛վ կարող էր մտածել, թէ Կատեան պիտի  
գնայ մի կեղտոտ ու մութոտ դորձախտարի:

— Քեզն ասում են կեղտոտ չի մնաց, չէ, չէ՞  
փիկչիէ: Պետք Ստեփանիչը մաղաղիս է բաց ա-  
նելու, Հասկանում ես թէ չէ: Սմբատին, ինձ և  
Արամին կոմպանիս է շինելու: Համեցէք, գնա  
տես ինչ կլար թիրա է ուստուպիտ արել նրան  
Պետք Ստեփանիչը, թնչ մեքելներ: Մի գնա է Կէ Կ,  
չետոյ կիմանաս թէ Սմբատը ինչպէս ժենիկացու է  
Կատեաչիս Համար: Մարիաջան, այսօր ես նրան  
տեսայ, էհ, էհ, էհ ինչպէս Քրանտ է Հարնուել,  
սիրունացել է, էտօ պուռօտօ կովկալսիկց կրա-  
սավից:

— Է՛հ, փառք քեզ Աստուած, ես թնչ էի  
մտածում, ինչ է դուրս գալիս...

— Չելաւ, դէհ ինչ անենք: Իմանում ես  
Մարիա, ասում են դօկտօրները նրան սօվետօվայտ  
են արել ժենիկացայ չլինի, էնդուր որ տկար է:

— Տկար է, տկար է, այս քանի օրերս նշան-

վելու է Փերզաղօվի աղջկայ վրայ, տկար է:

— Են՛ որ ու, թնչ ես ասում, դն . . . վօտ, վօտ,  
վօտ տեսնում ես Մարիա, բաս Պետք Ստեփանիչը  
Փերզաղօվի նման բողաչին թող կանի, դու կար-  
ծում էիր, ու կ'գայ ինձ նման կօկօջ նկարդ պու-  
ռեկաչքիկ աղջկան կուզի թնչ է...

— Ինչո՞վ է պակաս Կատեան Փերզաղօվի  
աղջկանից, կելքով, գեղեցկու թիւնով թէ շնորհով:  
— Սուս, սուս, վօտ, վօտ, վօտ, վօտ ինչով  
է պակաս, դրամ, դրամ, պրեդաննայտ, պրեդան-  
նայտ:

Այդ խոսակցութիւնը անցնում էր Կարլ  
Մարիկչի և նրա ամուսնոյ մէջ երեկօցեան, մի  
շաբաթ անցած աչն օրեց, երբ Գօլմաղօվը իր  
գործախտարին, Սմբատին ու րախացրեց, թէ պի-  
տի նպակի նրան Կատեանիս Կարլովնայի վրայ:  
Գօլմաղօվը Համար, ինչպէս նա կանխապէս  
Հաւատացած էր, մե՛ մե՛ծ դժօտ արու թիւն չէր  
Համուզել Կարլ Մարիկչին: Բաւական էր նրա կող-  
մից մի քանի խօստումներ և միամիտ մարդը ին-  
կոչն, շրացած աղ խոտումներեց, առանց երկար  
մտածելու, վճռեց իր աղջկան տալ Սմբատին:

Բաց այդքան Հէշտ չէր Համուզել Մարիա  
Եվանովնային: Մարիա Եվանովնան ուրիշ տեսակ  
էր մտածում իր աղջկայ մասին: Ես ունէր եր  
սեպհական խօրին Համուզմունքն ըր Կատեանիս  
Կարլովնայի սպազայի վերաբերմամբ, որմք բո-  
լորովին Հակառակում էին Գօլմաղօվի ծրագրին:  
Փշրել աչք Համուզմունքները՝ գուրս քեքել աչն  
մարտութիւնեց, ուր Հեղուհետէ թաղվել էր Մարիա

Իվանովնան, Բաղուստ գեներուց չետոց — այդ մե  
 դժուար խնդիր էր, որի վճռելը աչուէս թէ՛ այնպէս  
 պետէ խնտ վշտացնէր սիրող ծնողն քեքոչ սեր-  
 տը: Երբ Գօլմաղովը մե գեղեցիկ առաւօտ դարով  
 նրա մօտ՝ շայտնեց իր մտազրուութիւնը և ասաց  
 թէ Կատեւաչի Համար մե լաւ փեսացու է գտել —  
 Մարիա Իվանովնան նախ կարծեց թէ Պետր Ստե-  
 փանիչը մե նուրբ ախնարու թիւն է անում սեպ-  
 Հական անձնաւորութեան մասին: Մե քանի  
 վայրկեան նրա սիրտը սկոնց բարակել ուրախու-  
 թիւնից: Բաց աււոյ, անցան այդ երջանիկ վայր-  
 կեանները: Գօլմաղովը աւելի պարզօրէն Հասկա-  
 ցրեց նրան իր միտքը և խեղճ ծնողն ուրախու-  
 թիւնը խկոչն փոխվեց տրտմութեան: Մարիա  
 Իվանովնան աչքունքը քարը ձգեց, դէմքը թըթ-  
 վացրեց և ոչինչ չ'կարողացաւ պատասխանել:  
 Միայն նա մի խորը Հառաչանք արձակելով իր  
 կրծքից, ձգեց Գօլմաղովն երեսին մե նշանաւոր  
 Հայեացք: Քիչ թէ շատ զննողական ընդունա-  
 կութիւն ունեցող ախնատետը, Մարիա Իվանովնաչի  
 այդ խորհրդաւոր Հայեացքի մէջ, կարող էր կար-  
 դալ մե ծանր շանդիմանութիւն Գօլմաղովին:  
 Պետր Ստեփանիչը Հասկացաւ Մարիա Իվա-  
 նովնաչի միտքը, Համկացաւ, բաց ոչինչ նշանա-  
 կութիւն չը տուաւ նրան: Մարիա Իվանովնաչի  
 այդ նշանաւոր Հայեացքը, այդ խորհրդաւոր լա-  
 սութիւնը աւելի դօրեղ և դուրցէ կծու ազդեցում  
 թիւն անէր Գօլմաղովն վրայ, եթէ ոտ Հաւա-  
 տացած լինէր, որ Մարիա Իվանովնաչին շայտնի  
 է, թէ այն չարագործակ երեկոց ինչ անցք է ան-

ցել իր աղջկայ գլխով և թէ այդ անցքից վեր-  
 ջնինն որպիսի վշտալի և անարգ Հետեանք է  
 սպասում: Բաց Գօլմաղովը գետէր, որ Մարիա  
 Իվանովնան ոչինչ չը գետէ այդ մասին:

Գօլմաղովը գօվեց, գօլաբանեց, եօթներորդ  
 երկինք բարձրացրեց Կատեւաչի փեսացուին, Սըմ-  
 բատին: Նա նկարագրեց վերջինի անձնաւորու-  
 թիւնը — խելքը, կրթութիւնը, եռանդը, գեղեց-  
 կութիւնը ամենագեղեցիկ գոչներով: Նա կրկնեց  
 թէ պրակվելուց չետոց, Սմբատի Համար կ'բացի  
 մե լաւ մագաղին և Կարլ Մարկիչին ու Արտեմին  
 կ'ընկերացնի նրա Հետ: Սակաչն Մարիա Իվանով-  
 նան մնաց անտարբեր: Նրա վրայ այդ խոստում-  
 ները չունեցան այն ազդեցութիւնը, ինչպէս Կարլ  
 Մարկիչի վրայ: Նա չ'չափշտակվեց, չ'տուաւ իր  
 Համաձայնութիւնը, բաց և այնպէս խնդրեց  
 Գօլմաղովին քիչ միջոց տալ, այդ մասին մտածե-  
 լու և իր ամուսնու Հետ խորհրդակցելու: Գօլ-  
 մաղովը Հեռացաւ, չուսարով, որ Կարլ Մարկիչը  
 անշուշտ կ'Համողի Մարիա Իվանովնաչին և այդ  
 դժվար խնդիրը, որը իրան այդքան անհանգս-  
 տացնում էր, շուտով կ'վճռուի:

Բաց լինչ էր մտածում ինքը, Կատերինա  
 Կարլովնան. Համաձայն էր նա արդեօք Սմբա-  
 տին գնալու: Գօլմաղովը, պէտք է ասած, որ այդ  
 մասին սկզբում շատ էր անհամոզուտանում: Սա-  
 կաչն, երբ նա մի օր ներկայացաւ օրիորդին և մե  
 ժամու չափ առանձնահալով վերջինի Հետ, խօ-  
 սեց այդ մասին և իմացաւ օրիորդի միտքը՝ աչ-  
 նու Հետև նա Հանդուսացաւ և բաւական ուրախ

դէմքով վերադարձաւ տուն: Այն, Կատերինա Կարլովնայի պատասխանը շատ մեղմարական էր Պետր Ստեփանիչի համար, և որեւէ կերպ չէր կարող լինել: Օրիորդի առաջ իր անմեղծար դռն-թիւնից դուրս դալու համար, երկու ելք կար: Նա կամ պետի համաձայնվէր Պետր Ստեփանիչի առաջարկութեան հետ, այն է, պատկելու Սմբատի վրաց, կամ թէ ոչ, պետի մնալ իր ծնողներին մօտ և յայտնելով իր գաղտնիքը վերջիններին՝ սպասել այն նշաւախոթեան, որը սպասուում էր նրան մօտիկ ապագայում:

Վերջին միտքը սարսափեցնում էր Կատերինա Կարլովնային. համեստութեան, ամօթի և վերջապէս ինքնասերութեան զգացմունքները չէին թոյլատրում նրան յայտնել իր անջնջելի արատը ծնողներին: Քացի այն նախատեսնեց, որը պետի կոնք ենք օրիորդը, դա կլինէր և մի անպատելի դօրեզ հարուած, որին չէր կրող դեմանալ ոչ Կարլ Մարիլը և ոչ Մարիա Իվանովնան, որոնք Գօլմաղովի մասին կազմել էին մի սուրբ, մի անարատ հասկացողութիւն: Կար մի արեւ միջոց, որը կարող էր Կատերինա Կարլովնային ազատել անպատելութիւնից: Մա այն միջոցն է, որին սովորաբար դիմում են այդպիսի Ջգնաժամում վիպական հերոսուհիները: Քուց մեք Կատերինա Կարլովնան, խօստովանում ենք, որ չէր պատկանում այդ հերոսուհիներ շարքին: Նա, երբե հասարակ մահանացու, ունէր մի թոյլութիւն, այն է՝ նա սաստիկ ցանկանում էր ապրել: Աեանքը նրա համար խիստ քաղցր էր: Այդ պատ-

ճառով նրա գլուխը անգամ չը մտաւ ինքնասպանութեան միտքը:

Այո, Կատերինա Կարլովնան ցանկանում էր ապրել և ապրել առանց գաղտնիքը ծնողներին յայտնելու, առանց հասարակութեան բամբասանքի և ատելութեան առարկայ լինելու: Եւ այդ նպատակին հասնելու համար, սորմելի օրիորդը չէր խորշում այնպիսի միջոցներեց, որոնք ատելի էին, զգուշել էին նրա համար ինչպէս նոյն ինքը ատելութիւնը և զգուանքը: Նա համբերում էր Գօլմաղովի ներկայութիւնը, այն Գօլմաղովի, որը նրա աչքում այժմ երևում էր ինչպէս մի չար ոտիս, մի մարմնացած ատելութիւն: Օրիորդը նրա հետ ժամերով առանձնանում էր և խորհրդակցում իր ապագայի մասին, լսում էր նրա խորհուրդները: Նա, ինչպէս իմացանք Գօլմաղովի խօսքերեց, մինչև անդամ համաձայն էր պատկելու վերջինի հետ, միայն թէ կարողանայ ծածկել իր ամօթը, միայն թէ ազատվի ապագայ խաչատաւութիւնից: Իսկ Գօլմաղովը, իրան չատուի նենգամտութեամբ, օգտվում էր օրիորդի անտանելի դրութիւնով: Նա հաշտեցնում էր վերջինին իր կեղտոտ պայմաններ հետ...

Այդպէս թէ այնպէս օրիորդը համաձայն էր պատկելու Սմբատի հետ: Համաձայն էր նոյնպէս և Կարլ Մարիլը, բայց համաձայն չէր միայն Մարիա Իվանովնան: Եւ ահա երկու ամուսինները նստած մի երեկոյ վիճաբանում էին այդ մասին: Կատերինա Կարլովնան և Արտեմ Կարիլը իրանց սենեակներումն էին: Վերջինը զբաղված էր ինչոր

Հաշիւներով, որոնց պիտի ներկայացնէր Պետր Ստեփանիչին:

—Քեզի ասում եմ բանը մի երկարացնի, ետը լաւ չեղալ Հնա—շարունակում էր Համոզել իր ամուսնունն Կարլ Մարկիչը: Կատեան ինքը սօզլասնի է Սմբատին գնալու, էլ ինչ էս ուզում: Նո՛ւ, բանը պրծած է, էդուց պիտի օբրուչիտցա անենք: Հինգ օրից յետոյ էլ պտակենք, էնդուր որ Պետր Ստեփանիչը վռաղում է, եկող շարաթ օտպրովիչացա է լինելու Հաշիւան էնդից էլ էարմուկա:

—Գու ինչ դիտես, որ Կատեան չօժար է, էս Հարցնում եմ. ոչինչ չի պատասխանում, լաց է լինում: Չեմ իմանում խեղճ երեխիս ցաը ինչ է. ամսից աւել է, որ արիւն արթառուքի մէջ է. օրից օր Հալվում, մաշվում է:

—Տկար է, տկար է, ինչ Պետր Ստեփանիչը ասաց, որ այն երեկոց կօնցերտում պրօստուգիչացա իլել է: Սո էլ պուչսը տեսալ երեկ, լիսօրադիպ ունի: Սբա ինքը ինչտեղ է:

—Նստած է իր սենեակում տխուր ու տըրտում, խօսացիում եմ, չի խօսում:

—Կատեա, Կատիուշկա, դուշիչկա, մի եէ աչտեղ—կուչեց Կարլ Մարկիչը:

Ներս մտաւ Կատերինա Կարլովիան: Որքան փոխվել էր խեղճ օրիորդը այն շարագուշակ երեկոցից, ինչպէս դեղնել ու մաշուել էր նա այդ մի ամսուայ ընթացքում: Նրա դէմքի նախկին թարմութեան և կալտառութեան Հետքը նշմարվում էր միայն երկու փոքրիկ կարմիր բիծերով:

որոնք Հազիւ Հաղ պահպանվել էին սպողնած աչտերի վրայ: Նրա էրեսի սրկորները ցցվել էին, աչքերը թաղվել խորը փոսերի մէջ, շրթունքները սրիւնաքամվել: Փոխվել էին նոյնպէս նրա նախկին խորիւս և Հպարտ գնացքը և շարժվածքը:

Ներս մտնելով, նա թօյլ և անլուելի քայլերով մօտեցաւ պատի տակ դրած աթոռներից մէկին և վհատած ու ուժաթափ ոչ թէ նստեց, այլ միանգամից ընկաւ նրա վրայ:

—Ա՛յ, այդպէս Կատեա, ախար մի քանի օրից չեսոց պտակվելու էս, մեզ մօտ նստել, որ քեզանից կշտանանք: Ի՞նչ էլը անում այնտեղ:

—Կարդում էի, պատասխանեց օրիորդը նուազ ձայնով, որի մէջ զգացվում էր նրան ներքին վշտալ:

—Էլի ուսման, քեզի քանի անգամ ասել եմ, որ ուսմաններ կարդալը վնաս է, տես ախար ինչպէս բլեզնիւացել էս:

—Բօման չի, պապա, Կատեան տէրտէր է դառել աւետարան էր կարդում—մէջ մտաւ Արտեմ Կարլիչը, որը նոյնպէս եկել էր ներս քրօջ Հետ, եր Հօր ձայնին:

—Աւետարան, Հն լաւ էս անում, նո՛ւ ինչ կարդալու վախտ է, կերակի օրը պտակ է, աոււլետդ պատրաստել: Հն, Կատեա, դուշա մօտա, ժենիխիտ տնիւ էս, Հաւանում էս:

Օրիորդը ոչինչ չ'պատասխանեց, միայն գլուխը թէքելով կրծքին, մի խորը Հառաչանք արձակեց:

—Լաւ է, մի ամաչիւր, մի կարմրել, իմացալ, Հաւանում էս, ո՛վ չի Հաւանի Սմբատին:

— Ես էլ եմ Հաւանում, պապա— դարձեալ մէջ մտաւ Արտեմը: Երեկ ծովի վրայ նաւակով նրա հետ ման եկանք, շատ լաւ տղայ է:

— Լսում ես, նու, լսում ես Մարիա, Արտեմն էլ է Հաւանում, դու թնչ ես Փօրօնչա անում:

— Ինչու չի Հաւանի, չէ որ Արտեմը ինքն էլ Սմբատի նման մէկն է:

— Ինձ չես Հաւանում, մամա, ես թնչ վատ տղայ եմ:

— Վատ չես, բայց մի մեծ բան էլ չես:

— Նու, նու, նու Հերիք է քէչ երկարացրէք, ինքը կատեան Հաւանում է իր ժենիխին պրծաւ ու գնաց, այնպէս չի կատեա:

— Ինչպէս կամենում էք այնպէս արէք— պատասխանեց կատերինա Կարլովնան:

— Այդպէս, շատ ապրես, շատ ապրես կատեա: Նու, Մարիա, ինչոր Հարկաւ որ է կդուց անիւր, որ առնենմ կնդուր որ Պետր Ստեփանիչը վռաղում է: Երէկ ինձ երկու Հարիւր մանէթ վող տուաւ պօղուպրաներ անելու:

Մարիա Իվանովնան կրկին սկսեց Հակառակել: Նա ասաց, որ այդքան շտապել Հարկաւոր չի, թէ աւելի լաւն է սպասել դուցէ կատեաչի Համար մի ուրիշ, աւելի լաւ փետոցու է ճարվելու, թէ կատեաչի անունը արդէն տարածվել է և ամենքը գոյում են, թէ շատ հարուստ տղերք կ'ցանկանան առօջարիութիւն անել և այլն և այլն:

Կիշերեց բաւազան անցել էր: Կատերինա կարլովնան հրաժարվեց իր սենեակը: Արտեմ

կարլիչը արդէն քնած էր: Երկու ամուսինները շարունակում էին վիճաբանել: Վերջապէս կարլ Մարկիչը տեսնելով, որ Մարիան չամառութիւն է անում, դուրս եկաւ Համբերութիւնից և ասաց.

— Թէ խեղդուես Մարիա, ես կատեաչին տալիս եմ Սմբատին կնդուր որ Պետր Ստեփանիչի քէֆին կպչել չեմ կարող:

Մարիա Իվանովնան կատաղեց, վրիճեց, բայց վերջը կարլից մի փափուկ ապտակ ստանալով, հրաժարվեց քնելու վերաւորված սրտով և լշտացած հրդով:

Հետեւեալ առաւօտ Գոլմաղօվը կրկին այցելեց Պօպօվի ընտանիքին և մի Ժամ մնալուց չետ, հեռացաւ բոլորովին միամտացած: Նա վերել էր Մարիա Իվանովնայի չամառութիւնը:

Գոլմաղօվը այժմ քաղաքում էր, որտեղ քանակաւ էր հաւաքում իր ընտանիքի անդամները:

Հինգ օր անցած, մի գեղեցիկ երեկոյ քաղաքի կենտրոնում գտնվող փոքրաչէն եկեղեցում դատարկեց կատերինա Կարլովնայի և Սմբատի պրակը: Գոլմաղօվը իր ընամատարութիւնը այնտեղ հասցրեց, որ նա մինչև անգամ Սմբատի կնքահօր պաշտօնը ինքը կատարեց: Իսկ հարսեղբօր դելը կատարեց Արտեմ Կարլիչը, որը ուրախութիւնը այդ երեկոյ սահման չունէր:

Սմբատի պրակը այժմ քաղաքում էր, որտեղ քանակաւ էր հաւաքում իր ընտանիքի անդամները:



մբատը Եռչեցի ազգատ ճնողներն միակ  
 տղայ զաւակն էր: Ճամներկու տարեկան Հասա-  
 կում նրան տաին քաղաքացին ուսումնարան:  
 Երեք տարի մնաց այդտեղ Սմբատը և Հաղիւ-  
 ոսերէն և Հայերէն գրել ու կարդալը սովորել էր,  
 երբ Հայրը դուրս բերաւ նրան և յանձնեց մի  
 վաճառականի խանութ: Սմբատը բաւական ըն-  
 դուհակ և աշխատասէր տղայ էր, ընաւորութիւ-  
 նով Համետ, խաղաղ և իրանից մեծերն խօսքը  
 լսող ու կատարող: Նա չափազանց չարգում և  
 պատիւում էր իր ճնողներէն, սիրում էր իր երկու  
 քոյրերէն, որոնք տարեքով երանից փոքր էին:  
 Յարգում և պատիւում էր նա նոյնպէս և այն վա-  
 ճառականին, որի մօտ նա գործակատար էր, խո-  
 նարհութեամբ կատարում էր նրա պատուէրները:  
 Իայց երբէք նրա խնարհութիւնը ստրկութեան  
 չէր Համետ, նա իր գործերը կատարում էր ինչ-  
 պէս մի պարտաճանաչ գործակատար և ուրիշ  
 ոչինչ: Սմբատը ինքնասէր տղայ էր և տեղը ընկած  
 ժամանակ կարող էր պաշտպանել իր պատիւը:  
 Որովհետեւ նրա Հայրը ծերացած լինելով, ոչինչով  
 չէր պարապում, այդ պատճառով ընտանիքի Հոգսը

ընկել էր նրա վրայ: Հինգ տարի ծառայեց Սմբատը  
 վաճառականի խանութում. նրա ջնշին ուսձիկը  
 անբաւական էր Հինգ Հոգուց քաղկացած ընտա-  
 նիքն գոյութիւնը շարունակելու: Տեսնելով, որ ազ-  
 քատութիւնը շատ է ճնշում, նա, իր Հօր Համա-  
 ճայնութեամբ, թողեց Եռչին և եկաւ Բագու,  
 այստեղ քաղդ սրահելու: Նա մտաւ Գօլմաղօվի  
 մօտ գործակատար, ամուսկան քառասուն մանէ-  
 թով: Նա իր ուսձիկն մէ յնշին մասով կէս կուշտ  
 ապրում էր ինքը, իսկ մնացեալը ուղարկում էր  
 ընտանիքին, սրի ապահովութեան խնդիրը նրա  
 միակ Հոգսն էր: Հայրը անդադար գանդատվում  
 էր ազքատութեան վրայ և Սմբատը ամեն անգամ  
 նրանից նամակստանալիս, քաշվում էր գործարանի  
 մի անկիւնը և զառն արտասուքներ թափում:  
 Չարս տարի էր, որ Սմբատը Գօլմաղօվի մօտ ծա-  
 ռայում էր միկենայն ուսձիկով: Աերջին ժամանակ  
 մի քանի անգամ նա խնդրեց Գօլմաղօվին փոքր  
 աւելացնել ուսձիկը, բայց վերջինը ուշադրութիւն  
 չէր դարձում: Իսկ, երբ Սմբատը մի անգամ ևս  
 այդ մասին ակնարկեց, Գօլմաղօվը քարկացաւ:

— Եթէ մէկ էլ գլուխ կ'ցաւացնես, շորերդ  
 Հաւաքեր ու կորեր:

Սմբատը լռեց, բայց Հաղիւ անցել էր երկու  
 ամիս այդ օրեց և ահա նոյն Գօլմաղօվը հրաւե-  
 րում է Սմբատին իր մօտ և յանկարծ չայանում,  
 թէ այսուհետեւ նրան ընդունում է իր առանձին  
 Հովանաւորութեան տակ: Նա առաջարկում է  
 Սմբատին պատվել Կատերինա Կարլովնայի նման  
 գեղեցկուհոյ վրայ, խոստանում է անկախ ապ-

բուստի միջոց, մազաղին և, իբրև գրաւական, նա տալիս է երեք Հատ Հարիւրանոց:

Որպիսի բաղաւորութիւն, որպիսի անուար- սելն երջանկութիւն մանուկ Հասակից աղքատու- թեան դառն լծի տակ ճնշված մի պատանու Համար: Երբ Սմբատը երեք Հատ Հարիւրանոցները գրպանում դուրս եկաւ Գօլմագօլի մօտից, չան- կարծակի ուրախութեան բուռն զգացմունքներե ներքոյ նա միանգամայն շուարած էր: Նա չէր Հաւատում, թէ այդ բոլոր կատարվում էր իրա- կանութեան մէջ, նրան երազ էր թւում Գօլմա- գօլի առաջարկութիւնը: Բայց ընչ երազ, ընչ Հրաշք, ահա երեք Հատ դանակ—կարմիրանոց- ները: Սմբատը փողոցում անդադար Հանում էր Հարիւրանոցները, նայում նրանց այս երեսին այն երեսին, շօշափում, չետոյ ծալում այս կողմ այն կողմ և կրկին դնում գրպանը, կրկին Հանում ու կրկին նայում և կրկին դնում գրպանը: Վերջապէս նա Հետզհետէ ուշքի է գալիս և նրա սիրտը նորից սկսում է բաբախել ուրախութիւնից:

—Վերջապէս, վերջապէս աղքատութեան քարը միանգամից կ'ձգեմ մի կողմ—կրկնում է նա ինքն իրան անդադար: Վերջապէս խեղճ ծնող- ներս և քոչրերս մի լաւ օր կը տեսնեն: Կատերինա Կարլովնան... Հը՛մ... կարող էի արդեօք երբ և իցէ երևակայել, որ այդ դեղեցկուհին իմ ամուսինը պետի դառնայ...:

Շարունակ մի շաբաթ Սմբատը ուրախու- թիւնից շուարած պտտում է այս կողմ այն կողմ, զանազան բաներ է պատուիրում և այլն:

Վերջապէս Հանում է Հարսանիքե երեկոն: Սմբատը զուգված, զարդարված կանգնած է եկե- ղեցուց սեղանի առաջ, Կատերինա Կարլովնայի Հետ ձեռք ձեռքի տուած: Նա ուրախութիւնից ստից ցգլուխ գոցում է, նրա սեպագոյն խոշոր աչքերը փայլում են երջանկութեան փայլով, նրա սիրտը թռթռում է: Պատկը աւարտվում է և Սմբատը թե թեխ տուած Կատերինա Կարլովնայի Հետ, մտնում է իր սեպահանքի ընկալարանը: Հարսա- նիքը տեւում է ամբողջ երեք օր և այդ երեք օ- բուռաց ընթացքում Սմբատը իրան զգում է գրախ- տի մէջ: Նրա ուրախութիւնը սահման չունի, նա ստի ձեռքի ընկած թռչում է այս կողմ այն կողմ, ինքը անձամբ ծառայութիւններ է անում Հանդիսականներին: Նրան թւում է, թէ ոչ միայն ինքն է երջանիկ, այլ բոլորը և ամենքը ուրախ են իր բաղաւորութեամբ: Նա տասն ան- գամ, Հարիւրանգամ գլուխ է տալիս Գօլմագօլին, անդադար շնորհակալութիւններ է չափանում իր բարեսիրտ խնամատարին նրա այգափ լաւու- թիւնների փոխարէն:

Բայց աւանդ, Սմբատի երջանկութիւնը երկար չի տեւում: Անգութ ճակատագրերը շտապում է սողորմելի երիտասարդի կարծեցեալ բաղաւորու- թիւնը կերպարանափոխել դժբաղտութեան:

Անցնում են Հարսանիքի առաջին երեք օրերը:

Չորրորդ օրն է: Առաւօտ է: Սրեգակը, նոր նոր գուրս գալով, շառագունում է երկնականաբլր և ահա Սմբատը գիշերային շարերով նստած է իր

սենեակում: Նրա դէմքը տխուր է և գունաթափ,  
չըթունքները սեղմված և ճակատը կնճռած: Նա  
անդադար կրծքից խորը հառաչանքներ է արձա-  
կում և երբեմն գլուխը երկու ձեռքով սեղմում է  
կամ մազերը փետում:

Ուղիղ երկու ժամ Սմբատը միայնակ մնում է  
աչդ գրութեան մէջ փակված իր սենեակում:  
Յետոյ նա յանկարծ բարձրանում է տեղից, շորերը  
հազում և խելագարի պէս քրքրված մազերով,  
անլուաց երեսով, վազում փողոց: Նա ամբողջ օրը  
չէ վերադառնում տուն, միւս օրը նոյնպէս:  
Սկսում են պտուել այտեղ ու այտեղ:—Չկաչ,  
չկաչ...

Ո՞ր է Սմբատը:



Ի հիանալի, մի դիւթական տեսա-  
րան է ներկայացնում ծովեզրեայ քաղաքը լուս-  
նեակ գիշեր, երբ եղանակը բոլորովին խաղաղ է:  
Կանգնելով ծովափում և բաղմաթիւ նաւերի ան-  
տառախիտ կաշմերի միջով նայելով ջրի անհուն  
տարածութեան, որի հարթ մակերևոյթը արծաթ-  
փայլում է պայծառ երկնքի երեսում սահող լրա-  
ցած լուսնի կաթնագոյն լոյսով—մարդ անամաց  
չափշտակվում է: Կայ մի անհասանելի զօրութիւն,  
մի անբացատրելի ոյժ, որը այտեղ բոլորէր  
մոռացնել է տալիս մարդուն այն ամենը, ինչ որ  
պատկանում է նիւթական աշխարհին, և նա կար-  
ծես թէ կախարդվում է: Մարդ հոգով ու մտքով  
այդ անհասանելի զօրութեան ոյժով մղվում է  
հեռու, հեռու, դէպի կրկնքի անհուն խորու-  
թիւնը, ուր չ'կան այն դառնութիւնները, ուր  
չ'կան այն առօրեայ մանր հոգսերը ու վշտերը,  
որոնց ներքոյ գիշեր ու ցերեկ ճնշում է այս  
աշխարհի մահկանացուն: Աչդպիտի բոլորներում  
մարդ ոչինչ չէ կարողանում մտածել, ոչ մի միտք  
կանգ չի առնում նրա գլխում: Աչդպիտի բոլոր-  
ներում միտքը կաշկանդվում է, երևակացութիւնը

բորբոքվում է և մարդ կարծես թէ լողում է մեկին որ վերացական աշխարհի մէջ, ուր նա հետզհետէ հարվում է ինչպէս մեկտոր սառույց եւ ուացող ջրի կաթսայում:

Ահա մեկ այդպիսի հրաշալի երեկոյ էր, երբ Կատերինա Կարլովնայի հարսանիքից հինգ օր անցած, ծովային կայարաններից մէկի ծայրում, ուր մուր քայլերով, անց ու դարձ էր անում մեկ երեսասարդ: Եղանակը ամառային լինելով բաւական տաք էր: Երեսասարդը հազած ունէր սև մահրեայ հագուստ առանց վերարկուի: Նա գլխաբաց էր, ձեռքերը ծոցում խաչաձև ծալած և սպիտակ ամառային դղակը կունտակին պահած: Փամանակ ժամանակ նա կանգ էր առնում և գլուխը բարձրացնելով, նայում լուսնին, որը կամ մտնում էր բամբակազոյն նոսր ամպերի տակ և քողարկվում ինչպէս մեկ գեղատեսիլ, մեկ նազելի օրիորդ կամ կրկին դուրս սահում:

Եթէ մէկը այդ ժամանակ մօտենար երեսասարդին, նա լուսնի մեղմադձոտ լուսաւորութեան տակ կ'ճանաչէր Սմբատի դէմքը:

Մեկ ամբողջ ժամ էր, որ Սմբատը այդպէս անցուդարձ էր անում այտուեղ: Կայարանի մեկ անկիւնում, ծովի երեսում, կանգնած էր մեկ փոքրիկ բեռնակիր շոգենաւ և պատրաստվում էր ճանապարհ ընկնելու: Նաւատիները տախտակածի վրայ ապրանքներ էին դարսում: Եղեկնաւի վրայ կային միայն մեկ քանի պարսիկ ճանապարհորդներ: Կարճ լիկ, կարմրերես և հասարակ դեմանացի նաւապետը ձեռքերը դպանում դրած

տախտակամածի ծայրից իր սուր հայեացքը ձգել էր ծովի հեռաւոր հորիզոնին: Սմբատը բարձրացաւ շոգենաւի վրայ և մօտեցաւ նաւապետին:

— Ե՛րբ կ'ճանապարհվինք:

— Մի ժամից յետոյ — պատասխանեց նաւապետը, իր հայեացքը չ'հեռացնելով ծովից:

— Կ'նշանակէ տասնումէկ ժամին:

— Ուղիղ:

Սմբատը ցած եկաւ և նստեց կայարանի սեւերից մէկի վրայ: Նա անհամբերութեամբ նայելով շոգենաւին, սկսեց խօսել ինքն իրան:

— Դա միակ միջոցն է, որ կարող է ինձ ազատել խայտառակութիւնից: Իսկ միւսը... օօօ... ես չեմ կարող նրան դիմել, նա սարսափելի է: Սարսափելի է ոչ թէ ինձ համար, սարսափելի է չորս հոգուց բաղկացած մեկ ընտանիքի համար, որի գոյութեան միակ միջոցը ես եմ: Դա կ'ընէր մեկ անապատելի մահացու վէրք ծերունու ծնողներին համար: Այն, որդիական սէրը ինձ իրաւունք չի տալիս դիմել այդ միջոցին: Միակ ելքը այս անխնայ քաղաքից հեռանալն է: Ի՞նչ խայտառակութիւն, ահա Աստուած, և ո՞վ կարող էր սպասել, թէ Գօլմաղօլը մի այդպիսի դե է: Ի՞նչպէս խելագարվեցի, և գլխապատառ ընկաց այդ դարշելի արարածի որդայթը: Գօլմաղօլ, օօօ Գօլմաղօլ, հիմա հասկանում եմ թէ ինչ միտք ունէր քո այդ բարեւալութիւնը: Զգվելի, կեղտոտ մարդ, միթէ բաւական չէր քեզ, որ անբաղդացրել էիր մեկ ամբողջ ընտանիք, որ դու երկրորդին ևս թշուառացրիր: Օօօ... Եթէ մի օր

քեզ կ'հանդիպեմ... բայց այժմ ուշ է, այժմ մի-  
այն մի բան է մնում կնձ անել: Դա շու-  
տով աշտեղից Հեռանալն է: Արդէն ամբողջ  
քաղաքը խօսում է, ամենքի բամբասանքի ա-  
ռարկան եմ, էլ քնչ երեսով կարող եմ մնալ  
աշտեղ:

Այդ մտածողութեան մէջ խորատուզված,  
Սմբատը բարձրացաւ և սկսեց նայել ծովի Հեռա-  
ւոր Հրբիզնին: Աէս ժամու չափ նա աչք դրու-  
թեան մէջ անշարժ կանգնած էր: Յանկարծ նրա  
ականջներին հասաւ շոգեհաւի բարակ սուլոցի  
ձայնը: Սմբատը արագ քայլերով դիմեց դէպի  
շոգեհաւը և բարձրացաւ տախտակամոծի վրայ:

Շոգեհաւը բաժանվեց կայարանից և Հան-  
դարտութեամբ սկսեց լողալ դէպի ծովի խորքը:  
Սմբատը երեսը դարձրած քաղաքին էր նայում:  
Անցաւ քառորդ ժամ և քաղաքը Հետզհետե  
անհետանում էր նրա աչքում: Սմբատը, վերջին  
ահագամ նայելով քաղաքին, մի խորը հառաչանք  
արձակեց կրծքից:

— Մնաս բարեաւ կարծեցեալ բաղլաւորու-  
թիւն—ասաց նա և արտասուքի երկու խոշոր  
կաթիլներ գլորվելով նրա աչքերից, ընկան տախ-  
տակամոծի վրայ:

XIII



Սօտ երեք տարի անցած Սմբատի Պարս-  
կաստան Հեռանալու երեկոցից՝ Հաշտարխանի  
նեղ փողոցներից մէկում, մի փոքրիկ սենեակում,  
ապրում էր երեք հոգուց բաղկացած մի ընտանիք:  
Սրանցից մէկը մի պառաւ կին էր մէջքից ծոված,  
միւսը մի դեղնած, մաշված, բայց գեղեցկութեւնը  
տակաւին չ'կորցրած մի երիտասարդ կին, իսկ եր-  
րորդը երկու տարեկան տղայ—մանուկ, հիւանդոտ  
գէմքով:

Պառաւ կինը Մարիա Իվանովնան էր: Երե-  
տասարդը Կատերինա Կարլովնան: Իսկ Հիւանդոտ  
մանուկը, վերջինի տղան: Կարլ Մարիիչը չ'կար:  
Երբ Սմբատի Պարսկաստան փախչելու գաղտնիքը  
պարզվեց Կարլ Մարիիչին, նա իսկոյն, վշտացած  
սրտով դուրս եկաւ Գօլմազովի մօտից իր սրբուց  
Հետ: Նա երկար ժամանակ գործ չը գտաւ: Մի  
կողմից իր աղջկայ խաշտառակութեւնը, միւս  
կողմից՝ անտանելի աղքատութիւնը, Հետզհետե  
բալորովին ճնշեցին խեղճ ձերտնուն և նա երկու  
տարի չ'անցած մեռաւ: Արտեմ Կարլիչը դեռ  
Բազմումն էր: Նա մի գործարանում գործակա-  
տար էր և իր ստացած աննշան ոռճիկով պահում  
էր մօրը, քրոջը և սրա զաւակին:

Իսկ Գօլմազովը: Նա արդէն ամուսնացել է  
և ապրում է ընտանեկան խաղաղ կեանքով...



ՅՈՒՐԵՐԻՑ ՄԵԿԸ

ՅՈՒՐԵՐԻՑ ՄԵԿԸ



րը մթնեց: Ծանր, վշտալի օր, նա ան-  
 ցաւ... գիշեր է, կ'լուսանայ, արեղակը դուրս կ'գաջ  
 և դարձեալ կ'սկսի նոյն սախակութիւնը, նոյն  
 ճանձրալի կեանքը, որը ահա ուղիղ Հինգ տարի է  
 որ ինձ մաշում է: ԱնՀնարին է այդպէս շարու-  
 նակել, այդ արդէն չափազանցութիւն է, ստորու-  
 թիւն է և վերջապէս անբարոյակահնութիւն է:  
 Գառն է այդ ճշմարտութիւնը, բայց նա ճշմար-  
 տութիւն է և ինձ վերջապէս ժամանակ է ուղիղ  
 նայելու այդ ճշմարտութեան երեսին: Հարց. Թ'նչ  
 եմ անում, մեր եմ գնում, ինչո՞ւ Համար եմ ապ-  
 րում: Գտել եմ. ինչո՞րը Հէնց այդ շորս բառերի  
 մէջ է կայանում: — Ինչո՞ւ Համար եմ ապրում, այ-  
 սինքն Թ'նչ է իմ գոյութեան նպատակը: Մեթո՞՛  
 միայն ապրելը: Բայց լուի ապրելի արդէ՞ք կարող  
 է բարոյական մարդու կեանքի նպատակ լինել: —  
 Ձե՞մ Հաւատում: Ապրել միայն ապրելու Համար —  
 այդ ստոր և զգլիլի կեանք է, որը արժանի է  
 միայն անբան կենդանուն: Բայց Թ'նչ ասել է  
 կեանքի նպատակ: — Սա մարդկային գոյութեան  
 չե՞նարանն է: Սուտ է, որ ասում են թէ կան մար-  
 դիկ առանց նպատակի: Ես չեմ Հաւատում: Ան-

նպատակ կեանքը մահ է. նա չ'իայ: Հարուստի  
և աղքատի, տղէտի և իմաստունի, բարոյական  
մարդու և անբարոյականի կեանքը ունի որ և է  
յենարան: Ամեն մարդ ձգտում է Հասնել իր ցան-  
կացածին և ահա այդ ցանկացածին Հասնելու  
յոյսն է, որ պահում է ամեն մարդու գոյութիւնը:  
Հակառակ դէպքում, մարդ չի կարող ապրել, նա  
կ'անհետանայ, կ'շողիանայ իր անբովանդակ կեան-  
քի անբովանդակ տարածութեան մէջ: Բայց ի՞նչ  
եմ ես: — Այնչ, դատարկ տարածութիւն, եթերա-  
կան հովիտ:

Քամալեանը այդ խօսքերը արտասանում էր  
բարձր ձայնով, չ'նայելով որ բացի երանեց, սե-  
նեակում ուրիշ մարդ չկար:

Նա վերջին խօսքերը ասելու ժամանակ  
բարձրացաւ աթոռից, որը դրած էր փոքրիկ, հնա-  
մաշ դրասեղանի շուրջը: Այդ սեղանի վրայ դաբ-  
տուած էին անկանոն կերպով զանազան բովան-  
դակութեան, մեծ և պտտիկ, կաղմած և անկաղմ  
գրքեր, րագիւղներ թերթեր, մի քանի գրչակո-  
թեր, մի հասելի և ուրիշ հարեա. որ և անպէտք  
երկէններ: Իսկ սեղանի առաջի կողմում, աթոռի  
դէմ ընկած էր մի բաց ձեռատետր:

Սա Քամալեանի չեղատակարանն էր:

Փոքրիկ ապակեայ հատարակ կանթեղը ողջ  
կերպով լուսա. որում էր նեղ և ցածր առատաղով  
սենեակը: Ձեռքերը դնելով անդրավարտիկի գրչա-  
նը, գրուիւր թերթելով դէպի կուրծքը, Քամալեանը  
սխեց քայլել սենեակի մի անկիւնից դէպի միւսը,  
յետ ու. առաջ: Նրա գէմքը գունաթափ էր, նրա

առաջվայ հարթ ու պայծառ ճակատը կորցրել էր  
իր պարզութիւնը և ծածկվել աչնպիսի կնճիռնե-  
րով, որոնք երևում են միայն տարեքը լրացած  
ձերունիների ճակատի վրայ: Բարակ, սևագոյն  
չոնքերի տակից նայող մուգ աչքերը, զրկվելով  
իրանց նախկին կրակոտ փայլեց՝ ընկել էին խոր  
խորշերի մէջ: Նրկու կամարածե խոշոր գծեր այդ  
աչքերը բաւանում էին սպորդնած երկոի միւս մասից:

Մի քանի րոպէ լուռ ու մուկ շրջելուց յե-  
տոյ, Քամալեանը կրկին մտնեցաւ սեղանին: Սա  
սկեց թերթել սեղանի վրայ դրած ձեռատետրը,  
երբեմն ձեռը տանելով ճակատին և յետ դարսե-  
լով երկար, փայլուն և կակուղ մազերը, որոնք  
շուտ շուտ ցրվում էին առաջ:

— Հեռացիւր աչքիցս, ատաց նա լանկարծ, չե-  
շատակարանը ձգելով սեղանի մի անկիւնը: Գու-  
աւելի կրկնապատկում ես իմ վշտերը, երբ ես կար-  
դում եմ քեզ: Գու յիշեցնում ես ինձ իմ պսխա-  
րակելի անցեալը, պատկերացնում ես իմ առաջ  
մի դատարկ, մի չիմար կեանք, և դու ինքդ քննա-  
դատում այդ կեանքը: Պիտի չորանար այն ձեռը,  
որը դրել է քեզ, որը անշունչ առարկացիդ բերանը  
լեզու է դրել, որ դու այսօր այդ լեզուով անկէք  
կարգաւ նոյն այդ ձեռը բանացնողի դէմ: Այ ի՞նչ  
եո դու զղվելի թղթի կտոր: Ի՞նչ ես դու և ի՞նչ  
են ահա՛ որոնք (նա ձեռը մեկնեց մեծակաղմ  
գրքերին), որոնք խաբում են մարդկութիւնը, բաղ-  
դաւորութիւն են խոստանում, իոկ յետոյ դառ-  
նու թիւն և կսկիծ են տալիս այդ բաղդաւորու-  
թեան փոխարէն: Բայց ո՞չ, դու թղթեր մեղաւոր

չէք. մեղաւոր են դարձեալ ինձ նման զզկէն կենդանիները, մեղաւոր է մարդ կոչված ստոր արարածը: Այն, մեղաւոր են նրանք, սրտնք սեւացնելով իրանց կեղատ մատերով ձեր լոյսն նման մաքուր երեսը, հաւաքում են ձեզ միասին՝ սիրում են աշխարհի չորս կողմերը—ինձ նման անօգուտ արարածներն թիւը աւելացնելու և մարդկութեան թշուառութիւնը քաղմապատկելու համար:

— Մտաբերում եմ, երբ իմ պատանեկութեան օրերում, վարակված իմ ընկերակիցներն սովորութիւնով, ես ահա այդ սեւացած թերթերից մի կապ գրած առջևս, ժամերով կարդում էի, մայրս ինձ միշտ կրկնում էր. «որդի, խնայքր քեզ, սիրող մի մաշկը այս դեր ու գրեանքով»: Այն ժամանակ մօրս այդ խօսքերը ինձ ծիծաղացնում էին, ես զուարճանում էի նրա միամտութիւնով, որ նա չը գիտէ այդ «գիր ու գրեանք» արժանաւորութիւնը, նրանց օգտակարութիւնը ինձ համար: Տասը տարե է անցել այդ ժամանակից, մայրս մեռած է, ես չեղելով նրա խօսքերը, այժմ ուրիշ կերպ եմ հասկանում նրանց: Մայրս միամիտ չէր, այլ ես էի չիմարը, որ նրա տգէտ խօսքերն մէջ թագնված խորը իմաստութիւնը չգիտէի: Այն, ես չ'գիտէի, ես խորասուզված ընթերցանութեան մէջ, ոչինչ ուրիշ բան չէի ուզում հասկանալ, ո՞նչ և ոչքի չէի հաւատում, բացի նրանից, ինչոր ասում էին ինձ այն «գիր ու գրեանք»: Այնօր ամեն ինչ անցած է, այլ ևս մայրս իմ կողքին նստած չէ, ես չեմ կարող նրա խրատը կատարելով մեծութեւը նրան, այժմ ուշ է, ամեն բան վերջացած է և ես...

Մի ուժգին ախտակ տալով ճակատին, Քամաւանը վեր թռաւ աթոռից և սեղանի վրեց վերցնելով մի ծխախոտ, վառեց և սկսեց ծխելով կրկին շրջել: Նրա դէմքը աւելի և աւելի դունաթափվում էր, մտաբերելով իր անցեալը, իր մանկութիւնը, այն օրերը, որոնց նա վերադարձնել կ'ցանկանար, բայց չէր կարող: Այդ օրերը նրա համար մի մի անդինք էին, որոնք ցցվելով նրա ուղեղն մէջ. բոլորքում էին նրան: Քամաւանը այս անգամ քայլում էր աւելի արագ, քան թէ առաջին անգամ: Նա ծխում էր անսովոր կերպով: Վառելով ծխախոտը, նա մի քանի անգամ այնպիսի ազահութեամբ քաշեց, որ ծխախոտն կէսը ծուխ դառնալով, անհետացաւ: Ինչպէս մի մարդ, որ երկար շնչարգելութիւնից չեա, լիքը բերանով կրկնում է թոքերը միանգամից օդի ահագին քանակութեան, այնպէս Քամաւանը ծխախոտի ծուխը իր շնչի բոլոր գօրութիւնով ծծում էր ներս: Կարծես թէ նա կամենում էր այդ դառն ծխով թունաւորել և սպանել այն վշտերը, որոնք դարտուել էին նրա ճնշված սրտի վրայ և արմատախել անել այն մտածմունքները, որոնցով ծանրաբեռնվել էր նրա ուղեղը: Բայց չէր լինում, ծխախոտը չէր օգնում, նրա վշտերը և մտածմունքները մնում էին միևնույնը. նրանք չէին թուլանում, չէին պակասում, միայն աւելի դադափում էին: Այն Քամաւանը չաղթված, ճնշված նրանց ներքոյ, չգիտէր ինչ անէր, ինչպէս կրէր նրանց ծանրութիւնը: Նա կրկին մօտեցաւ սեղանին և կրկին սկսեց իր անգութ դատաստանը իր անցեալի և ներկայի վրայ:

— Համեմատել եմ արդեօք ինձ ուրիշ, ինձ նման արարածներէ Հետ, գտել եմ արդեօք իմ մէջ այն չատկութիւնները, որոնցով ես նմանվիլ աշխեան մարդկանց Հետ, որոնք իմ կեանքը կապէին այդ մարդկանց Հետ: Կմն զերջապէս ինձ նման ուրիշ մարդիկ:—Աչն և ոչ: Աչն, որովհետեւ բոլոր իմ ճանաչած մարդիկ առանձնապէս վերցրած ունին ամէն մէկը իմ չատկութիւններէց որեւիցէ մէկը: Աչ, որովհետեւ չկայ մի մարդ, որը պարտաւանկէր իր մէջ այն բոլորը, ինչ որ ես եմ պարտաւանկում իմ մէջ: Ինձ նման չկայ մի ուրիշը և թիչ եմ ես:—Ամենայն ինչ, բաց սչինչ: Այդ Հաստատում է այս անողորմ, անգութ զիւան, իմ նախատելի անցեալի այս արհամարհելի նկարագրեր:

Քամալեանը այս ասելով, ձեռք դարձեալ մեկնեց չեշատակարանին, վերցրեց նրան և դնելով իր առաջ, կրկին սկսեց թերթել: Կանթիկի աղօթ լոյսը ընկաւ չեշատակարանի մանր տառերով գրուած սողերի վրայ: Նա շարունակում էր թերթել, երբեմն կանգ առնելով այս ու այն երեսի վրայ և կարդալով: Այդ ժամանակ նրա դէմքը աւելի այլաչափում էր, նրա ճակատի կնճիւղները մօտենում էին իրարու և սեղմվում, երեսի գծերը աւելի ու աւելի խոշորանում: Այդ նրա Հոգեկան խորին յուզումն, նրա ներքին պիկոմութիւնն էր: Յիրաւի, չեշատակարանի ամեն մի երեսը մտաբերով նրան իր կեանքի այս կամ այն ժամանակամիջոցը, գոգաում, եռապատկում էր նրա վրդովմունքը, ւրնում էր նրա դառնութեան բաժակը: Կարծես թէ այս լուռ ու մունջ սև սողերը մի մի

թունաւոր սողուններ լինէին, որոնք սողալով նրա մարմնի վրայ, խածանում էին նրան իրանց թունաւոր խաչթոցներով:

— Հինգ տարի է, որ մտել եմ Հասարակական կեանքի մէջ: Ի՞նչ եմ արել այդ Հինգ տարվաց ընթացքում Հասարակութեան Համար, թիչ օգուտ եմ տուել նրան:—Ոչինչ, բացի վնասից: Բաց ես կամենում էի օգտակար լինել, ես դեռ ուսումնարանի նստարանի վրայ իմ երեւակալութեան մէջ ստեղծում էի իմ ապագայ Հասարակական գործունէութեան Համար Հարիւրաւոր ծրագրերներ: Ուր են այդ ծրագրերները, նրանք չկան, շոգիացել են: Որովհետեւ... այն, որովհետեւ ես այդպէս չէի Հասկանում կեանքը, որովհետեւ ես թափանձելի օգի մէջ կամենում էի ամբողջ կառուցանել: Նս կարծում էի, թէ կարող եմ կեանքը ծառայեցնել իմ նպատակներին: Պատանեկան երեւակալութիւն, թիչեր չես ստեղծում դու. թիչ Հսկաչախան խոչնդատներ չեն փշովում, խորատկում քո առաջ: Ա՛խ, Տէր Աստուած, զլուխ պտտում է, աչքերս մթնում են, երբ ես մտածում եմ այդ մասին: Ի՞նչ անեմ, գիշերը անցնում է, լոյսը մօտենում է, ամենքը քնած են անդորը Հոգով, ամենքը ցերեկվայ իրանց աշխատութենից յոգնած, Հանդատանում են: Իսկ ես ինչ եմ արել, որ այդքան չոգնել, թուլացել եմ և թիչ պիտի անեմ վաղը: Գարձեալ պիտի նստեմ աշտեղ, այս տաղտկալի, ճանճբայուցիչ սենեակում կարդամ, կարդամ ու կարդամ տալիս ու վեր, մի Հինգ տող այս գրքից, Հինգը միւսից: Տէր Աստուած, Համբերութիւն էլ

չունեմ մի գիրք մինչև վերջը կարգալու...

Քամալեանը կրկին բարձրացաւ տեղից և սկսեց շուարված շքել յետ ու առաջ, ինքն իրան անդադար կրկնելով. «մթթէ, մթթէ չկայ մի եւք»: Յետոյ նա չուղված մտեցաւ վառարանին և մէջքը տալով պատին, խորատու գլխը մտածողութեան մէջ:

— Հարկաւոր է, հարկաւոր է անպատճառ դուրս գալ այդ ծանր մտքերէն լաբերին թոսից— դարձեալ սկսեց խօսել նա ինքն իրան: Այն, հեշտ է ասել հարկաւոր է աղատվել այդ ծանր մտքերից, բայց կատարել... հըմ... Յշուառ արարած, զգացիք քո ոչնչութիւնը, անիծիք ինքզիքդ, ուրիշ մեթոտութիւն չունիս: Ա՛յ որ դու ամեն ինչ փորձեցիր, բայց ի՛նչ չաջողութիւն դատար: Աչքիդ: Գրականութիւն, ուսուցչութիւն և ուրիշ սոցնանման շաւիղներ դու ստ ես կոխել, ի՛նչու ուրեմն չ'կարողացար այդ շաւիղներէց մէկի վրայ երկար շարունակել քո ընթացքը: Ա՛յ որ դու մինչև անգամ ուզում էիր արհեստաւոր, հատարակ բանուոր դառնալ, ի՛նչու ուրեմն այրտեղ ևս չ'կարողացար երկար մնալ: Ա՛յ էք քեզ արգելում, ի՛նչն էք խոչնդոտ դնում քո առաջ:

— Ա՛յ էք արգելում, ի՛նչն էք խոչնդոտ դնում իմ առաջ— կրկին քամալեանը ինքն իրան:

— Ինքզիք և ուրիշ ոչ ոք, քո խոչնդոտը պարունակվում է հէնց քո մէջ— շէնչաց նրան նոյն ներքին ձայնը: Արտիք և կ'գտնես, հարցրու քո հեւանդ ջղերէց, քո դեւրագոգիւս զգացմունքներէց, հարցրու քո թոյլ կամքից, անհիմն և անհաստատ բանականութիւնից և նրանք կ'ասեն

քեզ: Գու ամեն տեղ որոնում էիր այն, ինչ որ քեզ համար հնարաւոր չէր գտնելու և որոնածդ չը գտնելով, յուսահատվում էիր ու թողնում քո ընտրած ճանապարհը: Գու դեռ գործը չի սկսած, նրա վերջի, նրա հետեւանքի մասին էիր գողում և այդպէս դու անում էիր ամեն անգամ, ամեն ասպարիզում: Քս խելքի և զգացմունքների մէջ երբէք ներդաշնակութիւն չէ եղել— ահա քո ցաւը, քո խոչնդոտը, քո արգելքը: Գու չ'գիտէիր և այժմ խի չը գիտես այն նշանաւոր իմաստասէրի խօսքերը, թէ «կեանքը կամէ՞ղիս է մտածողի համար, խի զրամա՞ զգացողի համար»: Քեզ համար նա զրամա է եղել, ուրեմն թող կատարվի այդ զրաման մինչև վերջը:

— Ճշմարիտ է:  
— Խմբը ուրեմն քո դառնութիւնը մինչև բաժակի չատալը:

— Խմբ. այն, կ'իմեմ և մի կաթել անգամ չեմ թողնիլ նրա մէջ: Եւ Քամալեանը կրկին սկսեց շքել:

Խոքրիկ սեղանակը լցվել էր ծխախոտի ծխով: Վառարանի մէջ աջրվում էին փաշտի վերջին կրատրաանքը:

— Յոյս— ահա ինչ է հարկաւոր ինձ, ահա ինչի բացահայտութիւնն է թու՛նաւորում իմ կեանքը: Բայց սրտեղից դանել յոյս, սուր է նա, ի՛նչպէս կարող է նա նորից կենդանանալ իմ մէջ, քանի որ նա միանգամայն, այն միանգամայն, մեռած է..

Այդ խօսքերը Քամալեանը արտասանեց աւելի բարձր ձայնով, քան թէ առաջ: Յետոյ նա իր

Հայեացքը ուղղեց դեպի վառարանը և սկսեց ան-  
թարթ աչքերով նայել այրվող կրակին: Մե տե-  
սակ դառն ժպիտ էր խաղում նրա շրթունքները  
վրայ այդ ժամանակ:

— Ահն վառարանի մէջ այրվում է անտառից  
բերած փայտը: Սրանք ևս, այդ անշուշտ փայտի  
կտորտանքը ևս անօգուտ չեն: Քանի որ լուռ ան-  
տառի մէջ էին, այդտեղ նրանք կազմում էին  
ահագին կանաչադարձ ծառեր բազմաթիւ ճիւղե-  
րով և անհամար տերևներով: Այդ մի բաղաւո-  
րութիւն է: Նրա ճիւղերը շուաքի տակ հանգս-  
տանում էր չօգնած հովիւք իր փոքրիկ գառնուկ-  
ները հետ, նրա գագաթում ուրախ ուրախ թռչ-  
կոտում և զուարճանում էին անթիւ թռչնիկներ:  
Որքան բաղաւոր էր զգում իրան ծառը այդ  
ժամանակ, սրչափ նա հպարտանում էր, դալով իր  
օգտակարութիւնը թէ մարդու և թէ կենդանի-  
րին: Սակայն ապերախտ է մարդը: Ո՞նչ վճարեց  
նա բարեսիրտ և օգտակար ծառին նրա վեհանձ-  
նութեան փոխարէն: Նա, այդ երախտամոռ արա-  
րածը, կայնի սուր բերանը իր կեղտոտ և գլխիւ  
ձեռքերով ուղղեց ծառի ամուր և հաստ բունին:  
Տնքաց հարեւաւոր տարիներով մեծացած վեթ-  
խարին այդ հարուածի տակ: Տնքաց այդ վեհանձն  
մարդասէքը, իր սրտի խորքից անիծեց ապերախտ  
մարդուն, ճոճուաց և մի դառն հառաչանք ար-  
ձակելով, թաւալից գետինը: Ծառը մեռաւ,  
բայց իր մահից չետոյ ևս նա չը կորցրեց իր օգ-  
տակարութիւնը: Նրա մարմնի փշրանքները ահա  
այսօր ձմեռվայ սառնութենից պաշտպանում են

իմ զգլխի մարմինը: Գիւղական խճիթում նրանք  
տաքացնում են աղբատ շինականի և նրա փոք-  
րիկ դաւակները ձիւնից ու բուքից քարանած մար-  
մինները: Հարուստի պալատում նրանք դուրեկան  
ջերմութիւն են պարգևում փարթամներին: Իսկ  
ես անբաղդս, ես եմ միայն աւելորդ մարմին աշ-  
խարհի երեսին: Որքան դժբաղդութիւն, որպիսի  
ցաւ է զգալ ինքդ քեզ մինչև անգամ այդ ան-  
շուշտ առարկայի, փայտի առաջ քո ստորութիւնը,  
քո նշնչութիւնը: Այդ մի անտանելի վիշտ է:

Քամայեանը մօտեցաւ սեղանին և կրկին  
սկսեց թերթել յիշատակարանը:

— Այստեղ նկարագրված է իմ պախարակելի  
կեանքը 187... Թաւառնից մինչև այսօր, այսինքն  
սկսած այն օրից, երբ աւարտեցի գիմնադիւնում  
իմ ուսման ընթացքը: Ես արհամարհեցի բարձր  
կրթութիւնը և ինչու, դիտէք, — նրա համար, որ  
աւելի շուտ մտնեմ Հասարակական գործունէու-  
թեան ասպարէզը: Ես այն ժամանակ շտապում  
էի և կարծում էի թէ բնական է իմ ստացած մը-  
տաւոր պաշարը, այդ ասպարիզում ինձ համար  
չարմար տեղ բռնելու: Ես մտածում էի, որ կարող  
եմ ընթերցանու թեամբ լրացնել այն պակասը,  
որը պիտի լրացնէր համալսարանը և սկսեցի այդ  
օրվանից անդադար և անընդհատ կարդալ, կար-  
դալ ու կարդալ: Ահա այստեղ գրուած են իմ կար-  
դացած գրքերի անունները: Տէր Աստուած, ոչչափ  
անկանոն և անկապ ընթերցանութիւն, որը մինչև  
այսօր էլ շարունակվում է: Ո՛հ ցնորք, մի ժամա-  
նակ ես հաւատացած էի թէ մեծ բանաստեղծա-

կան ճիւղ ունին և այդ ցնորքով ոգևորված՝ ես ուսումնասիրում էի Մուսայի Հանճարեղ ներկայացուցիչներին՝ Շէքսպիրին, Շիլլերին, Բայրոնին, Կէօթէին և այլն։ Լաւ ուսումնասիրեցի։ Համբերութիւն չունեցայ սրանց գրվածքներից գէթ մէկը կանտուսը կերպով կարդալու։ Ինչ ծաղրելի մտք էր այն, որ այդ ժամանակ ինձ պաշարել էր։ Ես հաւատացած էի, թէ իմ մէջ կայ թագնված մի ընդարձակ տաղանդ և կարծում էի, որ ընթերցանութիւնը կ'ոպանի իմ ապղանտի ինքնուրոյնութիւնը։ Ահա իմ բանաստեղծական տաղանտի պտուղը, ահա այն չիմար, անհամ ոտանաւորները, որոնք նախ իսկ Քառումեանի նման տխմարին էլ ծիծաղ էին պատճառում։ Փորձեցի մի գրամատեկական պիես գրել, կարծում էի, որ պրօզան աւելի կ'չաջողվի։ Բայց դեռ առաջին երկու երեսը չաւարտած, թողի դա արդէն չափից դուրս անհամ էր։ Փորձեցի վէպիկներ գրել... թիւ, թիւ անտանելի էին այդ օրերը։ Ազդեց երկու շաբաթ մտածել միայն մի վէպիկի վերնագրի մասին և վերջ ի վերջոյ չօրինեւ «դանդաղութիւն» վերնագիր—այդ արդէն չափից դուրս է, խելագարութիւն է։ Ե՛հ, որ մէկը թուեմ, իմ չիմարութիւնները անթիւ, անհամար են, իմ ամեն մի քայլը եղել է սխալ։ Բայց ինչն է ծագել այդ սխալը.— թուութիւնից, հաստատ կամքի բացակայութիւնից, որոնք իմ անբնական կեանքի հետեանքներն են։ Նոյն անբնական կեանքը շարունակվում է և այսօր։ Ազդեղս ծանրաբեռնվել է հաղար տեսակ տարբեր դադախարներով, երարու հակառակ մտքերով և

այդ բոլորը անորոշ և անկանոն կերպով այս օրակէն դասաւորված գլխումս, դժգոխում են այնտեղ, ինչպէս անթիւ որդեր։ Ի՞նչ եմ արել... Թիւ եմ անում և թիւ պիտի անեմ... էլի ոչթիւ, ոչթիւ...

Նա հանեց ժիւեռի գրպանից ժամացույցը և նայեց։

— Արդէն գիշերվայ երկու ժամն է, բունս չե տանում, գլուխս ցաւում է... տկանջներումս կարծես թմրուկներ են ածում, գլխիս դանդը ուզում է տրաքվել։ Ինչպէս արք է ճակատս, աչքերս մթնում են... այդ թիւնցն է... անքնութիւնից կ'լինի, երէկ գիշեր էլ մինչև լոյս չեմ քնել։ Բայց թիւ անեմ, որ բունս չե տանում։ Զարմանալի բան... այսօր չեմ ճաշել երեկոյեան էլ թիւ չեմ խմել, բայց քաղց ամենեւին չեմ դգում, ակտրժակս մեռել է։

Նա կրկին բարձրացաւ տեղից և կրկին ըսկտեց քայլել։ Այս անգամ նրա երեսին բոլորովին գոյն չէր մնացել, աչքերը վառվել էին, ցամաքած շթուները ցնցողաբար դողողում էին։ Նա մտածում էր, բայց թիւ էր մտածում,—այդ ինքն էլ չը գիտէր։ Նրա գլխում տիրում էր կատարեալ խօս, սակայն այդ մտքերի խառնաշփոթութեան մէջ որոշվում էին հետեւեալ գծերը։

— Հսգուոյ անդորրութիւնը մարդկային կեանքի երջանկութիւնն է։ Նրանելի է այն մարդը, որը վայելում է այդ երջանկութիւնը։ Ես մինչև այսօր դուրի եմ եղել նրանից, նա մանաւանդ աշխատում անցեալը լիքն է վշտերով, ապաղան պատկերանում է իմ առաջ սև գոյներով, իսկ ներկան

անտանելի է: Անտանելի է: Հեշտ է ասել թէ կեանքը անտանելի է, բայց զգալ աչք անտանելիութիւնը, օօօ... Մուրացիանի, անդամալոյճի մի խոսքով դժուար կեանքի հարուածներն ներքոյ թշուառացած արարածներն ողբալի դրութիւնը կարող է հասկանալի լինել ամենի համար: Բայց թէ որքան ծանր է աչք դրութիւնը, որքան վշտալի է նա, աչք զգալի է միայն նոյն իրան թշուառին: Ամենադրեղ երեակալութիւն, ամենազգալուն սիրտ ունեցող մարդը չի կարող զգալ ուրիշ թշուառութիւնների տասներորդ մասը անգամ: Ո՛չ կարող է զգալ իմ դրութիւնը, բացի ինձանից: — Ո՛չ ոք: Ի՞նչպէս կարող եմ ես հասկացնել ուրիշներին այն, ինչոր ես եմ զգում: — Ոչ մի կերպ, դասնհնարին է:

Քամալեանը կրկին թաղվեց մտածողութեան մէջ: Անցան մի քանի րոպէներ և նա կրկին ըսկսեց խօսել բարձր ձայնով:

— Այն, անտանելի է կեանքը, աչք աշխարհում ինձ համար տեղ չկայ: Անօգուտ եմ եղել մինչև օրս... անօգուտ եմ աշխարհում անօգուտ կրկին և իմ ապագան, անօգուտ ինձ համար, վշտառակար ուրիշներին համար: Ես հասարակութեան աւելորդ անդամ եմ: Կեանքի բեմի վրայ ես դեր չունիմ: Իսկ մի մարդ, որ դեր չունի, նա պիտի հեռանայ բեմից, որպէս զի չը խանդարի խաղացողներին: Աչք պարզ է և ոչ ոք չի կարող հակառակել: Ի՞նչ միտք ունի ուրեմն իմ գոյութիւնը: — Ոչինչ: Չկայ մի բան, որի հետ կապված լինէր իմ կեանքը: Ես աւելորդ մարմին եմ, որ

սխալմամբ ընկել եմ այս աշխարհ: Ես խփեմ մարմին և չեմ... ուր է, ես ոչինչ եմ... ոչինչ... ոչինչ... Թափանձելի օդ... աչք և չեմ... օդը օգտաւէտ է... Բաս ի՞նչ եմ... ոչինչ: Սխալվում եմ ֆիզիկոսները, ասելով թէ աշխարհում «ոչինչ» ասած բան չկայ: Ի՞նչպէս թէ չկայ, բաս ես ինչ եմ: Սխալվում եմ, երևի նրանք ինձ չեն ճանաչում, արա թող ինձ իրանց դիտնական հետադատութեան ենթարկեն, այն ժամանակ կ'տեսնեն, թէ ինչպէս կ'ընչանայ իրանց թիորեան:

Կրում սատիկ ձին էր դալիս: Քամալեանը բարձրացաւ տեղից և պատուհանի վարագոյրը մի կողմ ծալելով, սկսեց նայել դէպի փողոց: Եսկար ժամանակ նա անշարժ դրութեան մէջ նայում էր քրտնած ապակիների միջոցով ձիւնալի մթնոլորդին: Յանկարծ նա, կարծես թէ մի բան մտաբերելով, աջ ձեռք խիտեց ճակատին և պատուհանի վարագոյրը շտապով ծածկեց:

— Աճում է, վճում է — արտասանեց նա բարձր ձայնով և կրկին դիմեց սեղանին:

Նա փշոված սրտով, թուլացած մարմնով ընկաւ աթոռի վրայ և երկու ձեռքերով պինդ սեղանի վրայ գլուխը, սկսեց անթարժ աչքերով նայել չեղատակարանին: Նրա հայեացքը անմիտ էր նրա շրթունքները ժպտում էին վայրենի կերպով, աչքերը փայլում էին մի տեսակ կատաղի փայլով: Մի բանի րոպէ նա այս դրութեան մէջ մնաց, չետոյ կրկին սկսեց քաշել: Նրա ծնկերը թուլացել էին, նա հարբածի նման չէր կարողանում ուղիղ ման դալ: Աչքպէս շարունակվեց մօտ կէս ժամ, չետոյ նա շուռ ու մուռ դալով դարձեալ մօ-

տեցաւ սեղանին և չանկարծակի, խելագարի պէս, չարձակիկեց չիշատակարանի վրայ, վերցրեց չիշատակարանը և սիրեց ձեռքերում Ճմրուտել և ատամներով կրճծոտել...

Վառարանը հանգչելու վրայ էր, կրակի երեսը արդէն ծածկված էր մոխրով: Քամալեանը չիշատակարանը կոծոտելով և վաչրենաբար զգաւելով, մօտեցաւ վառարանին, վերցրեց ունեւելքը և կըրակը խառնեց: Անցան մի քանի վաչրիեաններ, չանկարճ կրակը վառվեց և վառարանի մէջ քարձրացաւ մի պաշտառ բոց:

— Հան Հան Հան, քսան ու Հինգ տարվայ կեանք... ահան ինչ է քո վարձը, ահա ինչի ես արժանի դու — գոռաց նա վաչրենի գոարձու թեանք, նայելով չիշատակարանի բոցավառված թերթերին:

Մի րոպէում կրակը լափեց երեսուն թերթերեց բաղկացած ձեռատետրը: Բոցը դադարեց և կրկին մոխիրը ծածկեց կրակի երեսը:

— Վերջացաւ, վերջացաւ ամենայն ինչ, քսան ու Հինգ տարվայ կեանքս մոխիր դարձաւ, մոխիր դարձաւ իմ բոլոր անցեալը... Ազատվեցի, ու՛՛՛՛ աղատվեցի... դնա կրելի հին կեանք, էլ քեզ հետ ես գործ չունիմ:

— Ամեն ինչ կորաւ, քսան ու Հինգ տարվայ կեանքս մոխիր դարձաւ, մոխիր դարձաւ իմ անցեալը: Իսկ սպազման հ'ըմ, երեխայ եմ, նորից պիտի մեծանամ, հան Հան Հան, քսան ու Հինգ տարեկան երեխայ, թնչ ստել կուղի. շատ փոքր եմ դեռ: Սպասիր կրակ, ես քեզ համար դեռ

կերակուր շատ ունիմ պատրաստած, տեսնում եմ խիստ ես քաղցում... սպասիր: Դա թնչ է, հան...

Նա սեղանի վրեց վերցրեց մի մեծ և հաստակաղմ դերք:

— Առաջ առաջ այս ցնորամիտին, չ'տոյ, ասաց նա ձգելով դերքը վառարանը: Բարձրացաւ մի թանձր ծուխ, որից չետոյ դերքը բոցավառվեց և նրա կաղմի վրայ փաչեց ոսկեղօծ տառերով տպված «Философия безсознательнаго» վերնագրեր: Բոցը չ'դադարած, վառարանի մէջ ընկաւ մի ուրեշ դերք, սրան հետեւեց երրորդը, չորրորդը, թուով մինչև տասը:

— Յիմարներ, ամբողջ ձեր դադարի կեանքը նուիրել էք այդ թերթերը սեւանելուն, տեսէք կրակը ինչ շուտ է լափում ձեր խելքը... Ինչպէս է, լմա է, կովեցէք իրարու հետ, բայց տեսէք ես ձեզ ինչպէս հաշտեցրի...

Բոցը կրկին դադարեց և մոխիրը ծածկեց կրակի երեսը: Քամալեանը հեռացաւ վառարանից, կանգնեց սեղանի առաջ, մտիկ տուաւ անբաված գրքերի դարգակված տեղին, չետոյ հայեացքը դարձրաւ վառարանին և ձեռքերը բարձրացնելով, մի ուժգին հարուած տուաւ գլխին:

— Ինչ արի ես, թնչ արի, թնչ արի դա, գոռաց նա, մի աշխպեսի զօրեղ ձայնով, որ հարեան սենեակում քնից զարթեց նրա տանուտէր կնիւր, պատա Բեթեանը:

— Այժմ ես նոր մարդ եմ, հա հա հա, կրկնեց Քամալեանը, կատաղաբար ծիծաղելով: Ե՛մքեմ մէջ երեւեցաւ Բեթեանի սարսափած դէմքը:

Քամալեանը, ինքն էլ չը դիտէր թէ ինչու,  
չարձակիկեց պառաւի վրայ և բռնելով նրա թևից,  
ներս քաշեց:

— Ե՛կ այտուկ ցանցառ պառաւ:

Պառաւը տարտախած, դողդողալով, մէջքեց  
ծռված, ահամայ Հետեւեց նրան:

— Քանի՞ տարեկան ես:

— Խելքդ դուռտ տիղը չի, երազ ես տե՛Հի:

— Ասի՛ր տեսնե՛մ, եթ՛ա՛նհասուն տարեկան կե՛ն-  
դանի, ի՛նչպէ՛ս ես ապրել այդքան ժամանակ Հը՛մ,  
չէ՛ս զգվել կեանքից, Հը՛մ, ասի՛ր— կրկնեց Քամա-  
լեանը, բոլոր ոչժով թախահարելով պառաւին:

— Իձանիբըդ...

— Սուս, սուս, դուրս եկ դնար, քունս տա-  
նումէ, դուրս:

Նա պառաւին Հրեց սենեակից դուրս և  
դուռը փակելով, պառկեց երեսի վրայ անիողնում:

— Ի՛նչ ե՛մ անում, ի՛նչ ե՛մ անում, կրկնումէր  
նա անդադար:

Մի ամբողջ ժամ Քամալեանը մնաց այդպէս  
պառկած: Վերջապէս քունը չաղթեց նրան:

Առաւօտեան պառաւ Քեթևանը վախվա-  
խելով դուռը բացեց և մի ոտը սենեակի ներսում,  
միւսը դրսում, հարցրեց.

— Վճենցիս:

— Գլուխս ցաւումէ, տաքացրել եմ դէդի,  
մի հաքիմ կանչել տուր— պատասխանեց Քամա-  
լեանը, վերմակով ծածկելով եր գունաթափ դէմքը  
և երեսը պարանելով պատին:



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ  
7/21-1922  
Ս. ՄԱՍԻՍԻԱՆԻ ԱՎԼԱՆ

412

403

2013

« Ազգային գրադարան »



NL0014703

